

Կ-930-12.04.2021-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

**«ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի սեպտեմբերի 25-ի ՀՕ-232 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 5-րդ մասում «պետական կառավարման» բառերից հետո լրացնել «համակարգի» բառը:

Հոդված 2. Օրենքի 12-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը ուժը կորցրած ճանաչել.

2) 2-րդ մասում «Հիմնադիր ժողովն» բառերը փոխարինել «Ընկերության բաժնետերերի հիմնադիր ժողովը (այսուհետ՝ հիմնադիր ժողով)» բառերով.

3) 5-րդ մասի ամբողջ տեքստում «պետական կառավարման» բառերից հետո լրացնել «համակարգի» բառը:

Հոդված 3. Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1) «դ» և «ե» կետերում «, ինչպես նաև արտոնյալ բաժնետոմսերի դասերը» բառերը փոխարինել «և դասերը» բառերով,

2) լրացնել նոր «թ.1» կետ.

«թ.1) Ընկերության բաժնետոմսերով դրանց սեփականատերերին տրամադրվող ձայների առավելագույն քանակը.»:

Հոդված 5. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի ամբողջ տեքստում «սեփականատերերի» բառերից հետո հանել «կամ» բառերը, իսկ «խորհրդի միաձայն որոշմամբ» բառերից հետո լրացնել «, եթե այդ իրավասությունը սույն օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան վերապահված է խորհրդին» բառերը:

Հոդված 6. Օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասում, 49-րդ հոդվածի 1-ին մասում, 56-րդ հոդվածում, 65-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետում «տեսակի (դասի)» բառերը փոխարինել «տեսակի կամ դասի» բառերով:

Հոդված 7. Օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի երրորդ պարբերությունում «բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր հանդիսացող» բառերը փոխարինել «բաժնետոմսերով տրամադրվող ձայների քանակի առնվազն 10 տոկոսին տիրապետող» բառերով:

Հոդված 8. Օրենքի 31-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի՝

ա. առաջին պարբերության առաջին նախադասությունից հանել «փաստաթղթային (տպագրական եղանակով պատրաստված) կամ ոչ փաստաթղթային ձևի» բառերը.

բ. առաջին պարբերության երկրորդ նախադասությունը ուժը կորցրած ճանաչել.

2) 2-րդ մասի՝

ա. առաջին պարբերությունում «տեսակին» բառը փոխարինել «դասին, իսկ դրանց բացակայության դեպքում միևնույն տեսակին» բառերով.

բ. 2-րդ և 3-րդ պարբերությունները ուժը կորցրած ճանաչել.

3) 3-րդ մասում «տեսակի» բառը փոխարինել «դասի, իսկ դրանց բացակայության դեպքում միևնույն տեսակի» բառերով:

Հոդված 9. Օրենքի 32-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 32. Ընկերության բաժնետոմսերը

1. Ընկերությունը կարող է թողարկել ոչ փաստաթղթային ձևի մեկ կամ մի քանի դասի հասարակ (սովորական) և արտոնյալ բաժնետոմսեր: Ընկերության թողարկած արտոնյալ բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեքը չպետք է գերազանցի նրա կանոնադրական կապիտալի քսանհինգ տոկոսը:

2. Սույն օրենքի իմաստով բաժնետոմսերի միևնույն դասին, իսկ դրանց բացակայության դեպքում միևնույն տեսակին են դասվում միանման տարբերակիչ բնորոշ առանձնահատկություններ՝ անվանական արժեք, հավաստող իրավունքներ, արտոնություններ և սահմանափակումներ ունեցող բաժնետոմսերը:

3. Ընկերության կողմից թողարկված բաժնետոմսերի տեղաբաշխումն ավարտվելուց հետո Ընկերությունը բաժնետերերի բաժնետոմսերը պետք է գրանցի իր բաժնետերերի ռեեստրի (գրանցամատյանի) բաժնետերերի անձնական հաշիվներում՝ սույն օրենքի VI գլխի դրույթներին համապատասխան:

4. Բաժնետոմսն անբաժանելի է (ամբողջական բաժնետոմս), բացառությամբ կոտորակային բաժնետոմսեր առաջանալու օրենքով նախատեսված դեպքերի: Եթե երկու կամ ավելի անձինք սեփականատեր են մեկ բաժնետոմսի, ապա նրանք համարվում են մեկ բաժնետեր:

5. Կոտորակային բաժնետոմսով դրա սեփականատիրոջը տրամադրվում են համապատասխան դասի, իսկ դրանց բացակայության դեպքում համապատասխան տեսակի բաժնետոմսերով տրամադրվող բոլոր իրավունքները՝ տվյալ բաժնետոմսի՝ իրեն պատկանող կոտորակին (մասին) համամասնորեն: Կոտորակային բաժնետոմսեր առաջանալու դեպքում, եթե դրանց հանրագումարը կոտորակային թիվ է, ապա Ընկերության կանոնադրությունում տեղաբաշխված բաժնետոմսերի քանակը սահմանվում է կոտորակային թվով:

6. Միևնույն անձին միևնույն դասի, իսկ դրանց բացակայության դեպքում միևնույն տեսակի երկու կամ ավելի կոտորակային բաժնետոմսեր պատկանելու դեպքում, այդ կոտորակային բաժնետոմսերը ձևավորում են ամբողջական կամ կոտորակային բաժնետոմս՝ դրանց հանրագումարին համապատասխան:

7. Կանոնադրությամբ կարող են սահմանվել մեկ բաժնետիրոջը պատկանող որոշակի տեսակի կամ դասի բաժնետոմսերի թվի, գումարային անվանական արժեքի, ինչպես նաև մեկ բաժնետիրոջը տրամադրվող ձայների առավելագույն թվի սահմանափակումներ՝ տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, եթե Ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ: Ընկերության որոշակի դասի հասարակ (սովորական) յուրաքանչյուր բաժնետոմսով

դրանց սեփականատիրոջը տրամադրվող ձայների քանակը չի կարող գերազանցել տասը ձայնը: Սույն սահմանափակումները պետք է վերաբերեն միևնույն տեսակի կամ դասի բաժնետոմսերի բոլոր սեփականատերերին հավասարապես և չեն կարող կիրառվել առանձին բաժնետիրոջ կամ բաժնետերերի խմբի նկատմամբ:»

Հոդված 10. Օրենքի 33-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 3-րդ պարբերության ամբողջ տեքստում «տեսակի» բառերից հետո լրացնել «(առկայության դեպքում՝ նաև դասի)» բառերը.

2) 2-րդ մասի երկրորդ պարբերության ամբողջ տեքստում «տեսակների» բառերից հետո լրացնել «իսկ առկայության դեպքում՝ նաև դասի» բառերը:

Հոդված 11. Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետում «տեսակի» բառից հետո լրացնել «կամ դասի» բառերը:

Հոդված 12. Օրենքի 35-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասի 2-րդ պարբերության «ա» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) լրացուցիչ տեղաբաշխվող յուրաքանչյուր դասի (առկայության դեպքում) հասարակ (սովորական) և արտոնյալ բաժնետոմսերի քանակը՝ այդ բաժնետոմսերի հայտարարված քանակի սահմաններում.».

2) 6-րդ մասում «կամ խորհուրդը» բառերը փոխարինել «, խորհուրդը կամ գործադիր մարմինը» բառերով, իսկ «նրան» բառը փոխարինել «նրանց» բառով:

3) 7-րդ մասի երկրորդ նախադասությունն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 13. Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի՝

1) առաջին պարբերության՝

ա. առաջին նախադասությունում «օրենքով» բառից հետո լրացնել «կամ այլ իրավական ակտերով» բառերը.

բ. երկրորդ նախադասությունից հանել «սույն» բառը, «օրենքով» բառից հետո լրացնել «կամ այլ իրավական ակտերով» բառերը.

2) երկրորդ պարբերությունը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 14. Օրենքի 37-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի առաջին պարբերությունում «Ընկերության» բառից հետո լրացնել «որոշակի դասի» բառերը.

2) 2-րդ մասի առաջին պարբերությունում «Հասարակ (սովորական)» բառերից առաջ լրացնել «Համապատասխան դասի» բառերը, «նրան պատկանող» բառերից հետո լրացնել «տվյալ դասի» բառերը, իսկ «բաժնետոմսերի» բառից հետո հանել «անվանական արժեքից և» բառերը.

3) 3-րդ մասի առաջին պարբերությունում «սահմանում է խորհուրդը» բառերից հետո լրացնել «, եթե այդ իրավասությունը կանոնադրությամբ վերապահված չէ Ընկերության ժողովին կամ գործադիր մարմնին» բառերը:

Հոդված 15. Օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունում «սեփականատերերի հետ» բառերից հետո լրացնել «, իսկ հասարակ (սովորական) բաժնետոմսերի դասերի առկայության դեպքում՝ ամենաբարձր չափով շահութաբաժիններ ստանալու իրավունք վերապահող բաժնետոմսերի դասի սեփականատերերի հետ» բառերը:

Հոդված 16. Օրենքի 39-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 17. Օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի վեցերորդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 18. Օրենքի 41-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 41. Ընկերության աշխատակիցներին տրամադրվող բաժնետոմսերը

1. Ընկերությունը կարող է կանոնադրությամբ կամ ընդհանուր ժողովի կողմից հաստատված աշխատակիցների բաժնետիրացման ծրագրով սահմանված կարգով իր աշխատակիցների միջև տեղաբաշխել (տրամադրել) Ընկերության բաժնետոմսեր կամ այնպիսի ածանցյալ ֆինանսական գործիքներ (գործարքներ), որոնցով պարտավորությունների վերջնահաշվարկը կարող է իրականացվել Ընկերության բաժնետոմսերով (այսուհետ՝ ածանցյալ ֆինանսական գործիքներ): Սույն հոդվածի իմաստով աշխատակից է համարվում նաև Ընկերության ղեկավար պաշտոնատար անձը:

2. Աշխատակիցների բաժնետիրացման ծրագիրը Ընկերության ներքին իրավական ակտ է, որով առնվազն նախատեսվում են Ընկերության աշխատակցի կողմից Ընկերության բաժնետոմսերի կամ ածանցյալ ֆինանսական գործիքների ձեռքբերման, օգտագործման, օտարման և հետգնման դեպքերը, պայմաններն ու կարգը:

3. Սույն հոդվածի 1-ին մասի համաձայն աշխատակիցների միջև տեղաբաշխված և ածանցյալ ֆինանսական գործիքների վերջնահաշվարկի արդյունքում տրամադրվող բաժնետոմսերի գումարային անվանական արժեքը չպետք է գերազանցի կանոնադրական կապիտալի, իսկ այդ բաժնետոմսերով տրամադրվող ձայների քանակը՝ Ընկերության քվեարկող բաժնետոմսերով տրամադրվող ձայների 25 տոկոսը:

4. Սույն հոդվածի 1-ին մասի համաձայն աշխատակիցների միջև տեղաբաշխված (տրամադրված) բաժնետոմսերի կամ ածանցյալ ֆինանսական գործիքների տնօրինման հնարավորությունը կարող է սահմանափակվել կանոնադրությամբ կամ աշխատակիցների բաժնետիրացման ծրագրով սահմանված ժամկետով, բայց ոչ ավելի քան երեք տարով՝ սկսած տվյալ բաժնետիրոջը դրանց տեղաբաշխման (տրամադրման) օրվանից:

5. Աշխատակիցների բաժնետոմսերը կամ ածանցյալ ֆինանսական գործիքները տեղաբաշխվում (տրամադրվում) են աշխատակիցների միջև վերջիններիս գրավոր համաձայնությամբ: Աշխատակցի բաժնետոմսերը կամ ածանցյալ ֆինանսական գործիքները կարող են տրամադրվել առանց վճարի, իսկ բաժնետոմսերի դիմաց վճարվող գումարը կարող է ընկերության համապատասխան տեսակի կամ դասի բաժնետոմսերի անվանական արժեքից ցածր լինել:

6. Աշխատակցի հետ աշխատանքային կամ Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց հետ ծառայությունների մատուցման հարաբերությունների դադարեցման դեպքում, բացառությամբ կենսաթոշակի անցնելու դեպքերից, Ընկերությունը իրավունք ունի հետ գնել աշխատակցի բաժնետոմսերը, եթե գործում են սույն հոդվածի 4-րդ մասում նշված սահմանափակումները: Սույն մասով

նախատեսված դեպքերում Ընկերությունը իրավունք ունի հետ գնել աշխատակցի բաժնետոմսերը դրանց շուկայական, սակայն անվանական արժեքից ոչ պակաս գնով:

7. Աշխատակցի բաժնետոմսերը օրենքով նախատեսված դեպքերում հարկադիր օտարելիս բաց Ընկերությունը, եթե գործում են սույն հոդվածի 4-րդ մասում նշված սահմանափակումները, և փակ ընկերությունը՝ անկախ նշված սահմանափակումներից, նախապատվության իրավունք ունեն ձեռք բերել աշխատակցի՝ օտարման ենթակա բաժնետոմսերը տվյալ բաժնետոմսերի շուկայական, սակայն անվանական արժեքից ոչ պակաս գնով:

8. Աշխատակցի բաժնետոմսերի սեփականատիրոջ ժառանգները, եթե գործում են սույն հոդվածի 4-րդ մասում նշված սահմանափակումները, իրավունք ունեն Ընկերությունից պահանջել տվյալ բաժնետոմսերի հետգնումը դրանց շուկայական գնով, սակայն ոչ պակաս անվանական արժեքից, կամ պահանջել դրանք փոխարկել Ընկերության այլ բաժնետոմսերի, եթե այդպիսիք հայտարարված են Ընկերության կողմից, և եթե այդպիսի փոխարկման հնարավորությունը համապատասխան տեսակի (իսկ առկայության դեպքում՝ նաև դասի) աշխատակիցների բաժնետոմսերի տեղաբաշխման ժամանակ նախատեսված է եղել կանոնադրությամբ: Աշխատակիցների բաժնետիրացման ծրագրով կամ կանոնադրությամբ կարող են նախատեսվել աշխատակիցների բաժնետոմսերը հետ գնելու կամ ածանցյալ ֆինանսական գործիքներով նախատեսված պարտավորությունները դադարեցնելու Ընկերության պարտավորության այլ դեպքեր, ինչպես նաև դրանց իրականացման կարգն ու պայմանները:

9. Աշխատակցի բաժնետոմսի սեփականատերերը, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նշված սահմանափակման, օգտվում են նույն իրավունքներից, ինչպիսիք սահմանված են սույն օրենքով և կանոնադրությամբ՝ դրանց համապատասխանող տեսակի կամ դասի բաժնետոմսերի սեփականատերերի համար:

10. Աշխատակցի բաժնետոմսերի անվանական արժեքը չպետք է տարբերվի Ընկերության համապատասխան տեսակի կամ դասի բաժնետոմսերի անվանական արժեքից:

11. Աշխատակիցների բաժնետիրացման ծրագիրը հաստատելու մասին, ինչպես նաև աշխատակիցների բաժնետիրացման հետ կապված (այդ թվում՝ Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների մասին) կամ աշխատակիցների բաժնետիրացման ծրագրից բխող որոշումները ընդունում է ընդհանուր ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից, եթե Ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ: Աշխատակիցների բաժնետիրացման հետ կապված կամ աշխատակիցների բաժնետիրացման ծրագրից բխող որոշումների ընդունումը Ընկերության խորհրդին վերապահված լինելու դեպքում Ընկերության խորհուրդը դրանք ընդունում է խորհրդի անդամների ձայների 3/4-ով, եթե Ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ:

12. Աշխատակիցների բաժնետիրացման ծրագրի շրջանակներում Ընկերության աշխատակիցների բաժնետիրացման դեպքում Ընկերության այլ բաժնետերերի կողմից բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունքը չի կիրառվում:»:

Հոդված 19. Օրենքի 42-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընկերության հիմնադրման ժամանակ տեղաբաշխված բաժնետոմսերը պետք է լրիվ վճարվեն ընկերության հիմնադրման մասին որոշմամբ կամ պայմանագրով կամ կանոնադրությամբ սահմանված

ժամկետում, բայց ոչ ուշ, քան Ընկերության պետական գրանցման պահից՝ երեք ամսվա ընթացքում: Եթե սահմանված ժամկետում կանոնադրական կապիտալի վճարումը լրիվ չի կատարվել, ապա չվճարված գումարին համապատասխանող բաժնետոմսերը փոխանցվում են Ընկերության տրամադրության տակ և դրանց նկատմամբ կիրառվում են սույն հոդվածի 6-րդ մասի 4-րդ պարբերությամբ նախատեսված սահմանափակումները: Ընկերությունը պարտավոր է բաժնետոմսերը փոխանցվելուց հետո՝ երկամսյա ժամկետում Ընկերության հիմնադրման ժամանակ տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց վճարած բաժնետերերի համաձայնությամբ տեղաբաշխել այդ բաժնետոմսերը նրանց միջև, իսկ դրա անհնարինության դեպքում՝ որոշում կայացնել այդ բաժնետոմսերը մարելու և կանոնադրական կապիտալը նվազեցնելու մասին: Եթե Ընկերության պետական գրանցման համար սահմանված եռամսյա ժամկետում կանոնադրական կապիտալը առհասարակ չի վճարվում, ապա Ընկերությունը պարտավոր է մեկամսյա ժամկետում ընդունել որոշում լուծարման մասին:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մաս.

«2.1. Եթե սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում կանոնադրական կապիտալի նվազեցման կամ Ընկերության լուծարման մասին որոշումը չի ընդունվել, ապա Ընկերության բաժնետերերը, հիմնադիրները, պարտատերերը կամ լիազորված մարմիններն իրավունք ունեն պահանջել Ընկերության լուծարում՝ դատական կարգով:».

3) 4-րդ մասի առաջին պարբերությունում «անկախ գնահատողի կողմից» բառերից հետո լրացնել «, բացառությամբ լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերման ժամանակ դրանց դիմաց վճարվող գույքի դրամական գնահատականը ժողովի միաձայն որոշմամբ սահմանված լինելու դեպքերի» բառերը:

4) 5-րդ մասում «թույլատրվում» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն Օրենքի 41-րդ հոդվածով նախատեսված՝ կանոնադրությամբ կամ աշխատակիցների բաժնետիրացման ծրագրով աշխատակիցներին տրամադրվող բաժնետոմսերի» բառերը:

Հոդված 20. Օրենքի 43-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասի 2-րդ պարբերության երկրորդ նախադասությունը ուժը կորցրած ճանաչել.

2) 3-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ պարբերություն.

«Եթե երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվում է, որ Ընկերության զուտ ակտիվների արժեքը կազմում է բացասական մեծություն, կամ օրենքով կամ այլ իրավական ակտերով կանոնադրական կապիտալի նվազագույն չափ սահմանված լինելու դեպքում՝ Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է սահմանված չափից, ապա Ընկերության գործադիր մարմինը պարտավոր է խորհրդին ներկայացնել արտահերթ ժողովի գումարման պահանջ: Նման դեպքերում արտահերթ ժողովում պետք է որոշում կայացվի Ընկերության լուծարման կամ դրա գործունեությունը շարունակելու մասին: Ընդ որում՝ գործունեությունը շարունակելու մասին որոշում կարող է ընդունվել, եթե խորհրդի, իսկ Ընկերությունում խորհուրդ ստեղծված չլինելու դեպքում՝ գործադիր մարմնի կողմից ներկայացվել է գրավոր եզրակացություն Ընկերության գործունեությունը զուտ ակտիվների առկա չափի պարագայում շարունակելու նպատակահարմարության և հիմնավորվածության վերաբերյալ՝ հիմք ընդունելով Ընկերության գործունեության ուղղությունները, ոլորտը, առանձնահատկությունները, գործունեության ծրագրերը և այլ հանգամանքներ: Գործունեությունը շարունակելու մասին որոշում ընդունելու դեպքում Ընկերությունը պարտավոր է այդ մասին տասը աշխատանքային օրվա ընթացքում հայտարարություն տեղադրել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և

գործունեությունը շարունակելու մասին որոշումը ներկայացնել Ընկերության պետական գրանցումն իրականացրած մարմնին:».

3) 4-րդ մասում «լուծարման» բառից հետո լրացնել «կամ գործունեությունը շարունակելու» բառերը:

Հոդված 21. Օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասում լրացնել նոր «գ» կետ.

«գ) սույն օրենքի 41-րդ հոդվածով սահմանված կարգով տեղաբաշխում է աշխատակիցներին տրամադրվող բաժնետոմսեր:»:

Հոդված 22. Օրենքի 51-րդ հոդվածի 5-րդ մասում «սեփական բաժնետոմսերի» բառերից հետո լրացնել «կամ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով իր հետ փոխկապակցված անձի բաժնետոմսերի» բառերը:

Հոդված 23. Օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Ընկերության բաժնետերերի ռեստրում բաժնետիրոջ կամ անվանատիրոջ վերաբերյալ գրառումը կատարվում է բաժնետիրոջ կամ անվանատիրոջ պահանջով: Ընկերության բաժնետերերի ռեստրում այլ գրառումները, ինչպես նաև սույն օրենքի 41-րդ հոդվածով սահմանված կարգով աշխատակիցներին տրամադրվող բաժնետոմսերի վերաբերյալ գրառումները կատարվում են նաև Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի կամ այլ լիազորված անձի պահանջով: Եթե Ընկերության բաժնետերերի ռեստրում գրառման համար ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված պահանջներին և առկա չեն գրառումը չկատարելու՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հիմքեր, ապա գրառումը կատարվում է փաստաթղթերը ներկայացնելու պահից՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:»:

Հոդված 24. Օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) «բ» կետում «տեսակի» բառից հետո լրացնել «(առկայության դեպքում՝ նաև դասի)» բառերը.

2) «գ» կետում «տեսակի» բառից հետո լրացնել «(առկայության դեպքում՝ նաև դասի)» բառերը.

3) լրացնել նոր «դ.1» կետ.

«դ.1) համապատասխան դասի (առկայության դեպքում) բաժնետոմսերով դրանց սեփականատիրոջը տրամադրվող ձայների քանակը.».».

4) «թ» կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«թ) օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ:»:

Հոդված 25. Օրենքի 54-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի երկրորդ պարբերությունից հանել «սույն» բառը, իսկ «օրենքով» բառից հետո լրացնել «կամ այլ իրավական ակտերով» բառերը.

2) 2-րդ մասում «90 տոկոսից» բառերից հետո լրացնել «, բացառությամբ այն դեպքերի, երբ բաժնետոմսերի ձեռքբերումը իրականացվում է ժողովի որոշմամբ» բառերը:

Հոդված 26. Օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունում «արժեքով» բառից հետո լրացնել «, եթե դրանց սեփականատերը Ընկերության բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի) մասին որոշման ընդունումից հետո երկամսյա ժամկետում Ընկերությանը գրավոր

ծանուցում չի ներկայացնում իր կոտորակային բաժնետոմսերը պահպանելու ցանկության մասին» բառերը:

Հոդված 27. Օրենքում լրացնել հետևյալ բովանդակությամբ 56.1-ին հոդված.

«Հոդված 56.1. Ընկերության բաժնետոմսերի պարտադիր վաճառքի պահանջը

1. Ընկերության քվեարկող բաժնետոմսերի և միաժամանակ դրանցով տրամադրվող ձայների առնվազն 95 տոկոսին ուղղակիորեն միանձնյա տիրապետող բաժնետիրոջ (այսուհետ սույն հոդվածում պահանջ ներկայացնող բաժնետեր) պահանջով (Ընկերության բաժնետոմսերի պարտադիր վաճառքի պահանջ) հրավիրվում է արտահերթ ժողով, որը որոշում է ընդունում Ընկերության մյուս բաժնետերերին պատկանող քվեարկող բաժնետոմսերը (բացառությամբ Հայաստանի Հանրապետությանը կամ համայնքներին պատկանող բաժնետոմսերի) հետզնելու և պահանջ ներկայացնող բաժնետիրոջը տրամադրելու վերաբերյալ:

2. Ընկերության բաժնետոմսերի պարտադիր վաճառքի պահանջը պետք է առնվազն պարունակի հետևյալ տեղեկությունները.

1) հիմնավորում պահանջ ներկայացնող բաժնետիրոջ՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պայմաններին համապատասխանության վերաբերյալ.

2) պահանջ ներկայացնող բաժնետիրոջ անունը (անվանումը), հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն, ծանուցման հասցեն, եթե այն տարբերվում է հաշվառման (գտնվելու) վայրի հասցեից, պահանջ ներկայացնող ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի տվյալները.

3) բաժնետոմսերը պահանջ ներկայացնող բաժնետիրոջը տրամադրելու դիմաց առաջարկվող գինը, որը չի կարող պակաս լինել անկախ գնահատողի կողմից սահմանված բաժնետոմսերի շուկայական արժեքից.

4) պահանջ ներկայացնող բաժնետիրոջ կողմից ընտրված (նշանակված) անկախ գնահատողի անունը, հաստատության անվանումը, որում վերջինս աշխատում է (առկայության դեպքում).

5) բաժնետոմսերը պահանջ ներկայացնող բաժնետիրոջը տրամադրելու դիմաց առաջարկվող գումարը հատուկ բանկային հաշվին դեպոնացնելու մասին տեղեկություններ: Որպես դեպոնացված գումարի հասցեատեր պետք է նշվեն այն բաժնետերերը, ում բաժնետոմսերը ենթակա են հետզնման:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված տեղեկությունները ժողովի մասին ծանուցմամբ ներկայացվում են բաժնետերերին:

4. Բաժնետերերը, ում բաժնետոմսերի կապակցությամբ կայացվել է բաժնետոմսերը հետզնելու և պահանջ ներկայացնող բաժնետիրոջը տրամադրելու վերաբերյալ որոշում, իրավունք ունեն ժողովի որոշումը կայացվելուց հետո երկու ամսվա ընթացքում դիմել դատարան՝ վիճարկելով բաժնետոմսերի տրամադրման դիմաց առաջարկվող գինը:

5. Սույն հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված գումարը դեպոնացված լինելու դեպքում բաժնետոմսերը հետզնելու և պահանջ ներկայացնող բաժնետիրոջը տրամադրելու վերաբերյալ ժողովի որոշումը հիմք է այդ բաժնետոմսերի վերաբերյալ Ընկերության բաժնետերերի ռեեստրում գրառումներ կատարելու համար՝ անկախ ժողովի որոշումը վիճարկելու հանգամանքից:

6. Բաժնետոմսերը հետզնելու և պահանջ ներկայացնող բաժնետիրոջը տրամադրելու վերաբերյալ ժողովի որոշումը կայացվելու պահից բաժնետերերը իրավունք ունեն ստանալու պահանջ ներկայացնող բաժնետիրոջ կողմից դեպոնացված գումարը:»:

Հոդված 28. Օրենքում լրացնել նոր 56.2-րդ հոդված.

«Հոդված 56.2. Ընկերության բաժնետոմսերի պարտադիր գնման պահանջը

1. Ընկերության քվեարկող բաժնետոմսերի և միաժամանակ դրանցով տրամադրվող ձայների ոչ ավելի քան 5 տոկոսին տիրապետող բաժնետիրոջ (այսուհետ սույն հոդվածում՝ պահանջ ներկայացնող բաժնետեր) պահանջով (Ընկերության բաժնետոմսերի պարտադիր գնման պահանջ) հրավիրվում է արտահերթ ժողով, որը որոշում է ընդունում պահանջ ներկայացնող բաժնետիրոջ բաժնետոմսերը հետգնելու վերաբերյալ, եթե Ընկերությունում առկա է սույն օրենքի 56.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված բաժնետեր:

2. Ընկերության բաժնետոմսերի պարտադիր գնման պահանջը պետք է առնվազն պարունակի հետևյալ տեղեկությունները.

1) հիմնավորում պահանջ ներկայացնող բաժնետիրոջ՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պայմաններին համապատասխանության վերաբերյալ.

2) պահանջ ներկայացնող բաժնետիրոջ անունը (անվանումը), հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն, ծանուցման հասցեն, եթե այն տարբերվում է հաշվառման (գտնվելու) վայրի հասցեից, պահանջ ներկայացնող ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի տվյալները.

3) բաժնետոմսերը պահանջ ներկայացնող բաժնետիրոջից հետգնելու համար առաջարկվող գինը, որը չի կարող ավել լինել անկախ գնահատողի կողմից սահմանված բաժնետոմսերի շուկայական արժեքից.

4) պահանջ ներկայացնող բաժնետիրոջ կողմից ընտրված (նշանակված) անկախ գնահատողի անունը, հաստատության անվանումը, որում վերջինս աշխատում է (առկայության դեպքում):

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված տեղեկությունները ժողովի մասին ծանուցմամբ ներկայացվում են բաժնետերերին:

4. Ընկերության բաժնետոմսերի պարտադիր գնման պահանջը ստացած Ընկերությունը իրավունք ունի պահանջը ստանալուց հետո երկու ամսվա ընթացքում դիմել դատարան՝ վիճարկելով բաժնետոմսերի հետգնման դիմաց առաջարկվող գինը, ընդ որում, գնի վիճարկումը չի կասեցնում Ընկերության բաժնետոմսերի հետգնման գործընթացը:

5. Ընկերությունը պարտավոր է հետգնել պահանջ ներկայացնող բաժնետիրոջ բաժնետոմսերը Ընկերության բաժնետոմսերի պարտադիր գնման պահանջը ստանալուց հետո երկու ամսվա ընթացքում:

6. Սույն հոդվածով սահմանված հիմքերով հետգնված բաժնետոմսերն ուղղվում են Ընկերության տնօրինությանը: Նշված բաժնետոմսերը չեն տալիս ձայնի իրավունք, հաշվի չեն առնվում ձայների հաշվարկման ժամանակ, և դրանցով շահութաբաժիններ չեն հաշվարկվում: Դրանք ենթակա են տեղաբաշխման սույն օրենքի 56.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված բաժնետիրոջը մեկ տարվա ընթացքում: Եթե սույն օրենքի 56.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված բաժնետերը հրաժարվում է կամ սույն հոդվածով սահմանված ժամկետում ձեռք չի բերում հետգնված բաժնետոմսերը, ժողովը պարտավոր է որոշում ընդունել նշված բաժնետոմսերի մարման միջոցով կանոնադրական կապիտալի չափի նվազեցման մասին:»:

Հոդված 29. Օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետում «2-րդ» բառը փոխարինել «1-ին» բառով:

Հոդված 30. Օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Նշված որոշումների, ինչպես նաև սույն օրենքով նախատեսված բաժնետոմսերի հետզնման մասին այլ որոշումների ընդունման պահից՝ 7-օրյա ժամկետում, Ընկերությունը պարտավոր է ծանուցել հետզնման իրավունք ունեցող բաժնետերերին՝ նրանց մոտ Ընկերությունից բաժնետոմսերի հետզնման պահանջի իրավունքի առաջացման և հետզնման կարգի մասին: Հետզնման ենթակա բաժնետոմսերը երրորդ անձանց իրավունքներով ծանրաբեռնված լինելու դեպքում Ընկերության բաժնետերերի ռեեստր վարողը պարտավոր է տվյալ բաժնետոմսերի հետզնման մասին ծանուցել այդ անձանց՝ օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում:»:

Հոդված 31. Օրենքի 59-րդ հոդվածի 5-րդ մասում՝

1) երկրորդ պարբերությունում «Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի» բառերը փոխարինել «Ընկերության յուրաքանչյուր դասի հասարակ (սովորական) բաժնետոմսերի» բառերով, իսկ «Ընկերության բոլոր տեղաբաշխված հասարակ (սովորական) արժեթղթերի» բառերը փոխարինել «Ընկերության՝ տվյալ դասի բոլոր տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի» բառերով.

2) երրորդ պարբերությունում «Սույն կետով որոշվող» բառերից հետո լրացնել «յուրաքանչյուր դասի» բառերը:

Հոդված 32. Օրենքի 60-րդ հոդվածի՝

1) վերնագրում «և» բառը փոխարինել «կամ» բառով.

2) 1-ին մասի «ա» և «բ» կետերում «25» թիվը փոխարինել «50» թվով:

Հոդված 33. Օրենքի 61-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 61. Ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված խոշոր գործարքների կնքումը

1. Խոշոր գործարք կնքելու մասին որոշումը պետք է ընդունվի ժողովի կողմից՝ դրան մասնակցող բաժնետերերի (քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի) ձայների 3/4-ով, եթե Ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ:

2. Սույն հոդվածով սահմանված պահանջները չպահպանելը խոշոր գործարք կնքելիս չի հանգեցնում գործարքի անվավերության, եթե Ընկերության հետ գործարք կնքած անձը գործել է բարեխիղճ՝ չգիտեր կամ չէր կարող իմանալ նշված պահանջներն Ընկերության կողմից չպահպանելու մասին:»:

Հոդված 34. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ VIII.1 գլխով.

«ԳԼՈՒԽ VIII.1

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՁԵՌՔԵՐՄԱՆ ԿԱՄ ՕՏԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՅԼ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ

Հոդված 61.1. Ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված այլ գործարքները

1. Սույն գլխի իմաստով Ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված այլ գործարքներ են մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնք, բացառությամբ Ընկերության բնականոն տնտեսական գործունեության շրջանակներում կատարվող գործարքների, ուղղակի կամ անուղղակի կապված են Ընկերության կողմից գույքի ձեռքբերման, օտարման կամ գույքի օտարման հնարավորության հետ, և որոնց արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ չի գերազանցում Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսը:

2. Ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված այլ գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը որոշվում է սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով:

Հոդված 61.2. Ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված այլ գործարքների կնքումը

1. Ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված այլ գործարք կնքելու մասին որոշումը, եթե գույքի արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի մինչև 25 տոկոսը, կայացնում է գործադիր մարմինը, եթե ընկերության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

2. Ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված այլ գործարք կնքելու մասին որոշումը, եթե դրանց արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից 50 տոկոսը, կայացնում է խորհուրդը, եթե ընկերության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

3. Եթե սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով նախատեսված գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու իրավասությունը վերապահված է խորհրդին, ապա այդ որոշումը ընդունվում է խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, եթե կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ: Այն դեպքում, երբ կանոնադրությամբ սահմանված է, որ սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով սահմանված գործարքը կնքելու մասին որոշումը խորհուրդն ընդունում է միաձայն, խորհրդի դուրս եկած անդամների ձայները հաշվի չեն առնվում:

4. Եթե սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով նախատեսված գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու իրավասությունը վերապահված է խորհրդին, սակայն այդ որոշումը խորհրդի կողմից չի ընդունվում, ապա խորհուրդը պարտավոր է այդ գործարքի կնքման վերաբերյալ որոշում կայացնելու հարցով գումարել արտահերթ ժողով:

5. Սույն հոդվածով սահմանված պահանջները չպահպանելը ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված այլ գործարք կնքելիս չի հանգեցնում գործարքի անվավերության, եթե Ընկերության հետ գործարք կնքած անձը գործել է բարեխիղճ՝ չգիտեր կամ չէր կարող իմանալ նշված պահանջներն Ընկերության կողմից չպահպանելու մասին:»:

Հոդված 35. Օրենքի 67-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 67. Ժողովի իրավասությունները

1. Ժողովի իրավասությանն են պատկանում՝

1) կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.

2) Ընկերության վերակազմակերպումը.

3) Ընկերության լուծարումը.

4) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.

5) խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է

ընդունել խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

6) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.

7) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը.

8) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.

9) Ընկերության գործադիր մարմնի (միանձնյա կամ կոլեգիալ) ձևավորումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև Ընկերության գործադիր մարմնի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձի նշանակումը.

10) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

11) Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության հարցերը ժողովին վերապահված լինելու դեպքում քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

12) Ընկերության աշխատակիցների բաժնետիրացման ծրագրի հաստատումը.

13) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը: Նշված հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Եթե սահմանված ժամկետում տարեկան ժողովը տեղի չի ունեցել, ապա արտահերթ ժողով կարող է հրավիրվել միայն Ընկերության լուծարման կամ սույն ենթակետում նշված հարցերը քննարկելու համար: Նշված հարցերով հրավիրված արտահերթ ժողովում այլ հարցեր քննարկվել չեն կարող, բացառությամբ սույն ենթակետում նշված հարցերով կայացված որոշումներով պայմանավորված կանոնադրական կապիտալի նվազեցման դեպքերի.

14) սույն օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխան Ընկերության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող Ընկերության այլ արժեթղթերի Ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.

15) առանձին տեսակների կամ դասերի բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարելու կամ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները ոչ լրիվ չափով վճարելու մասին որոշումներ ընդունելը.

16) ժողովի վարման կարգը.

17) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

18) բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը.

19) գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ սույն օրենքի 64-րդ հոդվածով նախատեսված դեպքերում.

20) խոշոր գործարքների կնքման մասին որոշման ընդունումը.

21) «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով որոշումների ընդունումը.

22) Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.

23) Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում.

24) Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց (խորհրդի նախագահի կամ անդամի, տնօրենի, գլխավոր տնօրենի կամ վարչության, տնօրինության անդամի) աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը.

25) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը կամ դրանց մասնակցությունը.

26) օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

2. Կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ սույն հոդվածի 1-ին մասի 8-11-րդ, 22-23-րդ, 24-րդ (բացառությամբ խորհրդի նախագահի կամ անդամի վարձատրության) և 25-րդ կետերով սահմանված ժողովի իրավասությունները կարող են վերապահվել խորհրդին: Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված իրավասությունները կարող են վերապահել խորհրդին, եթե դրա իրականացումը բացառապես պայմանավորված է Հայաստանի Հանրապետության տարածքում Ընկերության գտնվելու վայրի փոփոխությամբ կամ Ընկերության հայտարարված բաժնետոմսերի տեղաբաշխմամբ պայմանավորված կանոնադրության փոփոխություններ կատարելով, ինչպես նաև սույն օրենքի 88-րդ հոդվածի 2.1-ին մասով նախատեսված դրույթներ սահմանելով, եթե սույն հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանված իրավասությունը վերապահված է խորհրդին:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 22-23-րդ կետերով նախատեսված իրավասությունները Ընկերության կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ կարող են վերապահվել Ընկերության գործադիր մարմնին:

4. Ժողովն իրավունք չունի քննարկել և որոշումներ ընդունել այն հարցերի շուրջ, որոնք օրենքի համաձայն և Ընկերության կանոնադրությամբ չեն սահմանվել որպես նրա իրավասություն:»:

Հոդված 36. Օրենքի 68-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի երկրորդ պարբերությունում՝

ա. երկրորդ նախադասությունում «Եթե» բառից հետո լրացնել «հասարակ (սովորական) կամ» բառերը, իսկ «հաշվարկման ժամանակ նշված» բառերից հետո լրացնել «հասարակ (սովորական) կամ» բառերը.

բ. լրացնել նոր երրորդ նախադասություն.

«Քվեարկող կոտորակային բաժնետոմսերի քանակի հաշվարկման ժամանակ նշված բաժնետոմսերի տրված յուրաքանչյուր ձայն հաշվառվում է տվյալ բաժնետոմսի կոտորակին (մասին) համամասնորեն:».

2) 3-րդ մասում «67-րդ հոդվածի 1-ին կետի «բ», «ժգ», «ժզ», «ժէ-ի» ենթակետերում» բառերը փոխարինել «67-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 14-րդ, 18-20-րդ և 22-23-րդ կետերում» բառերով, իսկ «և» բառը փոխարինել «կամ» բառով.

3) 4-րդ մասում «67-րդ հոդվածի 1-ին կետի «ա», «բ», «դ», «զ» և «ժթ» ենթակետերում» բառերը փոխարինել «67-րդ հոդվածի 1-ին մասի 1-2-րդ, 4-րդ, 6-րդ և 20-րդ կետերում» բառերով.

4) 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«5. Սույն օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 7-րդ և 18-րդ կետերում սահմանված հարցերով որոշումները, ինչպես նաև Ընկերության կանոնադրության մեջ այնպիսի փոփոխություններ կամ լրացումներ կատարելու կամ կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին որոշումները, որոնցով Ընկերությունում ստեղծվում են հասարակ (սովորական) կամ արտոնյալ բաժնետոմսերի նոր դասեր կամ փոփոխվում են հասարակ (սովորական) կամ արտոնյալ բաժնետոմսերի դասերի պայմանները, ընդունում է ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից, եթե Ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ: Հասարակ (սովորական) բաժնետոմսերի դասերի պայմանների փոփոխության հանգեցնող որոշումները, որոնցով սահմանափակվում են այդ բաժնետոմսերով հատկացվող իրավունքները, կարող են ընդունվել, երբ դրանց կողմ են քվեարկել համապատասխան դասի հասարակ (սովորական) բաժնետոմսերի առնվազն 3/4-ի սեփականատերերը կամ անվանատերերը, եթե Ընկերության կանոնադրությամբ սեփականատերերի կամ անվանատերերի առավել մեծ թիվ սահմանված չէ:»:

5) 7-րդ մասում «67-րդ հոդվածի 1-ին կետի «բ», «գ» և «ը» ենթակետերում» բառերը փոխարինել «67-րդ հոդվածի 1-ին մասի 2-3-րդ և 7-րդ կետերում» բառերով.

6) 8-րդ մասում «67-րդ հոդվածի 1-ին կետի «բ», «գ» և «ը» ենթակետերում» բառերը փոխարինել «67-րդ հոդվածի 1-ին մասի 2-3-րդ և 7-րդ կետերում» բառերով:

Հոդված 37. Օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասում «մասնակցել է Ընկերության քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին» բառերը փոխարինել «մասնակցել են Ընկերության քվեարկող բաժնետոմսերով տրամադրվող ձայների քանակի կեսից ավելին տիրապետող բաժնետերերը» բառերով:

Հոդված 38. Օրենքի 70-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի «ա» կետում «իրենց պատկանող բաժնետոմսերի» բառերից հետո լրացնել «դասին, » բառը.

2) 1-ին մասի «բ» կետում «Ընկերության» բառից առաջ լրացնել «սույն օրենքով կամ կանոնադրությամբ նախատեսված դեպքերում» բառերը, իսկ «իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի» բառերից հետո լրացնել «դասին, » բառը.

3) 5-րդ մասից հանել «որպես սեփականատեր» բառերը, իսկ «բաժնետոմսերի» բառը փոխարինել «բաժնետոմսերով տրամադրվող ձայների քանակի» բառերով:

Հոդված 39. Օրենքի 72-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր է (են) հանդիսանում» բառերը փոխարինել «տիրապետում է (են) Ընկերության քվեարկող բաժնետոմսերի կամ դրանցով տրամադրվող ձայների քանակի առնվազն 2 տոկոսին» բառերով.

2) 2-րդ մասում «բաժնետոմսերի քանակը» բառերը փոխարինել «բաժնետոմսերով տրամադրվող ձայների քանակը» բառերով.

3) 3-րդ մասի ամբողջ տեքստում «բաժնետոմսերի» բառերը փոխարինել «բաժնետոմսերով տրամադրվող ձայների» բառերը.

4) 4-րդ մասի «բ» կետում «տնօրինում Ընկերության» բառերը փոխարինել «տիրապետում Ընկերության» բառերով, իսկ «քանակի քվեարկող բաժնետոմսերին» բառից հետո լրացնել «ձայների քանակին» բառերը:

Հոդված 40. Օրենքի 74-րդ հոդվածի՝

1) ամբողջ տեքստում «Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր» բառերը փոխարինել «Ընկերության քվեարկող բաժնետոմսերով տրամադրվող ձայների քանակի առնվազն 10 տոկոսին տիրապետող» բառերով.

2) 3-րդ մասում «նրան (նրանց) պատկանող բաժնետոմսերի» բառը փոխարինել «նրան (նրանց) պատկանող բաժնետոմսերով տրամադրվող ձայների» բառերով.

3) 4-րդ մասի երկրորդ պարբերության «բ» կետում «տնօրինում» բառը փոխարինել «տիրապետում» բառով, իսկ «քանակի քվեարկող բաժնետոմսերը» բառերը փոխարինել «քվեարկող բաժնետոմսերով տրամադրվող ձայների քանակին» բառերով:

Հոդված 41. Օրենքի 75-րդ հոդվածի 2-րդ մասում «(գլխավոր տնօրենը)» բառերից հետո լրացնել «, գործադիր մարմնի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձը՝ իր լիազորությունների իրականացման ժամանակահատվածում» բառերը:

Հոդված 42. Օրենքի 77-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի առաջին պարբերությունում «բաժնետոմսերի» բառը փոխարինել «բաժնետոմսերով տրամադրվող ձայների» բառերով.

2) 3-րդ մասի երկրորդ պարբերությունում «բաժնետոմսերի» բառը փոխարինել «բաժնետոմսերով տրամադրվող ձայների» բառերով:

Հոդված 43. Օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում «կիրառելիս» բառից հետո լրացնել «հասարակ (սովորական) կամ» բառերը:

Հոդված 44. Օրենքի 83-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի՝

ա. առաջին պարբերությունից հանել «բացառիկ» բառը.

բ. երրորդ պարբերությունում «1-ին կետի «բ-դ» ենթակետերով» բառերը փոխարինել «1-ին մասի 2-4-րդ կետերով» բառերով.

2) 3-րդ մասի «գ» կետում «բաժնետոմսերի» բառից հետո լրացնել «և դրանցով տրամադրվող ձայների» բառերը:

Հոդված 45. Օրենքի 84-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 84. Խորհրդի իրավասությունները

1. Խորհրդի իրավասությանն են պատկանում՝

1) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը.

2) տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, բացառությամբ սույն օրենքի 74-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված դեպքերի.

3) ժողովների օրակարգի հաստատումը.

4) ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը՝ սույն օրենքի X գլխի դրույթներին համապատասխան.

5) սույն օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 14-րդ, 18-20-րդ և 22-23-րդ կետերով նախատեսված հարցերի ներկայացումը ժողովների քննարկմանը.

6) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի ավելացումը.

7) պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը.

8) գույքի շուկայական արժեքի որոշումը՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով.

9) սույն օրենքով նախատեսված դեպքերում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը.

10) Ընկերության գործադիր մարմնի ձևավորումը, դրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, տնօրենի (գլխավոր տնօրենի), վարչության, տնօրինության անդամների վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգն ու պայմանները.

11) Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.

12) խորհրդին կից հանձնաժողովների (հանձնախմբերի) ձևավորումը, այդ թվում՝ աուդիտի.

13) Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը.

14) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

15) Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.

16) Ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.

17) Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.

18) դուստր և կախյալ ընկերությունների ստեղծումը, այդ Ընկերություններին մասնակցությունը, եթե կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ այդ իրավասությունը վերապահված է խորհրդին և, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում.

19) Ընկերության մասնաձյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը.

20) այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում.

21) Ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված այլ գործարքների կնքումը՝ սույն օրենքի VIII.1-ին գլխով նախատեսված դեպքերում.

22) սույն օրենքի IX գլխով նախատեսված գործարքների կնքումը.

23) Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.

24) ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը.

25) Ընկերության հաստիքացուցակի հաստատումը.

26) սույն օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

2. Կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված իրավասությունները կարող են վերապահվել ժողովին:

3. Կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ սույն հոդվածի 1-ին մասի 21-րդ և 23-25-րդ կետերով սահմանված իրավասությունները կարող են վերապահվել Ընկերության գործադիր մարմնին՝ անկախ Ընկերությունում խորհուրդ ստեղծված լինելու հանգամանքից, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 1-6-րդ, 9-րդ և 15-20-րդ կետերով սահմանված իրավասությունները կարող են վերապահվել Ընկերության գործադիր մարմնին, եթե Ընկերությունում խորհուրդ չի ստեղծվել:»:

Հոդված 46. Օրենքի 85-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասի առաջին պարբերությունում «բաժնետոմսերի» բառից հետո լրացնել «կամ դրանցով տրամադրվող ձայների» բառերը:

2) 3-րդ մասի 3-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Գումարային (կումուլատիվ) քվեարկության ժամանակ յուրաքանչյուր քվեարկող բաժնետոմսի սեփականատեր ունի իրեն տրամադրված ձայների քանակի և խորհրդի ընտրվող (վերընտրվող) անդամների քանակի բազմապատիկին հավասար ձայների քանակ:»:

3) 5-րդ մասի չորրորդ պարբերությունում «ընկերության 10-ից ավելի տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող» բառերը փոխարինել «Ընկերության քվեարկող բաժնետոմսերի կամ դրանցով տրամադրվող ձայների քանակի 10-ից ավելի տոկոսին տիրապետող» բառերով:

Հոդված 47. Օրենքի 87-րդ հոդվածի՝ 3-րդ մասի 1-ին պարբերությունում լրացնել հետևյալ բովանդակությամբ երկրորդ նախադասություն.

«Սույն օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժողովի այն իրավասությունների վերաբերյալ որոշումները, որոնք վերապահվել են խորհրդի իրավասությանը, ընդունվում են խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների 3/4-ով, եթե սույն օրենքով, կանոնադրությամբ կամ ժողովի հաստատած խորհրդի կանոնակարգով այլ բան նախատեսված չէ:»:

Հոդված 48. Օրենքի 88-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի՝

ա. 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Ընկերության գործադիր մարմնի իրավասությանն են պատկանում Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ սույն օրենքով կամ կանոնադրությամբ ժողովի կամ խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի:»:

բ. հինգերորդ պարբերությունում լրացնել հետևյալ բովանդակությամբ երրորդ և չորրորդ նախադասություններ.

«խորհրդի բացակայության դեպքում գործադիր մարմնի հետ պայմանագիր կնքում է ժողովի կողմից որոշված անձը: Այն դեպքում, երբ ընկերությունն ունի մեկ բաժնետեր, որը զբաղեցնում է նաև գործադիր մարմնի պաշտոնը, գործադիր մարմնի պաշտոնը զբաղեցնող անձի հետ պայմանագիր կնքում է ընկերությունը՝ ի դեմս միակ բաժնետիրոջ կամ վերջինիս կողմից լիազորված անձի:»

2) լրացնել նոր 2.1-2.2-րդ մասեր.

«2.1. Ընկերության միանձնյա գործադիր մարմնի բացակայության, ինչպես նաև միանձնյա գործադիր մարմնի կամ կառավարող կազմակերպության կողմից իրենց լիազորությունների իրականացման անհնարինության այլ դեպքերում Ընկերության գործադիր մարմնի լիազորությունները կարող է իրականացնել կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ նախապես որոշված (նշանակված)՝

Ընկերության գործադիր մարմնի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձը մինչև Ընկերության նոր գործադիր մարմնի ձևավորումը կամ Ընկերության գործող միանձնյա գործադիր մարմնի կամ կառավարող կազմակերպության կողմից իրենց լիազորությունների իրականացման անհնարինության հիմքերի վերացումը:

2.2. Ընկերության գործադիր մարմնի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձի իրավասությանն է պատկանում Ընկերության գործող գործադիր մարմնի բոլոր լիազորությունների իրականացումը, եթե կանոնադրությամբ Ընկերության գործադիր մարմնի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձի իրավասությունը սահմանափակված չէ:»:

Հոդված 49. Օրենքի 91-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի առաջին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար բաց Ընկերությունում ընտրվում է, իսկ փակ Ընկերությունում կարող է ընտրվել Ընկերության վերստուգող հանձնաժողով (վերստուգող):»:

2) 2-րդ մասում «Ընկերության՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր» բառերը փոխարինել «Ընկերության քվեարկող բաժնետոմսերի կամ դրանցով տրամադրվող ձայների քանակի առնվազն 10 տոկոսին տիրապետող» բառերով:

Հոդված 50. Օրենքի 92-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի երկրորդ պարբերությունում «Ընկերության՝ քվեարկող բաժնետերերի առնվազն հինգ տոկոսի սեփականատեր» բառերը փոխարինել «Ընկերության քվեարկող բաժնետոմսերի կամ դրանցով տրամադրվող ձայների քանակի առնվազն 5 տոկոսին տիրապետող» բառերով:

Հոդված 51. Օրենքի 93-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությունում «պարտադիր է» բառերից հետո լրացնել «Ընկերությունում վերստուգող հանձնաժողով (վերստուգող) ընտրված լինելու դեպքում» բառերը:

Հոդված 52. Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունում «պետական կառավարման» բառերից հետո լրացնել «համակարգի» բառը:

Հոդված 53. Օրենքի 95-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետում «պետական կառավարման» բառերից հետո լրացնել «համակարգի» բառը:

Հոդված 54. Եզրափակիչ և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ ամիս հետո:

2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը թողարկված և տեղաբաշխված փաստաթղթային ձևի բաժնետոմսերը և դրանց հավաստագրերը սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո համարվում են վավեր:

3. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-2-րդ կետերով, 3-րդ հոդվածով և 19-րդ հոդվածի 1-2-րդ կետերով նախատեսվող կարգավորումները կիրառվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ստեղծվող ընկերությունների նկատմամբ:

4. Սույն օրենքով նախատեսված՝ աշխատակիցների բաժնետիրացման վերաբերյալ կարգավորումները չեն տարածվում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը նախաձեռնված աշխատակիցների բաժնետիրացման գործընթացի նկատմամբ:

5. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ընկերության բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի) մասին որոշում ընդունելու դեպքում ընկերության բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի) գործընթացի և արդյունքների, այդ թվում՝ համախմբման (կոնսոլիդացիայի) արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի նկատմամբ կիրառվում են մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը գործող նորմերը:

6. Հետգնման ենթակա բաժնետոմսերը երրորդ անձանց իրավունքներով ծանրաբեռնված լինելու դեպքում Ընկերության բաժնետերերի ռեեստր վարողի՝ սույն օրենքի 30-րդ հոդվածով սահմանված ծանուցման պարտականությունը կիրառվում է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ընդունված՝ ընկերության բաժնետոմսերի հետգնման համապատասխան որոշումների դեպքում:

ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ

«ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

«Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) մի շարք կարգավորումներ ներկայումս համահունչ չեն գործարար աշխարհում տեղի ունեցող զարգացումներն, որոնք իրենց ազդեցությունն են ունենում կորպորատիվ իրավունքի զարգացման վրա: Նշվածը հատկապես վերաբերում է ընկերության կառավարման մարմինների լիազորություններին, հասարակ բաժնետոմսերի տեսակների և դասերի համակարգին, բաժնետոմսերի վաճառքի ու հետգնման դեպքերին, կոտորակային բաժնետոմսերի տիրապետման, օգտագործման և տնօրինման հնարավորությանը, ընկերության բաժնետերերի շահերի հավասարակշռմանը և նրանց պաշտպանությանը, խոշոր գործարքների կնքմանը, ընկերության աշխատակիցների բաժնետիրացման ընթացակարգին և այլն: Նշված ոլորտում փոփոխություններ իրականացնելու անհրաժեշտությունը պայմանավորված է նաև ՀՀ կառավարության՝ 2019թ.-ի հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» թիվ 1441-Լ որոշմամբ, որտեղ նույնպես նշվում է կորպորատիվ իրավունքին վերաբերող կարգավորումների՝ ժամանակի զարգացումներից հետ մնալու մասին:

1.1. Խոշոր և փոքր բաժնետերերի պաշտպանության լրացուցիչ գործիքներ.

Խոշոր և փոքր բաժնետերերի միջև հաճախ տեղի են ունենում շահերի բախումներ, և շատ դեպքերում դժվար է լինում ապացուցել փոքր բաժնետերերի հանդեպ չարաշահումները: Բացի այդ, պետք է հաշվի առնել նաև խոշոր բաժնետերերի իրավունքները և փորձել հավասարակշռել փոքր և խոշոր բաժնետերերի իրավունքները: Օրինակ՝ խոշոր բաժնետերը, ով ցանկանում է իր ընկերության ռազմավարությունը փոփոխել կամ նոր ուղղություններով զարգացնել իր բիզնեսը, պետք է ողջամիտ հնարավորություն ունենա լիարժեք վերահսկողություն իրականացնելու ընկերության նկատմամբ: Իրենց հերթին, փոքր բաժնետերերը պետք է հնարավորություն ունենան առանց որևէ պատճառի և առանց չարաշահման փաստն ապացուցելու դուրս գալ ընկերությունից՝ ստանալով ողջամիտ փոխհատուցում:

Այսպես, երբ որևէ անձ իր տիրապետության ներքո է կենտրոնացնում բաժնետոմսերի գերակշռող մասը, ապա, մի կողմից, նույնիսկ ամենալայն իրավական երաշխիքների պարագայում փոքր բաժնետերերի համար ընկերությունում մասնակցությունը դառնում է խիստ ձևական, քանի որ նրանք փաստացի գրեթե որևէ ազդեցություն չունեն ընկերության վրա, իսկ խոշոր բաժնետիրոջ համար նման փոքր բաժնետերերի առկայությունը որոշակի բարդություններ է առաջացնում ընկերության կառավարման ընթացքում: Նման դեպքում փոքր բաժնետերերի առկայությունը նաև լրացուցիչ ծախսեր է առաջացնում ընկերության և, հետևաբար, խոշոր բաժնետիրոջ համար, բարդություններ ռեսուրսի վարման ընթացքում և այլն:

Ընկերության բաժնետոմսերի պարտադիր վաճառքի պահանջի իրավունքը (squeeze out) և պարտադիր գնման պահանջի իրավունքը (sell out) հնարավորություն են տալիս կարգավորել ներկայացված խնդիրները՝ հավասարակշռելով թե՛ փոքր, թե՛ խոշոր բաժնետերերի շահերը: Այսպես, սույն ինստիտուտի ուսումնասիրությունը վկայում է, որ բաժնետոմսերի պարտադիր վաճառքի պահանջի իրավունքը նպատակ է հետապնդում բարձրացնել բաժնետիրական ընկերության կառավարման և գործունեության արդյունավետությունը և պայման հանդիսանալ արդյունավետ տնտեսական գործունեություն իրականացնելու համար: Միևնույն ժամանակ, խնդրո առարկա ինստիտուտի նախատեսմամբ նպատակ է հետապնդվում ապահովել տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության սահմանադրական սկզբունքները: Մասնավորապես, Սահմանադրական դատարանը, իր 13.07.2010թ.-ի թիվ ՍԴՈ-903 որոշմամբ նշել է, որ տնտեսական գործունեության ազատությունը իրավաբանորեն երաշխավորված հնարավորությունն է՝ ազատորեն օգտագործելու սեփական ընդունակություններն ու գույքն օրենքով չարգելված տնտեսական գործունեության համար, այն է՝ իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Իսկ, ազատ շուկայական տնտեսական հարաբերությունների պայմաններում բաժնետիրական ընկերության կազմակերպչական ձևը խոշոր ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու առավել բարդ, բայց արդյունավետ եղանակն է, որի պարագայում առկա է ընդհանուր կորպորատիվ շահերի ապահովման խնդիր: Հետևաբար, բարձր արդյունավետությամբ կառավարվող բաժնետիրական ընկերությունների պարագայում կապահովվեն ընդհանուր կորպորատիվ շահերը՝ նպաստելով տնտեսական գործունեության ազատության կենսագործմանը: Ավելին, նման դեպքերում փոքր բաժնետերերը հետապնդում են բացառապես տնտեսական շահ՝ ի տարբերություն խոշոր բաժնետիրոջ, որը անձնական շահ է հետապնդում, քանի որ, ըստ էության, ընկերության ակտիվների հիմնական մասը տնօրինվում և տիրապետվում են նրա կողմից՝ շոշափելով նաև վերջինիս սեփականության իրավունքները, ինչի արդյունքում խոշոր բաժնետերը շահագրգռված է ընկերության և իր ակտիվների ձկուն կառավարմամբ:

Նման դրույթներ առկա են աշխարհի տարբեր երկրներում և բաժնետերերի շահերի հավասարակշռման և պաշտպանության ամենակիրառելի գործիքներից մեկն են: Օրինակ՝ Դանիայում ընկերությունների վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսվում է, որ այն բաժնետերերը, ովքեր տիրապետում են կանոնադրական կապիտալի և ձայների ավելի քան 90%-ին, կարող են պահանջել մյուս բաժնետերերից, որ իրենց բաժնետոմսերը վաճառվեն այդ բաժնետիրոջ կողմից: Փոքր բաժնետերերը նույնպես ունեն համարժեք իրավունքապահանջելու, որ կանոնադրական կապիտալի 90%-ի սեփականատեր հանդիսացող բաժնետերը գնի իրենց բաժնետոմսերը և այդպիսով նրանք դուրս գան ընկերության բաժնեմասնակցությունից¹: Գերմանիայում այս շեմը կազմում է 95%², այս շեմը 95% է

¹Դանիական ընկերությունների ակտ բաժին 70:

կազմում նաև Ուկրաինայում³, Նիդեռլանդներում⁴, Վրաստանում⁵, Ղազախստանում⁶, ինչպես նաև այնպիսի երկրներում, որտեղ squeeze out/sell out կարգավորումները տարածվում են միայն ցուցակված ընկերությունների վրա. օրինակ՝ Իտալիայում⁷, Լյուքսեմբուրգում⁸ : Նշվածը մեծապես պայմանավորված է ԵՄ 2004 թ.-ի ապրիլի 21-ի 2004/25/EC դիրեկտիվով⁹, որի 15-րդ հոդվածը թույլ է տալիս բաժնետոմսերի պարտադիր վաճառքի կամ հետգնման շեմը սահմանել 90-ից մինչև 95%: Նշենք նաև, որ նշված երկրներից մի քանիսի կարգավորումները վերաբերում են միայն ցուցակված ընկերություններին (օրինակ՝ Իտալիա, Ֆրանսիա Բելգիա), այնուամենայնիվ, հետաքրքրական է, որ այդ երկրներում նույնպես սահմանված է 90-ից մինչև 95% տոկոս սահմանաչափը:

Հատկապես կարևոր է, որ պարտադիր վաճառքի կամ գնման պահանջի իրավունքները կարող է իրականացվել ընկերության բաժնետոմսերի որոշակի տոկոսին տիրապետող բաժնետիրոջ կողմից: Այլ կերպ ասած, այս պահանջները կիրառելի են, երբ ընկերության փաստացի վերահսկողությունը իրականացնում է մեկ անձ, ով ցանկանում է ստանալ բացարձակ վերահսկողություն ընկերության նկատմամբ: Այս մոտեցումը որդեգրել են մի շարք պետություններ, որոնց թվում են Դանիան, Ֆինլանդիան, Շվեդիան, Մեծ Բրիտանիան և միաժամանակ այն ստացել է հավանություն Եվրոպական մոդելային կորպորատիվ ակտի հեղինակների կողմից (ԵՄԿԱ)¹⁰:

Այս համատեքստում անդրադառնալով նախատեսվող կարգավորման սահմանադրականության հարցին, մասնավորապես, սեփականության իրավունքին համապատասխանության տեսանկյունից, նշենք, որ, Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը: Իր հերթին, Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ հոդվածներով սահմանվում է, որ.

«1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

(...)

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

² Anton Babak - Adoption of Squeeze-Out and Sell-Out Rights of Shareholders in Ukraine on the Basis of a Comparison of EU, Germany and USA, Central European University March 30, 2012, էջ 22

³ Տե՛ս նույն տեղում, էջ 31, այստեղ նկարագրված օրենքը չի ստորագրվել նախագահի կողմից, իսկ 95%-անոց շեմն ամրագրվել է հետագայում ընդունված օրենքով՝ http://search.ligazakon.ua/l_doc2.nsf/link1/T171983.html

⁴ The Netherlands, Squeeze-out Guide, IBA Corporate and M&A Law Committee 2014, էջ 2

⁵ LAW OF GEORGIA ON ENTREPRENEURS, հոդված 53⁴

⁶ <https://www.kinstellar.com/insights/detail/778/kazakhstan-introduces-new-squeeze-out-mechanism-for-major-shareholders>

⁷ Italy, Squeeze-out Guide, IBA Corporate and M&A Law Committee 2014, էջ 2

⁸ Law of 21 July 2012 on mandatory squeeze-out and sell-out of securities of companies currently admitted or previously admitted to trading on a regulated market or having been offered to the public and amending the law of 23 December 1998 establishing a financial sector supervisory commission, հոդված 4

⁹ DIRECTIVE 2004/25/EC OF THE EUROPEAN PARLIAMENT AND OF THE COUNCIL of 21 April 2004 on takeover bids

¹⁰ ԵՄԿԱ առաջին հրատարակություն, 2017թ., Nordic & European company law, LSN research Paper series, No. 16-26, European Model Companies Act, First Edition, 2017, by Paul Kruger Andersen and Jan Bertil Andersson, էջեր՝ 234-237, 264-65:

(...):»:

Ինչպես նկատում ենք, Սահմանադրությունը, Երաշխավորելով սեփականության իրավունքը, այն է օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու յուրաքանչյուրի իրավունքը, միաժամանակ նախատեսել է որոշակի դեպքերում այդ իրավունքի սահմանափակման հիմքերը: Ի թիվս այլոց, այդպիսի հիմքեր են՝

1. հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով սեփականության իրավունքի սահմանափակումը՝ օրենքով սահմանված դեպքերում, և

2. սեփականությունից զրկումը՝ դատական կարգով և օրենքով սահմանված դեպքերում:

Այս տեսանկյունից հարկ է նշել, որ սեփականության իրավունքի սահմանափակումների հիմնախնդիրն բազմիցս անդրադարձել է նաև Սահմանադրական դատարանը՝ ընդ որում, նաև կորպորատիվ իրավահարաբերությունների տեսանկյունից: Այսպես, 13.07.2010թ.-ի թիվ ՍԴՌ-903 որոշման շրջանակներում Սահմանադրական դատարանը անդրադարձել է բաժնետոմսերի հետզնման ինստիտուտին բաժնետոմսերի համախմբում (կոնսոլիդացիա) իրականացնելու դեպքում: Այդ, որոշման շրջանակներում կարելի է առանձնացնել Սահմանադրական դատարանի հետևյալ ուշագրավ դիրքորոշումները.

- *բաժնետիրական ընկերությունը որպես ձեռնարկատիրական գործունեության արդյունքում հավելյալ գույքային միջոցներ (շահութաբաժիններ) ստանալու մտադրությամբ միավորված անձանց կազմակերպություն ունի ոչ միայն առանձին բաժնետերերի մասնավոր շահերի հավասարակշռման, այլև **ընդհանուր կորպորատիվ շահերի ապահովման խնդիր**: Հակառակ դեպքում ընկերության կառավարումը կդառնա **անարդյունավետ**, իսկ դա հետագա անդրադարձ կունենա հենց նույն բաժնետերերի **սեփականության իրավունքի իրականացման արդյունավետության վրա**:*

- *Բաժնետոմսերի համախմբումը տնտեսապես արդարացված գործընթաց է, որը կազմում է բաժնետիրական ընկերության՝ որպես ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտի, տնտեսական ազատության դրսևորումներից մեկը: Հաշվի առնելով, որ **կոտորակային բաժնետոմսերի պարտադիր հետզնման ինստիտուտը հանդիսանում է տնտեսապես արդարացված գործընթաց, ինչպես նաև նկատի ունենալով խնդրո առարկայի վերաբերյալ միջազգային փորձը՝ սահմանադրական դատարանը գտել է, որ բաժնետերերի մեծամասնության որոշմամբ կոտորակային բաժնետոմսերի օրենքով նախատեսված պարտադիր հետզնման ինստիտուտն ինքնին իրավաչափ է**:*

- *Գույքի նկատմամբ անձի սեփականության իրավունքի իրականացումը բացարձակ չէ և կարող է սահմանափակվել հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով, ինչը առավել ևս վերաբերում է այն դեպքերին, երբ խոսքը **ձեռնարկատիրական (տնտեսական) գործունեությամբ համախմբված անձանց մասին է**: Դա, ինչպես շեշտել է Սահմանադրական դատարանն իր 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՌ-630 որոշման մեջ, ոչ միայն իր բնույթով իրավունքի սահմանափակման առանձնահատուկ ինստիտուտ է, այլև անխուսափելիորեն նշանակում է, որ **առկա է իրավաչափ նպատակի և սեփականության իրավունքի համադրման անհրաժեշտություն**:*

Միաժամանակ, Սահմանադրությամբ նախատեսված այդ նույն իրավաչափ նպատակի համար կրոնկրետ օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքի սահմանափակում կարող է իրականացվել միայն անհրաժեշտ փոխհատուցման դեպքում, որը կերաշխավորի սեփականության իրավունքի ապահովման շարունակականությունը: Իրավակարգավորման գլխավոր խնդիրը, ինչպես վկայում է նաև

միջազգային փորձը, համարժեք փոխհատուցման ապահովումն ու այդ շարունակականության երաշխավորումն է:

- «Սեփականությունից զրկում» հասկացության սահմանադրավական բովանդակությանը սահմանադրական դատարանն անդրադարձել է նշված ՄԴՂ-630 որոշման մեջ, որում, առանձնացնելով սեփականության իրավունքը սահմանափակելու՝ Սահմանադրությամբ թույլատրվող դեպքերը, **սեփականությունից զրկումը բնութագրել է որպես պատասխանատվությունից բխող հարկադիր գործողություն, որի դեպքում սեփականության իրավունքը դադարեցվում է անհատույց և առանց շարունակականության երաշխավորման:**

- Բաժնետիրական ընկերությունների բնույթն այնպիսին է, որ ընկերության գործունեության շրջանակներում բախվում են բաժնետերերի և ընկերության կառավարման մարմինների շահերը, բաժնետերերի տարբեր խմբերի շահերը: Վերջինս առավել ցայտուն դրսևորվում է խոշոր և մանր բաժնետերերի հարաբերություններում: **Խոշոր բաժնետերերը հանդիսանում են ընկերության ռազմավարական ներդրողները, որոնք հնարավորություն ունեն կանխորոշելու ընկերության որոշումները: Նրանց հիմնական շահը կայանում է նրանում, որ նրանք ձգտում են ընկերության գործունեությունից ձեռք բերել որոշակի արդյունքներ՝ անհրաժեշտ կառավարչական որոշումներ ընդունելու միջոցով: Մանր բաժնետերը ներդրող է, ով չունի ընկերության որոշումները կանխորոշելու, ընկերության գործունեության վրա ազդելու հնարավորություն: Մանր բաժնետիրոջ հիմնական շահը կայանում է նրանում, որ ձգտում է հասնել բաժնետոմսերում իր ներդրած միջոցների որոշակի շահութաբերության:**

Իրավական պետության կողմից ազատ տնտեսական գործունեության կարգավորումը, ի թիվս այլոց, պետք է նպատակ հետապնդի ապահովելու արդարացի հավասարակշռություն տնտեսական գործունեության մասնակիցների, տվյալ դեպքում՝ բաժնետիրական ընկերության խոշոր և մանր բաժնետերերի շահերի միջև:

Անդրադառնալով բաժնետոմսերի պարտադիր վաճառքի ինստիտուտին Սահմանադրական դատարանի մեջբերված որոշման լույսի ներքո՝ նկատում ենք, որ.

- այս ինստիտուտի նախատեսումը նպատակ է հետապնդում հավասարակշռել խոշոր և փոքր բաժնետերերի իրավունքները, ապահովել արդյունավետ կորպորատիվ կառավարումը, այլ կերպ՝ կարգավորումը հետապնդում է **ընդհանուր կորպորատիվ շահերի ապահովման խնդիր:**

- կարգավորումը նախատեսելիս հաշվի է առնվել դրա տնտեսապես արդարացվածությունը և **միջազգային փորձում տարածվածությունը:**

- խնդրո առարկա ինստիտուտով նպատակ է հետապնդվում ապահովել ինչպես այլոց՝ տվյալ դեպքում 95 և ավել տոկոս քվեարկելու ծայնի իրավունք տվող հասարակ (սովորական) բաժնետոմսերին ուղղակիորեն տիրապետող բաժնետիրոջ, այնպես էլ հանրության շահերը, քանի որ հանրության շահերից է բխում նաև արդյունավետ կորպորատիվ կառավարման համակարգերի, հետևաբար նաև, գործուն և կայացած կորպորատիվ միջավայրի առկայությունը: Հետևաբար, **նախատեսվող կարգավորմամբ հետապնդվում է իրավաչափ նպատակ:**

- իր հերթին, կարգավորմամբ նախատեսվում է բաժնետոմսերի պարտադիր վաճառքի պահանջի իրավունքի իրացումը՝ միայն անհրաժեշտ փոխհատուցման դեպքում՝ ապահովելով նաև սեփականության **իրավունքի շարունակականությունը:** Ավելին, առաջարկվող կարգավորմամբ նախատեսվել է բաժնետոմսերի պարտադիր վաճառքի պահանջի իրավունքի իրացման դատական պաշտպանության հնարավորությունը: Հետևաբար, նախատեսվող կարգավորումը սեփականությունից զրկման դրսևորում է:

Ընդհանրացնելով նկատում ենք, որ Նախագծով նպատակ է հետապնդվում հավասարակշռել ընկերության խոշոր և փոքր բաժնետերերի շահերը՝ պայմանավորված կոնկրետ իրավիճակում նրանցից յուրաքանչյուրի դերով և նշանակությամբ կորպորատիվ շահերի ապահովման տեսանկյունից: Նախատեսվող կարգավորումը թույլ է տալիս բաժնետոմսերի պարտադիր վաճառքի պահանջի կամ պարտադիր գնման պահանջի իրավունքների իրացման գործընթացում հաշվի առնել ընկերության բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքներն ու օրինական շահերը և իրականացվում է բաժնետիրական ընկերության կառավարման և գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Հարկ է նաև անդրադառնալ խնդրո առարկա կարգավորման վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ), ինչպես նաև տարբեր երկրների սահմանադրական դատարանների դիրքորոշումներին:

Այսպես, *Բռամելիդը և Մալմսթրոմը ընդդեմ Շվեդիայի* գործում ՄԻԵԴ-ը առաջին անգամ անդրադարձել է բաժնետոմսերի պարտադիր վաճառքի պահանջի իրավունքին սեփականության իրավունքի հետ հարաբերակցության տեսանկյունից և մասնավորապես նշել, որ նման կարգավորումը չի վերաբերում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 1-ին Արձանագրության 1-ին հոդվածով սահմանված սեփականությունից զրկելու դեպքերին, քանի որ խնդրո առարկա դեպքում գործ ունենք մասնավոր անհատների միջև հարաբերության հետ: Հետևաբար, ՄԻԵԴ-ը խնդիրը դիտարկել է այն տեսանկյունից, թե արդյոք խնդրո առարկա կարգավորմամբ չի ստեղծվում այնպիսի անհավասարության վիճակ, երբ որևէ անձ կարող է կամայականորեն և անարդարացիորեն զրկվել սեփականությունից՝ ի օգուտ այլ անձի, և գտել է, որ նման իրավիճակ խնդրո առարկա դեպքում առկա չէ (տե՛ս European Court of Human Rights, Decision of Commission of 12 October 1982 on the admissibility of the applications, *Bramelid and Malmström* (Application no. 8588/79 and 8589/79)): ՄԻԵԴ-ը նման խնդրի անդրադարձել է նաև *Ֆրեյթագն ընդդեմ Գերմանիայի* գործում (տե՛ս European Court of Human Rights, Judgement of 19 July 2007, *Freitag v. Germany* (Application no. 71440/01))՝ վերահաստատելով *Բռամելիդը և Մալմսթրոմը ընդդեմ Շվեդիայի* գործում իր դիրքորոշումները:

Իր հերթին, Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանը նույնպես իր՝ 2007թ.-ի մայիսի 30-ի որոշմամբ անդրադառնալով բաժնետոմսերի պարտադիր վաճառքի պահանջի իրավունքին այն դիտարկել է հետապնդվող նպատակի և ընտրված միջոցի համաչափության տեսանկյունից և եզրակացրել, որ խնդրո առարկա ինստիտուտը և դրա վերաբերյալ կարգավորումները համապատասխանում են համաչափության և անհրաժեշտ փոխհատուցման սկզբունքներին և իրավաչափ են, ուստի, չեն խախտում սեփականության իրավունքը (տե՛ս BVerfG NZG 2007, 587)¹¹:

Խնդրին իր՝ 2018թ.-ի հունիսի 27-ի որոշմամբ անդրադարձել է նաև Ավստրիայի Սահմանադրական դատարանը՝ կրկին չհամարելով, որ խնդրո առարկա ինստիտուտի կարգավորումները խախտում են սեփականության իրավունքը: Մասնավորապես, Ավստրիայի սահմանադրական դատարանը նշել է, որ խնդրո առարկա կարգավորումներով ապահովվող արդյունավետ կորպորատիվ կառուցակարգերի նախատեսումը բխում է հանրային շահից, քանի որ թույլ է տալիս ավստրիական ընկերություններին արդյունավետ արձագանքել արագ փոփոխվող ազգային և միջազգային գործարար միջավայրին: Իր հերթին, 90% շեմի նախատեսումը նույնպես իրավաչափ է, քանի որ փոքր բաժնետերերը, որոնք չեն տիրապետում ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի ավելի քան 10%-ին, սովորաբար չեն կանխորոշում ընկերության քաղաքականությունն ու ռազմավարությունը և հետապնդում են բացառապես

¹¹ Eiji Takahashi, Squeeze-out of Minority Shareholders, The Constitutionality Question, էջ 82

տնտեսական շահ: Փոխարենը, 90% և ավելի ծայնի իրավունքին տիրապետող բաժնետերերը անձնական շահ են հետապնդում և պետք է հնարավորություն ունենան կանխորոշել ընկերության գործողությունները, ռազմավարությունը և ապագան: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ փոքր բաժնետերերը ստանում են անհրաժեշտ փոխհատուցում, Ավստրիայի Սահմանադրական դատարանը գտել է, որ նրանց տնտեսական շահը ապահովվում է¹²:

Վերոգրյալի համատեքստում պետք է նկատել նաև, որ Նախագծով նախատեսվող կարգավորումը, նախևառաջ, բացի բաժնետոմսերի պարտադիր վաճառքի պահանջի իրավունքից նախատեսում է բաժնետոմսերի պարտադիր գնման պահանջի իրավունքը, ինչը լրացուցիչ երաշխիք է ընկերության բաժնետերերի շահերի հավասարակշռման տեսանկյունից, քանի որ ոչ միայն խոշոր բաժնետերերը կարող է պահանջ ներկայացնել փոքր բաժնետիրոջը, այլ նաև փոքր բաժնետերերը կարող է համապատասխան պահանջ ներկայացնել խոշոր բաժնետիրոջը: Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ նախատեսվող կարգավորումը հնարավորություն է ընձեռում դատական կարգով վիճարկել ներկայացված պահանջը՝ հավելյալ երաշխիքներ ստեղծելով պահանջ ստացած կողմի համար, որի դեպքում կարող է քննության առարկա դառնալ վճարման ենթակա փոխհատուցման չափը :

Ամփոփելով կարող ենք նկատել, որ Նախագծով նախատեսված կարգավորումը համապատասխանում է և՛ Սահմանադրական դատարանի, և՛ ՄԻԵԴ-ի արտահայտած իրավական դիրքորոշումներին: Միաժամանակ, Նախագծով նախատեսվող կարգավորմամբ արտացոլված են միջազգային փորձում առկա հիմնական երաշխիքները, որոնց լուսի ներքո ապահովվում է սեփականության իրավունքի սահմանափակման համաչափությունը: Այլ կերպ, նախատեսվող կարգավորումը, ըստ էության, իրավաչափ է:

1.2. Հասարակ (սովորական) բաժնետոմսերի դասակարգում.

Օրենքի համակարգային վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ ընկերությունն իրավունք ունի տարբեր դասերի բաժնետոմսեր թողարկել միայն արտոնյալ բաժնետոմսերի տեսքով, որոնք սահմանափակ դեպքերում են դրանց իրավատերերին տալիս քվեարկելու իրավունք: Այսինքն, գործող օրենսդրությունը բաժնետիրական ընկերությանը հնարավորություն չի տալիս թողարկելու տարբեր դասերի հասարակ բաժնետոմսեր, ինչը գործնականում արդյունավետ չէ հետևյալ պատճառաբանությամբ.

- հատկապես վենչուրային կապիտալի ու «իրեշտակ ներդրողների»¹³ դեպքում ներդրողները հաճախ պահանջում են այնպիսի բաժնեմասնակցություն, որի պարագայում նրանք հնարավորություն կունենան արտոնյալ պայմաններով շահաբաժիններ ստանալ և միաժամանակ հնարավորություն կունենան քվեարկելու ավելի լայն հարցերով, քան արտոնյալ բաժնետոմսերի գործող կարգավորումներով.

- գործնականում պատահում են նաև դեպքեր, երբ բաժնետերերը ցանկանում են ստանալ միանման շահութաբաժիններ, սակայն միաժամանակ՝ կախված իրենց ներգրավվածության մակարդակից, փորձից, մասնագիտացումից կամ համբավից, ցանկանում են ունենալ առավել շատ ծայներ, քան իրենց բաժնետոմսերի քանակն է: Նման դեպքերում բաժնետիրոջ համար այդքան առաջնային չէ բաժնեմասնակցությամբ որոշվող շահութաբաժնի չափը, որքան ընկերության

¹² St' u' <https://www.mondaq.com/austria/shareholders/732342/squeezing-out-minority-shareholders-vested-interest-vs-economic-interest>

¹³ Անձ ով ունի բավականաչափ ֆինանսական կարողություն և ֆինանսապես աջակցում է փոքր սկսնակ (startup) ընկերությունների՝ այդ ընկերությունում մասնակցություն ձեռք բերելու դիմաց:

ուղղությունները որոշելու, այն ղեկավարելու և վերահսկելու արդյունավետ հնարավորությունները: Նման ներդրող-բաժնետերերի առկայությունը բխում է նաև հենց ընկերության շահերից.

- առհասարակ, բաժնետոմսերը ֆինանսական գործիքներ են, այդ իսկ պատճառով հարկավոր է ներդրողներին հնարավորություն տալ ընտրելու, թե ինչ տեսակի բաժնետոմս են ուզում գնել:

Այսպես, թե՛ հասարակ (սովորական) և թե՛ արտոնյալ բաժնետոմսերը կարող են տալ ոչ միայն մեկ, այլև մեկից ավելի ծայնի իրավունք: Այս մասին են վկայում նաև մի շարք երկրների կորպորատիվ իրավունքի վերաբերյալ օրենսդրությունները. օրինակ՝ Իտալիան, Լյուքսեմբուրգը, Մեծ Բրիտանիան, Իռլանդիան, Դանիան և Շվեդիան¹⁴: Այլ կերպ, առանձին դասերի հասարակ բաժնետոմսերով դրանց տիրապետողներին կարող է հնարավորություն տրվել ձեռք բերել տարբեր բնույթի և չափի իրավունքներ: Որոշ երկրների օրենսդրությամբ էլ սահմանված է, թե մեկ բաժնետոմսը առավելագույնը քանի ծայնի իրավունք կարող է տալ. օրինակ՝ Իտալիայի օրենսդրությամբ մեկ բաժնետոմսը կարող է տալ առավելագույնը 3 ծայնի իրավունք, իսկ ընկերությունը ինքն է ընտրում այդ քանակը՝ ամրագրելով դա իր կանոնադրությամբ, Շվեդիայի օրենսդրությամբ մեկ բաժնետոմսը կարող է տալ առավելագույնը 10 ծայնի իրավունք, իսկ ԵՄԿԱ-ն թույլ է տալիս տարբեր քանակի ծայնի իրավունք տվող բաժնետոմսերի տեղաբաշխումը՝ առանց որևէ առավելագույն սահմանաչափ նախատեսելու¹⁵:

Նշված մեխանիզմը հնարավորություն է տալիս ներդնել առավել լիբերալ և ճկուն համակարգեր, ինչն իր հերթին կօգնի խթանել օտարերկրյա ներդրողներին Հայաստանի Հանրապետությունում հիմնել ընկերություններ կամ մասնակցություն ունենալ ընկերություններում, որոնք կգործեն ժամանակակից, զարգացած կորպորատիվ իրավունքի տրամաբանությամբ:

1.3. խոշոր գործարքների կարգավորումների ազատականացում.

Ներկայումս ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսը չգերազանցող գույքին առնչվող խոշոր գործարքներ կնքելու վերաբերյալ որոշման ընդունումը վերապահված է ընկերության տնօրենների խորհրդին (այսուհետ՝ խորհուրդ): Սակայն, այսպիսի կարգավորումը որոշակի խոչընդոտներ է ստեղծում այդպիսի գործարքների հաճախակի և արագ կնքելու համար: Ավելին, եթե ընկերությունում խորհուրդ ձևավորված չէ, ապա այդպիսի որոշման կայացումը ինքնաբերաբար վերապահվում է ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին (այսուհետ՝ ժողով): Սակայն, պետք է նկատի ունենալ, որ միշտ չէ, որ բաժնետերերը ցանկանում են այդքան շատ ներգրված լինել գործարքների կնքման գործընթացին՝ ներգրավվելով հաճախ ձևական բնույթ կրող գործընթացներում: Նշվածը կարող է հատկապես կարևոր լինել նոր ստեղծված ընկերությունների համար, քանի որ ենթադրվում է, որ վերջիններս ընկերության գործունեության սկզբնական փուլում չեն տիրապետում մեծածավալ ակտիվների, համապատասխանաբար հաճախ են կնքում իրենց ակտիվների 25 տոկոսը գերազանցող գործարքներ: Հետևաբար, այս տեսանկյունից ավելի նպատակահարմար կլինի, որպեսզի ընկերությանը ընձեռնվի հնարավորություն տարատեսակ գործարքներ կնքել՝ առանց համապատասխանաբար խորհրդի կամ ժողովի որոշման:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ըստ Համաշխարհային բանկի Doing business ծրագրի՝ «Փոքր բաժնետերերի պաշտպանությունը» մեթոդոլոգիան հատկապես կարևորում է բաժնետերերի իրավունքները կորպորատիվ կառավարման ոլորտում: Մասնավորապես, առանձին ենթացուցիչով գնահատվում է, թե արդյոք բաժնետերերը հնարավորություն ունեն քվեարկել և որոշում կայացնել, երբ

¹⁴ԵՄԿԱ, էջեր՝ 95-96

¹⁵ԵՄԿԱ, էջեր՝ 95-97

գործարքը վերաբերում է ընկերության 51 տոկոս և ավելի ակտիվներին¹⁶: Հետևաբար, ընկերության ակտիվների մինչև 50 տոկոսը կազմող գույքին առնչվող գործարքների կնքումը գործադիր մարմնի կողմից չի խոչընդոտում նաև այս ցուցիչով դրական գնահատականի ապահովմանը:

Միևնույն ժամանակ, նկատենք, որ, չնայած այն հանգամանքին, որ ժողովի կողմից հաստատման ենթակա խոշոր գործարքների 50%-անոց շեմը միջազգային փորձի շրջանակներում համարվում է դրական պրակտիկա, նաև առկա են այնպիսի երկրներ, որոնք համանման կարգավորումներ են նախատեսում միայն ցուցակված ընկերությունների համար: Օրինակ, Անգլիայի օրենսդրությունը չի պարունակում առանձին կարգավորումներ՝ նվիրված ընկերության կողմից կնքվող խոշոր գործարքներին: Մասնավորապես, «Ընկերությունների մասին» ակտի (Companies Act 2006)՝ 190-րդ հոդվածի (substantial property transactions: requirement of members' approval) վերլուծությունից պարզ է դառնում, որ ՄԹ-ում «խոշոր գործարքներ» եզրույթն ըստ էության նույնացվում է շահագրքվածության առկայությամբ գործարքների հետ, քանզի ընկերության բաժնետերերի կողմից հաստատման ենթակա են միայն այն «խոշոր գործարքները», որոնց մյուս կողմն է հանդիսանում ընկերության տնօրենը կամ վերջինիս հետ փոխկապակցված անձը: Ընդգծենք, սակայն, որ այլ կանոններ են գործում ցուցակված ընկերությունների նկատմամբ: Մասնավորապես, համաձայն կարգավորող մարմնի (Financial Conduct Authority) ցուցակման կանոնների (կանոն 10), բաժնետերերի համաձայնությունն անհրաժեշտ է բոլոր այն դեպքերում, երբ ցուցակված ընկերությունը կնքում է գործարք, որը ենթադրում է ընկերության կամ ակտիվների ձեռքբերում կամ օտարում, եթե.

- 1) գործարքի արժեքը հավասար է ցուցակված ընկերության ակտիվների առնվազն 25%-ին,
- 2) գործարքից բխող շահույթը հավասար է ցուցակված ընկերության շահույթի առնվազն 25%-ին,
- 3) գործարքի արդյունքում վճարման ենթակա գումարը հավասար է ցուցակված ընկերության հասարակ բաժնետոմսերի ընդհանուր շուկայական արժեքի առնվազն 25%-ին,
- 4) ցուցակված ընկերության կողմից ձեռքբերվող ընկերության համախառն կապիտալը արժեքը հավասար է ցուցակված ընկերության համախառն կապիտալի առնվազն 25%-ին: (FCR, Ցուցակման կանոններ, կանոն 10.5.1)

Գերմանիայի «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքը (Aktiengesetz) ևս չի պարունակում խոշոր գործարքների կարգավորման վերաբերյալ հատուկ դրույթներ:

Մյուս կողմից, օրինակ, Նոր Զելանդիայի «Ընկերությունների մասին» ակտի (Companies Act, 1993) համաձայն (հոդված 129)՝ որպես «խոշոր» է սահմանում այն գործարքները (major transactions), որոնք ենթադրում են ակտիվների ձեռքբերում կամ ընկերության ակտիվների տնօրինում կամ այնպիսի իրավունքների ձեռքբերում կամ պարտավորությունների ստանձնում, որոնց արժեքը գերազանցում է մինչ գործարքն ընկերության ունեցած ակտիվների արժեքի 50%-ը: Միաժամանակ, խոշոր գործարքները հաստատվում են բաժնետերերի ժողովի որոշմամբ: Այս կանոնից բացառություն է նախատեսված ընկերության գույքը որպես ապահովման միջոց տրամադրելու հետ կապված գործարքների համար:

Վրաստանի «Ձեռնարկատիրության մասին» օրենքի (Law on Entrepreneurs) 54-րդ հոդվածի համաձայն՝ բաժնետերերի ժողովը որոշում է կայացնում գույքի գնման, ընկերության գույքի օտարման կամ ծանրաբեռնման մասին գործարքների վերաբերյալ, եթե գույքի արժեքը գերազանցում է ընկերության ակտիվների արժեքի 50%-ը (ընդ որում, հնարավորություն է ստեղծված կանոնադրությամբ

¹⁶ <https://www.doingbusiness.org/en/methodology/protecting-minority-investors>

այս շենք փոխելու), բացառությամբ ընկերության բնականոն տնտեսական գործունեության շրջանակում կատարվող գործարքների:

Խոշոր գործարքների բավականին բարձր շեն է նախատեսված նաև ԱՄՆ «Կորպորացիաների մոդելային ակտում» (բաժին 12.02), որի համաձայն, ակտիվների վաճառքի, վարձակալության, փոխանակման կամ այլ կերպ օտարման գործարքը պահանջում է ընկերության բաժնետերերի հաստատումը, եթե գործարքի արդյունքում ընկերությունը կմնա առանց էական տնտեսական գործունեության (significant continuing business activity): Համարվում է, որ ընկերությունը պահպանել է իր տնտեսական գործունեության էական մասը, եթե գործարքից հետո ընկերության և վերջինիս դուստր ընկերությունների ակտիվները միասին կազմում են նախորդ ֆինանսական տարվա ակտիվների կամ չհարկված շահույթի առնվազն 25%-ը: Նշված կանոնից բացառություն է նախատեսված հետևյալ դեպքերի համար՝ 1) բնականոն տնտեսական գործունեության շրջանակում կատարված գործարքները, 2) ընկերության ակտիվների տրամադրումը որպես պարտավորությունների կատարման ապահովման միջոց, 3) ակտիվների փոխանցումը դուստր ընկերությանը, 4) ընկերության գույքի բաշխումը բաժնետերերի միջև: Ընդ որում, գործարքը բաժնետերերի կողմից հաստատվելուց առաջ որպես կանոն պետք է նախապես հաստատվի խորհրդի կողմից:

Ի լրումն առանձին երկրների փորձի, որոնք, ըստ էության, թույլ են տալիս խորհրդի իրավասությունների, այդ թվում՝ ընկերության գույքի ձեռքբերման և օտարման հետ կապված գործարքների հաստատման պատվիրակում, հարկ է նշել, որ համաձայն կորպորատիվ կառավարման SՀԶԿ սկզբունքների (տե՛ս *խորհրդի իրավասությունների* սկզբունքի D ենթասկզբունք, մաս 1 և 6)՝ ընկերության խորհուրդը պետք է իրականացնի որոշակի առանցքային գործառնություններ, որոնց շարքին է դասվում նաև կապիտալ ծախսեր և ընկերության ակտիվների «վատնման» ռիսկեր ենթադրող գործարքների վերահսկումը:

1.4. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի, տնօրենների խորհրդի և գործադիր մարմնի լիազորությունների պատվիրակման ազատականացումը.

Ներկայումս Օրենքը սահմանում է ժողովի և խորհրդի «բացառիկ» իրավասությունները, ինչն անհնարին է դարձնում մի շարք որոշումների կայացման իրավունքը խորհրդին կամ գործադիր մարմնին պատվիրակելու հնարավորությունը: Այնուամենայնիվ, կան մի շարք ընկերություններ, որտեղ բաժնետերերը չեն ցանկանում ակտիվորեն ներգրավված լինել ընկերության կառավարման և առօրյա վերահսկման աշխատանքներում՝ նախընտրելով հարցերի հնարավորինս լայն շրջանակ պատվիրակել տնօրենների խորհրդին կամ, նույնիսկ, տնօրենին: Կան նաև ներդրողներ, որոնք ցանկանում են առավել շատ ներգրավված լինել ընկերության կառավարմանը վերաբերող հարցերի լուծմանը:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ Հայաստանի Հանրապետությունում շատ ընկերություններ չունեն խորհուրդներ, ինչը լրացուցիչ բարդություններ է առաջացնում ժողովի համար, հատկապես, երբ այդ ընկերություններն ունեն ուժեղ և վստահելի տնօրեններ:

Հայաստանի Հանրապետությունում կորպորատիվ իրավունքի խիստ կարգավորումները և կառավարման հարցերում ձկունության գործիքների բացակայությունը գործարար շրջանակներում հաճախ մտահոգությունների առիթ են հանդիսանում:

Արդյունքում ակնկալվում է Հայաստանում կորպորատիվ ոլորտը դարձնել առավել մատչելի և գրավիչ թե՛ տեղական, թե՛ օտարերկրյա ներդրողների համար՝ միաժամանակ ապահովելով բաժնետերերի իրավունքների պաշտպանության գործունե մեխանիզմներ:

Ճկունության պայմաններում հնարավոր է ստեղծել տարբեր նպատակներ հետապնդող ընկերություններ՝

- Ընկերություններ, որտեղ բաժնետերերը սերտորեն ներգրավված են ընկերության կառավարման և վերահսկման գործընթացներում, և

- Ընկերություններ, որտեղ բաժնետերերը նախընտրում են չներքաշվել առօրյա գործընթացների և ձևական բնույթ կրող այլ գործընթացների մեջ՝ մասնակցելով միայն ընկերության ռազմավարական նշանակության հարցերի կայացմանը և շահույթ ստանալով:

Տնտեսապես զարգացած մի շարք երկրներում ընդունված մոտեցում է, որ բաժնետերերը պետք է հնարավորություն ունենան ընկերությանը տալ այն կառուցվածքն ու իրականացնել գործառնությանին իրավասությունների այն բաշխումը, որը նրանք առավել նպատակահարմար են գտնում: Իսկ նման իրավասությունն իրացնելու միջոցը ճկուն կանոնադրություն մշակելու հնարավորությունն է: Այս մասին է վկայում նաև ԵՄԿԱ-ի վերլուծությունը, որի հիմքում ևս այն տրամաբանությունն է, որ ժողովի ներգրավվածությունը անհրաժեշտ է այնպիսի որոշումներով, որոնք կարող են որոշիչ դեր ունենալ ընկերության հետագա զարգացման համար կամ որոնք ուղղակի առնչվում են նրանց շահերին, սահմանափակում նրանց իրավունքները կամ ստեղծում նոր պարտավորություններ¹⁷:

Հետևաբար, իրավասությունների բաշխման ճկուն համակարգի ներդրումը հնարավորություն է տալիս ներդնել և կիրառել կորպորատիվ կառավարման սկզբունքներ, սահմանել կառավարման տարբեր մարմինների միջև պատասխանատվության և պարտավորությունների բաշխումը և իրականացնել առավել արդյունավետ կառավարում, ինչն իր հերթին խթանում է ներդրումները և երկիրը դարձնում առավել գրավիչ՝ կորպորատիվ կառավարման և կորպորատիվ իրավունքի համատեքստում:

1.5. Աշխատողների բաժնետիրացման ճկուն համակարգ.

Վերջին տարիներին տարբեր երկրներում լայն տարածում է ստացել աշխատակիցների բաժնետիրացման պլանների և ծրագրերի կիրառումը (Restricted stock units): Սակայն Հայաստանի Հանրապետությունում աշխատակիցների բաժնետիրացումը ներկայիս կարգավորումների համաձայն հնարավոր է շատ խիստ կարգավորումների կիրառմամբ և միայն հետզնված բաժնետոմսերի հաշվին:

Հավատարմության և երկարամյա աշխատանքի դիմաց աշխատողներին ընկերության բաժնետոմսերով պարգևատրելու ինստիտուտը բավականին տարածված գործիք է, որը հնարավորություն է տալիս խրախուսել աշխատակիցներին և կանխել աշխատուժի արտահոսքը, ինչն էլ, իր հերթին, կարող է անուղղակիորեն կանխել մասնագիտական արտագաղթը Հայաստանի Հանրապետությունից: Աշխատողների համար բաժնետիրացման համապատասխան պլաններ և ծրագրեր մշակելու հնարավորությունը նաև բանիմաց, հավատարիմ և որակյալ մասնագետներ ներգրավելու միջոց է:

1.6. Գրանցման պահին կանոնադրական կապիտալի վճարված լինելու իրավական ֆիկցիա.

Օրենքի ներկայիս կարգավորումները պահանջում են, որ պետական գրանցման պահին ընկերության կանոնադրական կապիտալը լինի վճարված: Միաժամանակ, ընկերությունը կարող է ունենալ դրամարկը՝ կանխիկ մուտքերի համար, կամ բանկային հաշվեհամար՝ անկանխիկ մուտքերի համար, միայն դրա պետական գրանցումից հետո: Արդյունքում, նման կարգավորումը հանդիսանում է իրավական ֆիկցիա և գործնականում կիրառելի չէ: Ավելին, գործնականում տեղի է ունենում

¹⁷Առավել մանրամասն տես ԵՄԿԱ, էջեր՝ 258-259

հակառակը. Ընկերության կանոնադրական կապիտալը փաստացի համալրվում է ընկերության պատշաճ կարգով պետական գրանցման ենթարկվելուց հետո կամ, երբեմն, մինչև ընկերության գրանցումը բանկերում բացվում է տարանցիկ կամ հատուկ հաշիվ, որի միջոցներով կվճարվի կանոնադրական կապիտալը:

Այս տեսանկյունից հետաքրքրական են նաև ռուսական կարգավորումները: Այսպես, Ռուսաստանի Դաշնության «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ «Ընկերության հիմնադրման ժամանակ վերջինիս բաժնետոմսերի դիմաց վճարումն իրականացվում է հիմնադիրների կողմից այդ բաժնետոմսերի անվանական արժեքից ոչ ցածր արժեքով»: Իր հերթին, 34-րդ հոդվածով սահմանվում է, որ «Ընկերության հիմնադրման ժամանակ տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց վճարումը պետք է ամբողջությամբ իրականացվի ընկերության պետական գրանցման օրվանից մեկ տարվա ընթացքում, եթե ընկերության հիմնադրման մասին պայմանագրով ավելի կարճ ժամկետ նախատեսված չէ»: Ընդ որում, օրենքով սահմանվում է նաև, որ հիմնադրման ժամանակ տեղաբաշխված բաժնետոմսերի առնվազն 50%-ը պետք է վճարվի պետական գրանցման պահից երեք ամսվա ընթացքում, իսկ սահմանված ժամկետում վճարումը չկատարելու դեպքում չվճարված բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվում է ընկերությանը: Հատկանշական է, որ, ըստ ռուսական օրենսդրության, Ընկերության ստեղծման մասին պայմանագիրը կարող է նախատեսել բաժնետոմսերի վճարման պարտավորությունը սահմանված ժամկետում չկատարելու համար տույժեր:

1.7. Բացասական կապիտալով ընկերությունների կարգավորման հարցը

Ներկայումս Օրենքը նախատեսում է, որ եթե ընկերության երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարում նրա զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից, ապա ընկերությունը պարտավոր է նվազեցնել իր կանոնադրական կապիտալը: Սակայն, հաշվի առնելով գործունեության մի շարք տեսակների առանձնահատկությունները, այդպիսի գործունեության սկզբնական հատվածում բիզնես գործընթացները ստիպում են ընկերությանը գործել բացասական կապիտալով. օրինակ՝ հետազոտությամբ կամ երկարաժամկետ ծրագրերի ներդրմամբ զբաղվող ընկերությունները: Նման դեպքերում ակնկալվում է, որ ընկերությունը կսկսի շահույթ ձևավորել իր գործունեությունը սկսելուց որոշակի ժամանակ անց միայն: Ուստի, նման դեպքերում, երբ ընկերության մոտ առկա չեն անվճարունակության հիմքեր, իսկ բացասական կապիտալի առկայությունը պայմանավորված է գործունեության առանձնահատկություններով, ըստ էության, նպատակահարմար չէ ընկերությանը պարտադրել նվազեցնել իր կանոնադրական կապիտալը կամ լուծարվել:

Մի շարք եվրոպական երկրներ, ինչպես նաև ԵՄԿԱ-ն, նման դեպքերում նախատեսում են պարտավորություն՝ արտահերթ ժողով հրավիրելու, որն էլ իրավասու կլինի որոշել ընկերության հետագա քայլերը. օրինակ՝ Իտալիան կամ Դանիան նախատեսում են պարտադիր ժողովի հրավիրում, եթե ընկերությունը սպառել է իր կապիտալի համապատասխանաբար 50 կամ 30 տոկոսը¹⁸:

Նշված կանոնն (*recapitalize or liquidate*) ի սկզբանե ամրագրվել է ԵՄ կորպորատիվ իրավունքը կարգավորող «Երկրորդ դիրեկտիվում»: Կանոնը սահմանափակում էր ընկերությունում՝ օրենքով սահմանված կանոնադրական կապիտալի նվազագույն շեմը գերազանցող չափով կորուստների ձևավորումը՝ հետևապես արդիական լինելով այն դեպքում, երբ օրենքով սահմանված է ընկերությունների կանոնադրական կապիտալի նվազագույն չափ:

¹⁸Տե՛ս ավելին ԵՄԿԱ, էջ 199

ԵՄ մի շարք երկրների ներքին օրենսդրություններում *recapitalize or liquidate* կանոնն ամրագրվել է առավել խիստ կերպով՝ բաժնետերերի արտահերթ ժողով հրավիրելու, կապիտալի համալրման/կանոնադրական կապիտալի նվազեցման կամ լուծարման պահանջներ սահմանելով նաև այն դեպքերի համար, երբ ընկերության գուտ ակտիվների արժեքը պակասում է կանոնադրական կապիտալի չափից:

Ընկերության կանոնադրական կապիտալի արժեքի որոշակի չափով կորուստներ կրելու դեպքերը տարբեր կերպ են կարգավորվում եվրոպական երկրների օրենսդրությամբ, սակայն ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ առկա է երկու այլընտրանք՝ պարզապես բաժնետերերի արտահերթ ժողովի հրավիրում կամ կանոնադրական կապիտալի չափի նվազեցում/լուծարում: Առավել խիստ՝ կանոնադրական կապիտալի չափի նվազեցման կամ լուծարման պահանջ սահմանված է Իտալիայում, Ֆրանսիայում, Իսպանիայում և Շվեդիայում:

Մասնավորապես, Իտալիայի Քաղաքացիական օրենսգրքի 2446 և 2482*bis* հոդվածների համաձայն՝ եթե կորուստների արդյունքում ընկերության կանոնադրական կապիտալը կրճատվում է ավելի քան 1/3-ով, ապա տնօրենների խորհուրդը պարտավոր է անհապաղ գումարել բաժնետերերի ժողով համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար: Եթե դրան հաջորդող ֆինանսական տարվա ընթացքում կորուստները չեն նվազում ընկերության կանոնադրական կապիտալի 1/3-ից, ապա ընկերությունը պարտավոր է նվազեցնել կանոնադրական կապիտալը կրած վնասներին համամասնորեն: Հակառակ դեպքում տնօրենների խորհուրդը պարտավոր է դիմել դատարան՝ կապիտալի նվազեցման մասին որոշում կայացնելու պահանջով:

Ֆրանսիայի Կոմերցիոն օրենսգրքի L225-248 հոդվածի համաձայն՝ կանոնադրական կապիտալի 50%-ից ավելիի չափով կորուստներ կրելու դեպքում ընկերության խորհուրդը կամ գործադիր մարմինը պարտավոր է ֆինանսական հաշվետվությունները հաստատելու օրվանից չորս ամսվա ընթացքում հրավիրել բաժնետերերի արտահերթ ժողով՝ կրած կորուստները բացահայտելու և որոշելու, թե արդյո՞ք անհրաժեշտ է կայացնել լուծարման մասին որոշում: Այն դեպքում, երբ լուծարման մասին որոշում չի կայացվում, ընկերությունը պետք է ոչ ուշ, քան մինչև կորուստների գրանցմանը հաջորդող երկրորդ ֆինանսական տարվա ավարտը նվազեցնի իր կանոնադրական կապիտալը կրած կորուստներին համամասնորեն, բացառությամբ, եթե ընկերության գուտ ակտիվների արժեքը մինչ այդ հավասարվում է կանոնադրական կապիտալի առնվազն 50%-ին: Եթե նշված դեպքերում բաժնետերերի արտահերթ ժողով չի հրավիրվում կամ ընկերության կանոնադրական կապիտալի չափը չի նվազեցվում, ցանկացած շահագրգիռ անձ իրավունք է ստանում դատական կարգով պահանջել ընկերության լուծարումը:

Մանրամասն կարգավորումներ են նախատեսված Շվեդիայի «Ընկերությունների մասին» օրենքի 25(13) -25(20) հոդվածներում: Այստեղ ևս գուտ ակտիվների՝ կանոնադրական կապիտալի 50%-ից պակաս լինելու դեպքը ենթադրում է, որ ընկերության խորհուրդը պետք է հրավիրի բաժնետերերի արտահերթ ժողով, որտեղ կքննարկվի ընկերության լուծարման հարցը: Այն դեպքում, երբ այսպես կոչված «առաջին ժողովը» չի կայացնում լուծարման մասին որոշում, ապա խորհուրդը պարտավոր է հաջորդող 8 ամսվա ընթացքում հրավիրել երկրորդ ժողով: Ընկերությունը ենթակա է դատական կարգով լուծարման, եթե նշված ժամկետում բաժնետերերի երկրորդ ժողովի չի գումարվում կամ ժողովը գումարվում է և չի կայացվում լուծարման մասին որոշում, այն դեպքում, երբ ընկերության գուտ ակտիվների արժեքը չի վերականգնվել մինչև սահմանված շեմը:

1.8. Սկսնակ ընկերությունների (start-up) կողմից չափահովված պարտատոմսերի թողարկման հնարավորությունը

Օրենքի 40-րդ հոդվածի համաձայն՝ առանց ապահովման պարտատոմսերի թողարկումը թույլատրվում է Ընկերության պետական գրանցումից առնվազն երեք տարի հետո և պայմանով, որ սահմանված կարգով հաստատված լինեն Ընկերության առնվազն երկու տարեկան հաշվեկշիռները: Այս սահմանափակման արդյունքում մի շարք նոր ստեղծված ընկերություններ զրկվում են պարտատոմսերի միջոցով ֆինանսավորում ներգրավելու հնարավորությունից, քանի որ ակնհայտ է, որ նման ընկերությունները չունեն բավականաչափ ակտիվներ պարտատոմսերի ապահովում տրամադրելու համար: Սակայն նման հնարավորության նախատեսումը, իր հերթին, նույնպես կնպաստի տարբեր ֆինանսական գործիքների միջոցով ներդրումների կատարմանը, օրինակ, սփյուռքի ներկայացուցիչների (diaspora bond) կողմից պարտատոմսերի միջոցով ներդրումներ կատարելուն:

1.9. Կոտորակային բաժնետոմսերը պահելու հնարավորությունը

Օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բաժնետոմսն անբաժանելի է: Այլ կերպ Օրենքի գործող խմբագրությամբ թույլատրվում է տիրապետել, օգտագործել և տնօրինել միայն ամբողջական բաժնետոմսեր: Միևնույն ժամանակ, Օրենքով նախատեսված դեպքերում, մասնավորապես՝ բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի) դեպքում, նախատեսված է, որ առաջանում են կոտորակային բաժնետոմսեր: Ուստի, նման դեպքերում Օրենքով նախատեսվել է բաժնետոմսերի պարտադիր հետզնման պահանջ, որը, սակայն, գործնականում հանգեցնում է տարատեսակ չարաշահումների և բաժնետերերի իրավունքների խախտումների, երբ կոնսոլիդացիան իրականում օգտագործվում է բաժնետերերից ընկերությունից դուրս մղելու նպատակներով:

Իր հերթին, նկատենք, որ կոտորակային բաժնետոմսերը պահելու և դրանք շրջանառության մեջ դնելու հնարավորությունը թե՛ տեսականորեն, թե՛ գործնականում բացառված երևույթ չէ, և մի շարք երկրներում, այդ թվում՝ զարգացած կորպորատիվ մշակույթ ունեցող, թույլատրվում է տիրապետել, օգտագործել և տնօրինել կոտորակային բաժնետոմսեր: Նման մոտեցումը պայմանավորված է այնպիսի գամանքով, որ կոտորակային բաժնետոմսերը պահելու և դրանք տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու հնարավորությունը նաև օպտիմալացնում է կորպորատիվ գործընթացները՝ նվազեցնելով նյութական, ժամանակի և այլ ծախսերը¹⁹: Ուստի, կոտորակային բաժնետոմսերի շրջանառունակությունը ինքնանպատակ չէ և ուղղված է ինչպես կիրառվող չարաշահումների բացառմանը, այնպես էլ պրակտիկ խնդիրների լուծմանը:

Այսպես, կոտորակային բաժնետոմսերի շրջանառունակությունը իր տարբեր դրևորումներով հայտնի է զարգացած կորպորատիվ հարաբերությունների ունեցող տարբեր երկրներում²⁰. այն թույլատրվում է Ռուսաստանում²¹, Էստոնիայում²², Մոլդովայում չի սահմանվում կոնսոլիդացիայի արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետզնման պահանջը²³: Այս ինստիտուտը բավականին տարածված և զարգացած է նաև ԱՄՆ-ում. օրինակ՝ այստեղ գործում են մի շարք հարթակներ, որտեղ թույլատրվում է կոտորակային բաժնետոմսերի շրջանառությունը (Robinhood, Stockpile, M1 Finance և այլն):

2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

¹⁹ А.Глушецкий, Институт дробных акций – востребованная новация корпоративной практики, էջ 1

²⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 9

²¹ Закон об акционерных обществах, статья 25, пункт 3

²² Estonia – Commercial Code, Passed 15.02.1995, Article 152

²³ Moldova – Law on Joint-Stock Companies, Article 81

Վերոնշյալ հիմնավորումները հաշվի առնելով և պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում գործարար միջավայրի բարելավման, կորպորատիվ հարաբերությունների իրավակարգավորումները ժամանակի պահանջներին համահունչ դարձնելու պահանջով՝ սույն նախագծով առաջարկվում է՝

1) հնարավորություն ընձեռել ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 95 և ավելի տոկոսին տիրապետող բաժնետիրոջը ձեռք բերել ընկերության մյուս բաժնետերերին պատկանող ձայնի իրավունք տվող մնացած բաժնետոմսերը՝ համապատասխան պահանջի մեջ նշված գնով: Միաժամանակ, հնարավորություն է տրվում փոքր բաժնետերերին, ովքեր տիրապետում են ընկերության ձայնի իրավունք տվող մինչև 5 տոկոս բաժնետոմսերին, պահանջել խոշոր՝ 95 և ավել տոկոս ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատիրոջը, գնել իրենց բաժնետոմսերը և դուրս գալ ընկերությունից:

2) կատարել համակարգային փոփոխություններ, որոնք առնչվում են բաժնետոմսերի հասարակ (սովորական) և արտոնյալ տեսակների դասեր նախատեսելու հնարավորությանը և դրանից բխող իրավունքներին: Մասնավորապես, առաջարկվող փոփոխություններն միտված են ընկերություններին ու դրանց բաժնետերերին հնարավորություն ընձեռել ցանկության դեպքում իրենց կանոնադրությամբ սահմանել նաև հասարակ բաժնետոմսերի դասեր՝ համապատասխան տարբերակված իրավունքներով՝ ներառյալ այդպիսի բաժնետոմսերը տիրապետողներին մեկից ավելի ձայն տրամադրելու իրավունքը:

3) խոշոր գործարք կնքելու մասին որոշման կայացման իրավագործությունը (ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 և ավելի տոկոսը կազմող գույքի ձեռքբերում կամ օտարում) վերապահել միայն ժողովին, իսկ ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված այլ գործարքների վերաբերյալ (ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի մինչև 50 տոկոսը կազմող գույքի ձեռքբերում կամ օտարում) նախատեսել առանձին գլուխ, որով այդպիսի գործարքներ կնքելու իրավասությունը բացի ընկերության տնօրենների խորհրդից հնարավոր կլինի պատվիրակել նաև ընկերության գործադիր մարմնին՝ կանոնադրությամբ սահմանված դեպքերում: Արդյունքում, այն ընկերությունները, որոնք ցանկանում են առավել լայն լիազորություններ պատվիրակել իրենց գործադիր մարմնին, կունենան այդպիսի հնարավորություն՝ ընկերության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում:

4) որոշակի լիազորությունների և որոշումների կայացման իրավունքի պատվիրակման հնարավորություն ինչպես խորհրդին, այնպես էլ գործադիր մարմնին՝ այդպիսով նախատեսելով իրավասությունների պատվիրակման լիբերալ և ճկուն հմակարգ: Առաջարկվում է մասամբ հրաժարվել «բացառիկ իրավասության» գաղափարից՝ հնարավորություն տալով ընկերություններին իրենց կանոնադրություններով նախատեսված դեպքերում և չափով՝ հաշվի առնելով նաև սահմանվող բացառությունները, տարբեր լիազորություններ պատվիրակել ժողովից խորհրդին, իսկ խորհրդից՝ գործադիր մարմնին: Ընդ որում՝ բաժնետերերի իրավունքներին ու շահերին առնչվող որոշումների կայացումը, ինչպես նաև այնպիսի հարցերի լուծումը, որոնք ստեղծում են նոր պարտավորություններ բաժնետերերի համար կամ սահմանափակում են նրանց հնարավորությունները միևնույն է մնում են միայն ժողովի ենթակայության հարցեր՝ այդպիսով պաշտպանելով բաժնետերերի իրավունքները: օրինակ՝ կանոնադրական կապիտալի նվազեցումը կամ ավելացումը, կանոնադրության այնպիսի փոփոխությունները, որոնք վերաբերում են բաժնետերերի իրավունքներին և պարտականություններին, բաժնետոմսերի համախմբումը, ընկերության վերակազմակերպումը կամ լուծարումը: Միաժամանակ, մնացած բոլոր այն իրավասությունները, որոնք ուղղակիորեն չեն ազդում բաժնետերերի իրավունքների

և շահերի վրա առաջարկվում է կանոնադրությամբ նախատեսված դեպքերում պատվիրակել խորհրդին կամ գործադիր մարմնին.

5) ներդնել աշխատողների բաժնետիրացման առավել ձկուն մեխանիզմներ՝ որոշումների կայացման հիմնական իրավասությունը վերապահելով կանոնադրությանը կամ ժողովին: Ընդ որում, աշխատակիցների բաժնետիրացումը առաջարկվում է դիտարկել որպես Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված խրախուսանքի միջոց.

6) վերանայել Օրենքը՝ վերացնելով Ընկերության գրանցման ժամանակ դրա կանոնադրական կապիտալի վճարված լինելու իրավական ֆիկցիան և սահմանելով կանոնադրական կապիտալի համալրման ժամկետ՝ միաժամանակ նախատեսելով սահմանված ժամկետում կանոնադրական կապիտալը չվճարելու դեպքում վրա հասնող հետևանքները.

7) բացասական կապիտալի առկայության դեպքում անհապաղ հրավիրել արտահերթ ընդհանուր ժողով, հասկանալ դրա պատճառները, և դրանից հետո միայն կայացնել որոշում՝ կանոնադրական կապիտալը նվազեցնելու, լուծարվելու կամ գործունեությունը շարունակելու վերաբերյալ: Միաժամանակ, բարեխիղճ պարտատերերի շահերը ապահովելու համար առաջարկվում է սահմանել ընկերության պարտավորությունը՝ իր պարտատերերին հրապարակային ծանուցել բացասական կապիտալով գործունեությունը շարունակելու մասին ժողովի կայացրած որոշման մասին.

8) վերացնել առանց ապահովման պարտատոմսերի թողարկման եռամյա ժամկետի պայմանը.

9) Օրենքով նախատեսված դեպքերում կոտորակային բաժնետոմսեր առաջանալու դեպքում թույլատրել բաժնետերերին պահպանել այդ բաժնետոմսերը՝ ապահովելով դրանք տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու հնարավորությունը: Ընդ որում, կոտորակային բաժնետոմսերի սեփականատերերին տրվում են նույն իրավունքները, ինչ ամբողջական բաժնետոմսերի սեփականատերերին՝ իրենց կոտորակային բաժնետոմսի կոտորակին (մասին) համամասնորեն.

10) ներդնել կորպորատիվ հարաբերությունների ժամանակակից կարգավորմանն ուղղված այլ լուծումներ:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք և նրանց դիրքորոշումը.

Նախագիծը մշակվել է «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի կողմից՝ «Adwise Consulting» բիզնես և իրավաբանական խորհրդատվական ընկերության և «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» փակ բաժնետիրական ընկերության (ANIF) հետ համատեղ:

4. Ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է կորպորատիվ իրավունքին վերաբերող կարգավորումները համապատասխանեցնել ժամանակի զարգացումներին: Ակնկալվում է հնարավորություն ստեղծել թե՛ տեղական, թե՛ օտարերկրյա ներդրողների համար առավել արդյունավետ իրականացնելու ընկերությունների ֆինանսավորումը և՛ պարտքի, և՛ բաժնեմասնակցության միջոցով, ստեղծել փոքր բաժնետերերի շահերի պաշտպանության լրացուցիչ գործիքներ՝ միաժամանակ պահպանելով հավասարակշռությունը փոքր և խոշոր բաժնետերերի շահերի միջև, նախատեսել ընկերության կառավարման գործընթացում ձկունության կիրառման հնարավորություններ, անհատականացված մոտեցումներ յուրաքանչյուր տեսակի և կատեգորիայի ներդրողների և բաժնետերերի համար: Իր հերթին, անհատականացված մոտեցում ցուցաբերելու

հնարավորությունը կարող է դառնալ Հայաստանի Հանրապետության ներդրումային դաշտի այցեքարտերից մեկը:

5. Նախագծի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը, ինչպես նաև լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտությունը և պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվելիք փոփոխությունները

Նախագծի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտեր ընդունել անհրաժեշտ չէ, ինչպես նաև պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի սեպտեմբերի 25-ի ՀՕ-232 օրենքի (այսուհետ՝ Օրենք) [2-րդ հոդվածի 5-րդ մասում «պետական կառավարման» բառերից հետո լրացնել «համակարգի» բառը:](#)

Հոդված 2. Օրենքի 12-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը ուժը կորցրած ճանաչել.

2) 2-րդ մասում «Հիմնադիր ժողովն» բառերը փոխարինել «Ընկերության բաժնետերերի հիմնադիր ժողովը (այսուհետ՝ հիմնադիր ժողով)» բառերով.

[3\) 5-րդ մասի ամբողջ տեքստում «պետական կառավարման» բառերից հետո լրացնել «համակարգի» բառը:](#)

Հոդված 23. Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 34. Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1) «դ» և «ե» կետերում «, ինչպես նաև արտոնյալ բաժնետոմսերի դասերը» բառերը փոխարինել «և դասերը» բառերով,

2) լրացնել նոր «թ.1» կետ.

«թ.1) Ընկերության բաժնետոմսերով դրանց սեփականատերերին տրամադրվող ձայների առավելագույն քանակը.»:

Հոդված 45. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի ամբողջ տեքստում «սեփականատերերի» բառերից հետո հանել «կամ» բառերը, իսկ «խորհրդի միաձայն որոշմամբ» բառերից հետո լրացնել «, եթե այդ իրավասությունը սույն օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան վերապահված է խորհրդին» բառերը:

Հոդված 56. Օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասում, 49-րդ հոդվածի 1-ին մասում, 56-րդ հոդվածում, 65-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետում «տեսակի (դասի)» բառերը փոխարինել «տեսակի կամ դասի» բառերով:

Հոդված 67. Օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի երրորդ պարբերությունում «բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր հանդիսացող» բառերը փոխարինել «բաժնետոմսերով տրամադրվող ձայների քանակի առնվազն 10 տոկոսին տիրապետող» բառերով:

Հոդված 78. Օրենքի 31-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի՝

ա. առաջին պարբերության առաջին նախադասությունից հանել «փաստաթղթային (տպագրական եղանակով պատրաստված) կամ ոչ փաստաթղթային ձևի» բառերը.

բ. առաջին պարբերության երկրորդ նախադասությունը ուժը կորցրած ճանաչել.

2) 2-րդ մասի՝

ա. առաջին պարբերությունում «տեսակին» բառը փոխարինել «դասին, իսկ դրանց բացակայության դեպքում միևնույն տեսակին» բառերով.

3) 2-րդ մասի բ. 2-րդ և 3-րդ պարբերությունները ուժը կորցրած ճանաչել.

43) 3-րդ մասում «տեսակի» բառը փոխարինել «դասի, իսկ դրանց բացակայության դեպքում միևնույն տեսակի» բառերով:

Հոդված 89. Օրենքի 32-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 32. Ընկերության բաժնետոմսերը

1. Ընկերությունը կարող է թողարկել ոչ փաստաթղթային ձևի մեկ կամ մի քանի դասի հասարակ (սովորական) և արտոնյալ բաժնետոմսեր: Ընկերության թողարկած արտոնյալ բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեքը չպետք է գերազանցի նրա կանոնադրական կապիտալի քսանհինգ տոկոսը:

2. Սույն օրենքի իմաստով բաժնետոմսերի միևնույն դասին, իսկ դրանց բացակայության դեպքում միևնույն տեսակին են դասվում միանման տարբերակիչ բնորոշ առանձնահատկություններ՝ անվանական արժեք, հավաստող իրավունքներ, արտոնություններ և սահմանափակումներ ունեցող բաժնետոմսերը:

3. Ընկերության կողմից թողարկված բաժնետոմսերի տեղաբաշխումն ավարտվելուց հետո Ընկերությունը բաժնետերերի բաժնետոմսերը պետք է գրանցի իր բաժնետերերի ռեեստրի (գրանցամատյանի) բաժնետերերի անձնական հաշիվներում՝ սույն օրենքի VI գլխի դրույթներին համապատասխան:

4. Բաժնետոմսն անբաժանելի է (ամբողջական բաժնետոմս), բացառությամբ կոտորակային բաժնետոմսեր առաջանալու **օրենքով նախատեսված** դեպքերի: Եթե երկու կամ ավելի անձինք սեփականատեր են մեկ բաժնետոմսի, ապա նրանք համարվում են մեկ բաժնետեր:

5. Կոտորակային բաժնետոմսով դրա սեփականատիրոջը տրամադրվում են համապատասխան դասի, իսկ դրանց բացակայության դեպքում համապատասխան տեսակի բաժնետոմսերով տրամադրվող բոլոր իրավունքները՝ տվյալ բաժնետոմսի՝ իրեն պատկանող կոտորակին (մասին) համամասնորեն: Կոտորակային բաժնետոմսեր առաջանալու դեպքում, եթե դրանց հանրագումարը

կոտորակային թիվ է, ապա Ընկերության կանոնադրությունում տեղաբաշխված բաժնետոմսերի քանակը սահմանվում է կոտորակային թվով:

6. Միևնույն անձին միևնույն դասի, իսկ դրանց բացակայության դեպքում միևնույն տեսակի երկու կամ ավելի կոտորակային բաժնետոմսեր պատկանելու դեպքում, այդ կոտորակային բաժնետոմսերը ձևավորում են ամբողջական կամ կոտորակային բաժնետոմս՝ դրանց հանրագումարին համապատասխան:

7. Կանոնադրությամբ կարող են սահմանվել մեկ բաժնետիրոջը պատկանող որոշակի տեսակի կամ դասի բաժնետոմսերի թվի, գումարային անվանական արժեքի, ինչպես նաև մեկ բաժնետիրոջը տրամադրվող ձայների առավելագույն թվի սահմանափակումներ՝ տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, եթե Ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ: Ընկերության որոշակի դասի հասարակ (սովորական) յուրաքանչյուր բաժնետոմսով դրանց սեփականատիրոջը տրամադրվող ձայների քանակը չի կարող գերազանցել տասը ձայնը: Սույն սահմանափակումները պետք է վերաբերեն միևնույն տեսակի կամ դասի բաժնետոմսերի բոլոր սեփականատերերին հավասարապես և չեն կարող կիրառվել առանձին բաժնետիրոջ կամ բաժնետերերի խմբի նկատմամբ:»

Հոդված 910. Օրենքի 33-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 3-րդ պարբերության ամբողջ տեքստում «տեսակի» բառերից հետո լրացնել «(առկայության դեպքում՝ նաև դասի)» բառերը:

2) 2-րդ մասի երկրորդ պարբերության ամբողջ տեքստում «տեսակների» բառերից հետո լրացնել «իսկ առկայության դեպքում՝ նաև դասի» բառերը:

Հոդված 4011. Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետում «տեսակի» բառից հետո լրացնել «կամ դասի» բառերը:

Հոդված 4412. Օրենքի 35-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասի 2-րդ պարբերության «ա» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) լրացուցիչ տեղաբաշխվող յուրաքանչյուր դասի (առկայության դեպքում) հասարակ (սովորական) և արտոնյալ բաժնետոմսերի քանակը՝ այդ բաժնետոմսերի հայտարարված քանակի սահմաններում.».

2) 6-րդ մասում «կամ խորհուրդը» բառերը փոխարինել «, խորհուրդը կամ գործադիր մարմինը» բառերով, իսկ «նրան» բառը փոխարինել «նրանց» բառով:

23) 7-րդ մասի երկրորդ նախադասությունն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4213. Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի՝

1) առաջին պարբերության՝

ա. առաջին նախադասությունում «օրենքով» բառից հետո լրացնել «կամ այլ իրավական ակտերով» բառերը.

բ. երկրորդ նախադասությունից հանել «սույն» բառը, ~~իսկ~~ «օրենքով» բառից հետո լրացնել «կամ այլ իրավական ակտերով» բառերը.

2) երկրորդ պարբերությունը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 43¹⁴. Օրենքի 37-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի առաջին պարբերությունում «Ընկերության» բառից հետո լրացնել «որոշակի դասի» բառերը.

2) 2-րդ մասի առաջին պարբերությունում «Հասարակ (սովորական)» բառերից առաջ լրացնել «Համապատասխան դասի» բառերը, «նրան պատկանող» բառերից հետո լրացնել «տվյալ դասի» բառերը, իսկ «բաժնետոմսերի» բառից հետո հանել «անվանական արժեքից և» բառերը.

3) 3-րդ մասի առաջին պարբերությունում «սահմանում է խորհուրդը» բառերից հետո լրացնել «, եթե այդ իրավասությունը կանոնադրությամբ վերապահված չէ Ընկերության ժողովին կամ գործադիր մարմնին» բառերը:

Հոդված 44¹⁵. Օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունում «սեփականատերերի հետ» բառերից հետո լրացնել «, իսկ հասարակ (սովորական) բաժնետոմսերի դասերի առկայության դեպքում՝ ամենաբարձր չափով շահութաբաժիններ ստանալու իրավունք վերապահող բաժնետոմսերի դասի սեփականատերերի հետ» բառերը:

Հոդված 45¹⁶. Օրենքի 39-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 46¹⁷. Օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի վեցերորդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 47¹⁸. Օրենքի 41-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 41. Ընկերության աշխատակիցներին տրամադրվող բաժնետոմսերը

1. Ընկերությունը կարող է կանոնադրությամբ կամ ընդհանուր ժողովի կողմից հաստատված աշխատակիցների բաժնետիրացման ծրագրով սահմանված կարգով իր աշխատակիցների միջև տեղաբաշխել (տրամադրել) Ընկերության բաժնետոմսեր ~~և կամ~~ այնպիսի ածանցյալ ֆինանսական գործիքներ (գործարքներ), որոնցով պարտավորությունների վերջնահաշվարկը կարող է իրականացվել Ընկերության բաժնետոմսերով (այսուհետ՝ ածանցյալ ֆինանսական գործիքներ): Սույն հոդվածի իմաստով աշխատակից է համարվում նաև Ընկերության ղեկավար պաշտոնատար անձը:

2. Աշխատակիցների բաժնետիրացման ծրագիրը Ընկերության ներքին իրավական ակտ է, որով առնվազն նախատեսվում են Ընկերության աշխատակցի կողմից Ընկերության բաժնետոմսերի կամ ածանցյալ ֆինանսական գործիքների ձեռքբերման, օգտագործման, օտարման և հետգնման դեպքերը, պայմաններն ու կարգը:

3. Սույն հոդվածի 1-ին մասի համաձայն աշխատակիցների միջև տեղաբաշխված ~~կամ և~~ ածանցյալ ֆինանսական գործիքների վերջնահաշվարկի արդյունքում տրամադրվող բաժնետոմսերի գումարային անվանական արժեքը չպետք է գերազանցի կանոնադրական կապիտալի, իսկ այդ բաժնետոմսերով տրամադրվող ծայնների քանակը՝ Ընկերության քվեարկող բաժնետոմսերով տրամադրվող ծայնների 25 տոկոսը:

4. Սույն հոդվածի 1-ին մասի համաձայն աշխատակիցների միջև տեղաբաշխված (տրամադրված) բաժնետոմսերի կամ ածանցյալ ֆինանսական գործիքների տնօրինման հնարավորությունը կարող է սահմանափակվել կանոնադրությամբ կամ աշխատակիցների բաժնետիրացման ծրագրով սահմանված ժամկետով, բայց ոչ ավելի քան երեք տարով՝ սկսած տվյալ բաժնետիրոջը դրանց տեղաբաշխման (տրամադրման) օրվանից:

5. Աշխատակիցների բաժնետոմսերը կամ ածանցյալ ֆինանսական գործիքները տեղաբաշխվում (տրամադրվում) են աշխատակիցների միջև վերջիններիս գրավոր համաձայնությամբ: Աշխատակցի բաժնետոմսերը կամ ածանցյալ ֆինանսական գործիքները կարող են տրամադրվել առանց վճարի, իսկ բաժնետոմսերի դիմաց վճարվող գումարը կարող է ընկերության համապատասխան տեսակի կամ դասի բաժնետոմսերի անվանական արժեքից ցածր լինել:

6. Աշխատակցի հետ աշխատանքային կամ Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց հետ ծառայությունների մատուցման հարաբերությունների դադարեցման դեպքում, բացառությամբ կենսաթոշակի անցնելու դեպքերից, Ընկերությունը իրավունք ունի հետ գնել աշխատակցի բաժնետոմսերը, եթե գործում են սույն հոդվածի 4-րդ մասում նշված սահմանափակումները: Սույն մասով նախատեսված դեպքերում Ընկերությունը իրավունք ունի հետ գնել աշխատակցի բաժնետոմսերը դրանց շուկայական, սակայն անվանական արժեքից ոչ պակաս գնով:

7. Աշխատակցի բաժնետոմսերը օրենքով նախատեսված դեպքերում հարկադիր օտարելիս բաց Ընկերությունը, եթե գործում են սույն հոդվածի 4-րդ մասում նշված սահմանափակումները, և փակ ընկերությունը՝ անկախ նշված սահմանափակումներից, նախապատվության իրավունք ունեն ձեռք բերել աշխատակցի՝ օտարման ենթակա բաժնետոմսերը տվյալ բաժնետոմսերի շուկայական, սակայն անվանական արժեքից ոչ պակաս գնով:

8. Աշխատակցի բաժնետոմսերի սեփականատիրոջ ժառանգները, եթե գործում են սույն հոդվածի 4-րդ մասում նշված սահմանափակումները, իրավունք ունեն Ընկերությունից պահանջել տվյալ բաժնետոմսերի հետգնումը դրանց շուկայական գնով, սակայն ոչ պակաս անվանական արժեքից, կամ պահանջել դրանք փոխարկել Ընկերության այլ բաժնետոմսերի, եթե այդպիսիք հայտարարված են Ընկերության կողմից, և եթե այդպիսի փոխարկման հնարավորությունը համապատասխան տեսակի (իսկ առկայության դեպքում՝ նաև դասի) աշխատակիցների բաժնետոմսերի տեղաբաշխման ժամանակ նախատեսված է եղել կանոնադրությամբ: Աշխատակիցների բաժնետիրացման ծրագրով կամ կանոնադրությամբ կարող են նախատեսվել աշխատակիցների բաժնետոմսերը հետ գնելու կամ ածանցյալ ֆինանսական գործիքներով նախատեսված պարտավորությունները դադարեցնելու Ընկերության պարտավորության այլ դեպքեր, ինչպես նաև դրանց իրականացման կարգն ու պայմանները:

9. Աշխատակցի բաժնետոմսի սեփականատերերը, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նշված սահմանափակման, օգտվում են նույն իրավունքներից, ինչպիսիք սահմանված են սույն օրենքով և կանոնադրությամբ՝ դրանց համապատասխանող տեսակի կամ դասի բաժնետոմսերի սեփականատերերի համար:

10. Աշխատակցի բաժնետոմսերի անվանական արժեքը չպետք է տարբերվի Ընկերության համապատասխան տեսակի կամ դասի բաժնետոմսերի անվանական արժեքից:

11. Աշխատակիցների բաժնետիրացման ծրագիրը հաստատելու մասին, ինչպես նաև աշխատակիցների բաժնետիրացման հետ կապված (այդ թվում՝ Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների մասին) կամ աշխատակիցների բաժնետիրացման ծրագրից բխող որոշումները ընդունում է ընդհանուր ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից, եթե Ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ: Աշխատակիցների բաժնետիրացման հետ կապված կամ աշխատակիցների բաժնետիրացման ծրագրից բխող որոշումների ընդունումը Ընկերության խորհրդին վերապահված լինելու դեպքում Ընկերության

խորհուրդը դրանք ընդունում է խորհրդի անդամների ձայների 3/4-ով, եթե Ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ:

12. Աշխատակիցների բաժնետիրացման ծրագրի շրջանակներում Ընկերության աշխատակիցների բաժնետիրացման դեպքում Ընկերության այլ բաժնետերերի կողմից բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունքը չի կիրառվում:»:

Հոդված 48¹⁹. Օրենքի 42-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընկերության հիմնադրման ժամանակ տեղաբաշխված բաժնետոմսերը պետք է լրիվ վճարվեն ընկերության հիմնադրման մասին որոշմամբ կամ պայմանագրով կամ կանոնադրությամբ սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ, քան Ընկերության պետական գրանցման պահից՝ երեք ամսվա ընթացքում: Եթե սահմանված ժամկետում կանոնադրական կապիտալի վճարումը լրիվ չի կատարվել, ապա չվճարված գումարին համապատասխանող բաժնետոմսերը փոխանցվում են Ընկերության տրամադրության տակ և դրանց նկատմամբ կիրառվում են սույն հոդվածի 6-րդ մասի 4-րդ պարբերությամբ նախատեսված սահմանափակումները: Ընկերությունը պարտավոր է բաժնետոմսերը փոխանցվելուց հետո՝ երկամսյա ժամկետում Ընկերության հիմնադրման ժամանակ տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց վճարած բաժնետերերի համաձայնությամբ տեղաբաշխել այդ բաժնետոմսերը նրանց միջև, իսկ դրա անհնարինության դեպքում՝ որոշում կայացնել այդ բաժնետոմսերը մարելու և կանոնադրական կապիտալը նվազեցնելու մասին: Եթե Ընկերության պետական գրանցման համար սահմանված եռամսյա ժամկետում կանոնադրական կապիտալը առհասարակ չի վճարվում, ապա Ընկերության Ընկերությունը հիմնադիրները պարտավոր են է մեկամսյա ժամկետում ընդունել որոշում կայացնել Ընկերության լուծարման մասին:»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ մբ 2.1-ին մաս.

«2.1. Եթե սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում կանոնադրական կապիտալի նվազեցման կամ Ընկերության լուծարման մասին որոշումը չի ընդունվել, ապա Ընկերության բաժնետերերը, հիմնադիրները, պարտատերերը կամ լիազորված մարմիններն իրավունք ունեն պահանջել Ընկերության լուծարում՝ դատական կարգով:»:

3) 4-րդ մասի առաջին պարբերությունում «անկախ գնահատողի կողմից» բառերից հետո լրացնել «, բացառությամբ լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերման ժամանակ դրանց դիմաց վճարվող գույքի դրամական գնահատականը ժողովի միաձայն որոշմամբ սահմանված լինելու դեպքերի» բառերը:

4) 5-րդ մասում «թույլատրվում» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն Օրենքի 41-րդ հոդվածով նախատեսված՝ կանոնադրությամբ կամ աշխատակիցների բաժնետիրացման ծրագրով աշխատակիցներին տրամադրվող բաժնետոմսերի» բառերը:

Հոդված 49²⁰. Օրենքի 43-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասի 2-րդ պարբերության երկրորդ նախադասությունը ուժը կորցրած ճանաչել.

2) 3-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ պարբերություն.

«Եթե երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվում է, որ Ընկերության զուտ ակտիվների արժեքը կազմում է բացասական մեծություն, կամ օրենքով կամ այլ իրավական ակտերով կանոնադրական կապիտալի նվազագույն չափ սահմանված լինելու դեպքում՝ Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է սահմանված չափից, ապա Ընկերության գործադիր

մարմինը պարտավոր է խորհրդին ներկայացնել արտահերթ ժողովի գումարման պահանջ: Նման դեպքերում արտահերթ ժողովում պետք է որոշում կայացվի Ընկերության լուծարման կամ դրա գործունեությունը շարունակելու մասին: Ընդ որում՝ գործունեությունը շարունակելու մասին որոշում կարող է ընդունվել, եթե խորհրդի, իսկ Ընկերությունում խորհուրդ ստեղծված չլինելու դեպքում՝ գործադիր մարմնի կողմից ներկայացվել է գրավոր եզրակացություն Ընկերության գործունեությունը զուտ ակտիվների առկա չափի պարագայում շարունակելու նպատակահարմարության և հիմնավորվածության վերաբերյալ՝ հիմք ընդունելով Ընկերության գործունեության ուղղությունները, ոլորտը, առանձնահատկությունները, գործունեության ծրագրերը և այլ հանգամանքներ: Գործունեությունը շարունակելու մասին որոշում ընդունելու դեպքում Ընկերությունը պարտավոր է այդ մասին տասը աշխատանքային օրվա ընթացքում հայտարարություն տեղադրել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և գործունեությունը շարունակելու մասին որոշումը ներկայացնել Ընկերության պետական գրանցումն իրականացրած մարմնին:»:

3) 4-րդ մասում «լուծարման» բառից հետո լրացնել «կամ գործունեությունը շարունակելու» բառերը:

Հոդված 2021. Օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասում լրացնել նոր «գ» կետ.

«գ) սույն օրենքի 41-րդ հոդվածով սահմանված կարգով տեղաբաշխում է աշխատակիցներին տրամադրվող բաժնետոմսեր:»:

Հոդված 2122. Օրենքի 51-րդ հոդվածի 5-րդ մասում «սեփական բաժնետոմսերի» բառերից հետո լրացնել «կամ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով իր հետ փոխկապակցված անձի բաժնետոմսերի» բառերը:

Հոդված 2223. Օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Ընկերության բաժնետերերի ռեեստրում բաժնետիրոջ կամ անվանատիրոջ վերաբերյալ գրառումը կատարվում է բաժնետիրոջ կամ անվանատիրոջ պահանջով: Ընկերության բաժնետերերի ռեեստրում այլ գրառումները, ինչպես նաև սույն օրենքի 41-րդ հոդվածով սահմանված կարգով աշխատակիցներին տրամադրվող աշխատակիցների բաժնետիրացման ծրագրով հատկացվող բաժնետոմսերի վերաբերյալ գրառումները կատարվում են նաև Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի կամ այլ լիազորված անձի պահանջով: Եթե Ընկերության բաժնետերերի ռեեստրում գրառման համար ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված պահանջներին և առկա չեն գրառումը չկատարելու՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հիմքեր, ապա գրառումը կատարվում է փաստաթղթերը ներկայացնելու պահից՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:»:

Հոդված 2324. Օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) «բ» կետում «տեսակի» բառից հետո լրացնել «(առկայության դեպքում՝ նաև դասի)» բառերը.

2) «գ» կետում «տեսակի» բառից հետո լրացնել «(առկայության դեպքում՝ նաև դասի)» բառերը.

23) լրացնել նոր «դ.1» կետ.

«դ.1) համապատասխան դասի (առկայության դեպքում) բաժնետոմսերով դրանց սեփականատիրոջը տրամադրվող ձայների քանակը.»:

34) «թ» կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«թ» օրենքով ~~Կ~~կամ այլ իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ:»:

Հոդված 24~~25~~. Օրենքի 54-րդ հոդվածի`

1) 1-ին մասի երկրորդ պարբերությունից հանել «սույն» բառը, իսկ «օրենքով» բառից հետո լրացնել «կամ այլ իրավական ակտերով» բառերը.

2) 2-րդ մասում «90 տոկոսից» բառերից հետո լրացնել «, բացառությամբ այն դեպքերի, երբ բաժնետոմսերի ձեռքբերումը իրականացվում է ժողովի որոշմամբ» բառերը:

Հոդված 25~~26~~. Օրենքի 56-րդ հոդվածում`

4) 1-ին մասի երկրորդ պարբերությունում «արժեքով» բառից հետո լրացնել «, եթե դրանց սեփականատերը Ընկերության բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի) մասին որոշման ընդունումից հետո երկամսյա ժամկետում Ընկերությանը գրավոր ծանուցում չի ներկայացնում իր կտորակալին բաժնետոմսերը պահպանելու ցանկության մասին» բառերը:;

Հոդված 26~~27~~. Օրենքում լրացնել հետևյալ բովանդակությամբ 56.1-ին հոդված.

«Հոդված 56.1. Ընկերության բաժնետոմսերի պարտադիր վաճառքի պահանջը

1. Ընկերության քվեարկող բաժնետոմսերի և միաժամանակ դրանցով տրամադրվող ձայների առնվազն 95 տոկոսին ուղղակիորեն միանձնյա տիրապետող բաժնետիրոջ (այսուհետ սույն հոդվածում` պահանջ ներկայացնող բաժնետեր) պահանջով (Ընկերության բաժնետոմսերի պարտադիր վաճառքի պահանջ) հրավիրվում է արտահերթ ժողով, որը որոշում է ընդունում Ընկերության մյուս բաժնետերերին պատկանող քվեարկող բաժնետոմսերը (բացառությամբ Հայաստանի Հանրապետությանը կամ համայնքներին պատկանող բաժնետոմսերի) հետզնելու և պահանջ ներկայացնող բաժնետիրոջը տրամադրելու վերաբերյալ:

2. Ընկերության բաժնետոմսերի պարտադիր վաճառքի պահանջը պետք է առնվազն պարունակի հետևյալ տեղեկությունները.

1) հիմնավորում պահանջ ներկայացնող բաժնետիրոջ` սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պայմաններին համապատասխանության վերաբերյալ.

2) պահանջ ներկայացնող բաժնետիրոջ անունը (անվանումը), հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն, ծանուցման հասցեն, եթե այն տարբերվում է հաշվառման (գտնվելու) վայրի հասցեից, պահանջ ներկայացնող ֆիզիկական անձի դեպքում` անձր հաստատող փաստաթղթի տվյալները.

3) բաժնետոմսերը պահանջ ներկայացնող բաժնետիրոջը տրամադրելու դիմաց առաջարկվող գինը, որը չի կարող պակաս լինել անկախ գնահատողի կողմից սահմանված բաժնետոմսերի շուկայական արժեքից.

4) պահանջ ներկայացնող բաժնետիրոջ կողմից ընտրված (նշանակված) անկախ գնահատողի անունը, հաստատության անվանումը, որում վերջինս աշխատում է (առկայության դեպքում).

5) բաժնետոմսերը պահանջ ներկայացնող բաժնետիրոջը տրամադրելու դիմաց առաջարկվող գումարը հատուկ բանկային հաշվին դեպոնացնելու մասին տեղեկություններ: Որպես դեպոնացված գումարի հասցեատեր պետք է նշվեն այն բաժնետերերը, ում բաժնետոմսերը ենթակա են հետզնման:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված տեղեկությունները ժողովի մասին ծանուցմամբ ներկայացվում են բաժնետերերին:

4. Բաժնետերերը, ում բաժնետոմսերի կապակցությամբ կայացվել է բաժնետոմսերի հետզնելու և պահանջ ներկայացնող բաժնետիրոջ տրամադրելու վերաբերյալ որոշում, իրավունք ունեն ժողովի որոշումը կայացվելուց հետո երկու ամսվա ընթացքում դիմել դատարան՝ վիճարկելով բաժնետոմսերի տրամադրման դիմաց առաջարկվող գինը:

5. Սույն հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված գումարը դեպոնացված լինելու դեպքում բաժնետոմսերի հետզնելու և պահանջ ներկայացնող բաժնետիրոջ տրամադրելու վերաբերյալ ժողովի որոշումը հիմք է այդ բաժնետոմսերի վերաբերյալ Ընկերության բաժնետերերի ռեեստրում գրառումներ կատարելու համար՝ անկախ ժողովի որոշումը վիճարկելու հանգամանքից:

6. Բաժնետոմսերի հետզնելու և պահանջ ներկայացնող բաժնետիրոջ տրամադրելու վերաբերյալ ժողովի որոշումը կայացվելու պահից բաժնետերերը իրավունք ունեն ստանալու պահանջ ներկայացնող բաժնետիրոջ կողմից դեպոնացված գումարը:

~~Հոդված 56.1. Ընկերության բաժնետոմսերի պարտադիր վաճառքի պահանջի իրավունքը և պարտադիր գնման պահանջի իրավունքը~~

~~1. Ընկերության քվեարկող բաժնետոմսերի 95 և ավել տոկոս քվեարկելու ձայնի իրավունք տվող հասարակ (սովորական) բաժնետոմսերին միաժամանակ դրանցով տրամադրվող ձայների առնվազն 95 տոկոսին՝ ուղղակիորեն տիրապետող բաժնետերն իրավունք ունի պահանջել Ընկերության մյուս բաժնետերերից իրեն վաճառել վերջիններիս պատկանող, քվեարկելու ձայնի իրավունք տվող բաժնետոմսերը, որոնք պետք է հանձնվեն պահանջը ներկայացնող բաժնետիրոջը սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ծանուցումը ստանալուց հետո ոչ ուշ քան երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերի:~~

~~2. Ընկերության քվեարկող բաժնետոմսերի և միաժամանակ դրանցով տրամադրվող ձայների ոչ ավելի քան 5 տոկոսին քվեարկելու ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի ոչ ավելի քան 5 տոկոսին տիրապետող բաժնետերն իրավունք ունի պահանջել Ընկերության քվեարկելու ձայնի իրավունք տվող հասարակ (սովորական) բաժնետոմսերի 95 և ավելի տոկոսին ուղղակիորեն միանձնյա տիրապետող բաժնետիրոջից գնել իրեն պատկանող Ընկերության քվեարկելու ձայնի իրավունք տվող բաժնետոմսերը, որոնք պետք է գնվեն պահանջը ներկայացնող բաժնետիրոջից սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ծանուցումը ստանալուց հետո ոչ ուշ քան երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերի:~~

~~3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նշված անձինք Ընկերության բաժնետոմսերի պարտադիր վաճառքի կամ պարտադիր գնման պահանջը պետք է ներկայացնեն գրավոր ծանուցմամբ կամ սույն օրենքով նախատեսված ժողովի գումարման մասին ծանուցման այլ ձևերով:~~

~~4. Ընկերության բաժնետոմսերի պարտադիր վաճառքի կամ գնման պահանջը պետք է առնվազն պարունակի հետևյալ տեղեկությունները.~~

~~1) պահանջ ներկայացնող բաժնետիրոջ անունը (անվանումը), հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն, ծանուցման հասցեն, եթե այն տարբերվում է հաշվառման (գտնվելու) վայրի հասցեից, պահանջ ներկայացնող ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի տվյալները:~~

~~2) բաժնետոմսերի ձեռքբերման (օտարման) դիմաց առաջարկվող գինը, որը չի կարող պակաս լինել անկախ գնահատողի կողմից սահմանված բաժնետոմսերի շուկայական արժեքից:~~

~~3) պահանջ ներկայացնող բաժնետիրոջ կողմից առաջարկվող անկախ գնահատողի անունը, հաստատության անվանումը, որում վերջինս աշխատում է (առկայության դեպքում):~~

4) բաժնետոմսերի գնման (օտարման) և վճարման ժամկետները, կարգն ու պայմանները, ընդ որում, բաժնետոմսերի ձեռքբերման դիմաց վճարման ժամկետը չի կարող գերազանցել ձեռքբերման պահից սկսած երկամսյա ժամկետը:

5. Բաժնետերերը, որոնցից պահանջվել է վաճառել իրենց բաժնետոմսերը կամ որոնց պահանջվել է գնել բաժնետոմսեր, իրավունք ունեն չհամաձայնել առարկել պահանջում նշված գնի, վճարման կարգի կամ անկախ գնահատողի ընտրության վերաբերյալ պայմաններին և կատարել ներկայացնելով դրանց վերանայման վերաբերյալ առաջարկություններ: Առաջարկությունները ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում համաձայնության չգալու դեպքում, բաժնետերերը, որոնցից պահանջվել է վաճառել իրենց բաժնետոմսերը կամ որոնցից պահանջվել է գնել բաժնետոմսեր, իրավունք ունեն ունի դիմել դատարան: Վիճարկելու պահանջի համապատասխանությունը սույն հոդվածի պահանջներին, պահանջը ստանալուց հետո երկամսյա ժամկետում: Սույն մասով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի պարտադիր վաճառքի կամ պարտադիր գնման պահանջ ստացած բաժնետերերը պարտավոր են համապատասխանաբար վաճառել կամ գնել պահանջվող բաժնետոմսերը համաձայնություն կայացնելուց հետո մեկ ամսվա ընթացքում:

6. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված անկախ գնահատողի վարձատրության պարտավորությունը կրում է նրան նշանակված կողմը: Այն դեպքում, երբ կողմում հանդես են գալիս երկու կամ ավելի անձինք, անկախ գնահատողի վարձատրության պարտավորությունը կրում են կողմում առկա բոլոր անձինք համատեղ, եթե նրանց միջև առկա չէ տվյալ պարտավորության կատարման այլ կարգի վերաբերյալ համաձայնություն:

7. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ծանուցման ստացման անհնարինության դեպքում սույն հոդվածի 1-ին մասում նշված անձը բաժնետոմսերի ձեռքբերման դիմաց առաջարկվող գումարը մուծում է նոտարի դեպոզիտ՝ ոչ պակաս քան մեկ ամիս ժամկետով:

8. Եթե սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված ժամկետում դեպոզիտ ստանալու լիազորություն ունեցող անձին հայտնաբերել չի հաջողվում, Ընկերության բաժնետոմսերի պարտադիր վաճառքի պահանջում նշված բաժնետոմսերի նկատմամբ սույն հոդվածի 1-ին մասում նշված անձի սեփականության իրավունքը ծագում է բաժնետոմսերի ձեռքբերման դիմաց առաջարկվող գումարը նոտարի դեպոզիտ մուծելու պահից՝ մեկ ամիս հետո»:

Հոդված 28. Օրենքում լրացնել նոր 56.2-րդ հոդված.

«Հոդված 56.2. Ընկերության բաժնետոմսերի պարտադիր գնման պահանջը

1. Ընկերության քվեարկող բաժնետոմսերի և միաժամանակ դրանցով տրամադրվող ծայների ոչ ավելի քան 5 տոկոսին տիրապետող բաժնետիրոջ (այսուհետ սույն հոդվածում՝ պահանջ ներկայացնող բաժնետեր) պահանջով (Ընկերության բաժնետոմսերի պարտադիր գնման պահանջ) հրավիրվում է արտահերթ ժողով, որը որոշում է ընդունում պահանջ ներկայացնող բաժնետիրոջ բաժնետոմսերը հետգնելու վերաբերյալ, եթե Ընկերությունում առկա է սույն օրենքի 56.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված բաժնետեր:

2. Ընկերության բաժնետոմսերի պարտադիր գնման պահանջը պետք է առնվազն պարունակի հետևյալ տեղեկությունները.

1) հիմնավորում պահանջ ներկայացնող բաժնետիրոջ՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պայմաններին համապատասխանության վերաբերյալ.

2) պահանջ ներկայացնող բաժնետիրոջ անունը (անվանումը), հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն, ծանուցման հասցեն, եթե այն տարբերվում է հաշվառման (գտնվելու) վայրի հասցեից, պահանջ ներկայացնող ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի տվյալները.

3) բաժնետոմսերը պահանջ ներկայացնող բաժնետիրոջից հետգնելու համար առաջարկվող գինը, որը չի կարող ավել լինել անկախ գնահատողի կողմից սահմանված բաժնետոմսերի շուկայական արժեքից.

4) պահանջ ներկայացնող բաժնետիրոջ կողմից ընտրված (նշանակված) անկախ գնահատողի անունը, հաստատության անվանումը, որում վերջինս աշխատում է (առկայության դեպքում):

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված տեղեկությունները ժողովի մասին ծանուցմամբ ներկայացվում են բաժնետերերին:

4. Ընկերության բաժնետոմսերի պարտադիր գնման պահանջը ստացած Ընկերությունը իրավունք ունի պահանջը ստանալուց հետո երկու ամսվա ընթացքում դիմել դատարան՝ վիճարկելով բաժնետոմսերի հետգնման դիմաց առաջարկվող գինը, ընդ որում, գնի վիճարկումը չի կասեցնում Ընկերության բաժնետոմսերի հետգնման գործընթացը:

5. Ընկերությունը պարտավոր է հետգնել պահանջ ներկայացնող բաժնետիրոջ բաժնետոմսերը Ընկերության բաժնետոմսերի պարտադիր գնման պահանջը ստանալուց հետո երկու ամսվա ընթացքում:

6. Սույն հոդվածով սահմանված հիմքերով հետգնված բաժնետոմսերն ուղղվում են Ընկերության տնօրինությանը: Նշված բաժնետոմսերը չեն տալիս ձայնի իրավունք, հաշվի չեն առնվում ձայների հաշվարկման ժամանակ, և դրանցով շահութաբաժիններ չեն հաշվարկվում: Դրանք ենթակա են տեղաբաշխման սույն օրենքի 56.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված բաժնետիրոջը մեկ տարվա ընթացքում: Եթե սույն օրենքի 56.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված բաժնետերը հրաժարվում է կամ սույն հոդվածով սահմանված ժամկետում ձեռք չի բերում հետգնված բաժնետոմսերը, ժողովը պարտավոր է որոշում ընդունել նշված բաժնետոմսերի մարման միջոցով կանոնադրական կապիտալի չափի նվազեցման մասին:»:

Հոդված 2729. Օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետում «2-րդ» բառը փոխարինել «1-ին» բառով:

Հոդված 2830. Օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Նշված որոշումների, ինչպես նաև սույն օրենքով նախատեսված բաժնետոմսերի հետգնման մասին այլ որոշումների ընդունման պահից՝ 7-օրյա ժամկետում, Ընկերությունը պարտավոր է ծանուցել հետգնման իրավունք ունեցող բաժնետերերին՝ նրանց մոտ Ընկերությունից բաժնետոմսերի հետգնման պահանջի իրավունքի առաջացման և հետգնման կարգի մասին: Հետգնման ենթակա բաժնետոմսերը երրորդ անձանց իրավունքներով ծանրաբեռնված լինելու դեպքում Ընկերության բաժնետերերի ռեեստր վարողը պարտավոր է տվյալ բաժնետոմսերի հետգնման մասին ծանուցել այդ անձանց՝ օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում:»:

Հոդված 2931. Օրենքի 59-րդ հոդվածի 5-րդ մասում՝

1) երկրորդ պարբերությունում «Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի» բառերը փոխարինել «Ընկերության յուրաքանչյուր դասի հասարակ (սովորական) բաժնետոմսերի» բառերով,

իսկ «Ընկերության բոլոր տեղաբաշխված հասարակ (սովորական) արժեթղթերի» բառերը փոխարինել «Ընկերության՝ տվյալ դասի բոլոր տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի» բառերով.

2) երրորդ պարբերությունում «Սույն կետով որոշվող» բառերից հետո լրացնել «յուրաքանչյուր դասի» բառերը:

Հոդված 30~~32~~. Օրենքի 60-րդ հոդվածի՝

- 1) վերնագրում «և» բառը փոխարինել «կամ» բառով.
- 2) 1-ին մասի «ա» և «բ» կետերում «25» թիվը փոխարինել «50» թվով:

Հոդված 31~~33~~. Օրենքի 61-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 61. Ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված խոշոր գործարքների կնքումը

1. Խոշոր գործարք կնքելու մասին որոշումը պետք է ընդունվի ժողովի կողմից՝ դրան մասնակցող բաժնետերերի (քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի) ձայների 3/4-ով, եթե Ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ:

2. Սույն հոդվածով սահմանված պահանջները չպահպանելը խոշոր գործարք կնքելիս չի հանգեցնում գործարքի անվավերության, եթե Ընկերության հետ գործարք կնքած անձը գործել է բարեխիղճ՝ չգիտեր կամ չէր կարող իմանալ նշված պահանջներն Ընկերության կողմից չպահպանելու մասին:»:

Հոդված 32~~34~~. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ VIII.1 գլխով.

«ԳԼՈՒԽ VIII.1

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՁԵՐՔԵՐՄԱՆ ԿԱՄ ՕՏԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՅԼ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ
Ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված այլ գործարքները

Հոդված 61.1. Ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված այլ գործարքները

1. Սույն գլխի իմաստով Ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված այլ գործարքներ են մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնք, բացառությամբ Ընկերության բնականոն տնտեսական գործունեության շրջանակներում կատարվող գործարքների, ուղղակի կամ անուղղակի կապված են Ընկերության կողմից գույքի ձեռքբերման, օտարման կամ գույքի օտարման հնարավորության հետ, և որոնց արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ չի գերազանցում Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսը:

2. Ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված այլ գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը որոշվում է սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով:

Հոդված 61.2. Ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված այլ գործարքների կնքումը

1. Ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված այլ գործարք կնքելու մասին որոշումը, եթե գույքի արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի մինչև 25 տոկոսը, կայացնում է գործադիր մարմինը, եթե ընկերության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

2. Ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված այլ գործարք կնքելու մասին որոշումը, եթե դրանց արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից 50 տոկոսը, կայացնում է խորհուրդը, եթե ընկերության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

3. Եթե սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով նախատեսված գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու իրավասությունը վերապահված է խորհրդին, ապա այդ որոշումը ընդունվում է խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, եթե կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ: Այն դեպքում, երբ կանոնադրությամբ սահմանված է, որ սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով սահմանված գործարքը կնքելու մասին որոշումը խորհուրդն ընդունում է միաձայն, խորհրդի դուրս եկած անդամների ձայները հաշվի չեն առնվում:

4. Եթե սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով նախատեսված գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու իրավասությունը վերապահված է խորհրդին, սակայն այդ որոշումը խորհրդի կողմից չի ընդունվում, ապա խորհուրդը պարտավոր է այդ գործարքի կնքման վերաբերյալ որոշում կայացնելու հարցով գումարել արտահերթ ժողով:

5. Սույն հոդվածով սահմանված պահանջները չպահպանելը ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված այլ գործարք կնքելիս չի հանգեցնում գործարքի անվավերության, եթե Ընկերության հետ գործարք կնքած անձը գործել է բարեխիղճ՝ չգիտեր կամ չէր կարող իմանալ նշված պահանջներն Ընկերության կողմից չպահպանելու մասին:»:

Հոդված 3335. Օրենքի 67-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 67. Ժողովի իրավասությունները**

1. Ժողովի ~~բացառիկ~~ իրավասությանն են պատկանում՝

1) կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.

42) Ընկերության վերակազմակերպումը.

23) Ընկերության լուծարումը.

34) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.

45) խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը ~~և խորհրդի նախագահի և անդամների աշխատանքի վարձատրության չափը և պայմանները սահմանելը:~~ խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

56) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.

67) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը.

8) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.

9) Ընկերության գործադիր մարմնի (միանձնյա կամ կոլեգիալ) ձևավորումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև Ընկերության գործադիր մարմնի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձի նշանակումը.

10) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

11) Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության հարցերը ժողովին վերապահված լինելու դեպքում քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

712) Ընկերության աշխատակիցների բաժնետիրացման ծրագրի հաստատումը.

813) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը: Նշված հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Եթե սահմանված ժամկետում տարեկան ժողովը տեղի չի ունեցել, ապա արտահերթ ժողով կարող է իրավիրվել միայն Ընկերության լուծարման կամ սույն ենթակետում նշված հարցերը քննարկելու համար: Նշված հարցերով իրավիրված արտահերթ ժողովում այլ հարցեր քննարկվել չեն կարող, բացառությամբ սույն ենթակետում նշված հարցերով կայացված որոշումներով պայմանավորված կանոնադրական կապիտալի նվազեցման դեպքերի.

914) սույն օրենքի 47-րդ հոդվածի 32-րդ կետի—մասի համապատասխան Ընկերության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող Ընկերության այլ արժեթղթերի Ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.

4015) առանձին տեսակների կամ դասերի բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարելու կամ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները ոչ լրիվ չափով վճարելու մասին որոշումներ ընդունելը.

4116) ժողովի վարման կարգը.

4217) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

4318) բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը.

4419) գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ սույն օրենքի 64-րդ հոդվածով նախատեսված դեպքերում.

4520) խոշոր գործարքների կնքման մասին որոշման ընդունումը.

4621) «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով որոշումների ընդունումը.

~~17) կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.~~

~~18) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.~~

~~19) Ընկերության գործադիր մարմնի (միանձնյա կամ կոլեգիալ) ձևավորումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև Ընկերության գործադիր մարմնի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձի նշանակումը:~~

~~20) Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:~~

~~21) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը:~~

22) Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով:

23) Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետզնումը՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում:

24) Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց (խորհրդի նախագահի կամ անդամի, տնօրենի, գլխավոր տնօրենի կամ վարչության, տնօրինության անդամի) աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը:

25) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը կամ դրանց մասնակցությունը:

~~26) դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը:~~

27-26) օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

2. Կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ սույն հոդվածի 1-ին մասի 8-11-րդ, 17-22-27-23-րդ, 24-րդ (բացառությամբ խորհրդի նախագահի կամ անդամի վարձատրության) և 25-րդ կետերով սահմանված ժողովի իրավասությունները կարող են վերապահվել խորհրդին: Սույն հոդվածի 1-ին մասի 17-րդ 1-ին կետով նախատեսված իրավասությունները կարող են վերապահել խորհրդին, եթե դրա իրականացումը բացառապես պայմանավորված է Հայաստանի Հանրապետության տարածքում Ընկերության գտնվելու վայրի փոփոխությամբ կամ Ընկերության հայտարարված բաժնետոմսերի տեղաբաշխմամբ պայմանավորված կանոնադրության փոփոխություններ կատարելով, ինչպես նաև սույն օրենքի 88-րդ հոդվածի 2.1-ին մասով նախատեսված դրույթներ սահմանելով, եթե սույն հոդվածի 2-րդ 1-ին մասի 39-րդ կետով սահմանված իրավասությունը վերապահված է խորհրդին:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 22-23-րդ ~~և 25-26-րդ~~ կետերով նախատեսված իրավասությունները Ընկերության կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ կարող են վերապահվել Ընկերության գործադիր մարմնին:

4. Ժողովն իրավունք չունի քննարկել և որոշումներ ընդունել այն հարցերի շուրջ, որոնք օրենքի համաձայն և Ընկերության կանոնադրությամբ չեն սահմանվել որպես նրա իրավասություն:»:

Հոդված 34-36. Օրենքի 68-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի երկրորդ պարբերությունում՝

ա. երկրորդ նախադասությունում «Եթե» բառից հետո լրացնել «հասարակ (սովորական) կամ» բառերը, իսկ «հաշվարկման ժամանակ նշված» բառերից հետո լրացնել «հասարակ (սովորական) կամ» բառերը:

բ. լրացնել նոր երրորդ նախադասություն.

«Քվեարկող կոտորակային բաժնետոմսերի քանակի հաշվարկման ժամանակ նշված բաժնետոմսերի տրված յուրաքանչյուր ձայն հաշվառվում է տվյալ բաժնետոմսի կոտորակին (մասին) համամասնորեն:».

2) 3-րդ մասում «67-րդ հոդվածի 1-ին կետի «բ», «ժգ», «ժզ», «ժէ-ի» ենթակետերում» բառերը փոխարինել «67-րդ հոդվածի 1-ին մասի ~~4-ի~~2-րդ, 914-րդ, 4318-4520-րդ և 22-23-րդ կետերում» բառերով, իսկ «և» բառը փոխարինել «կամ» բառով.

3) 4-րդ մասում «67-րդ հոդվածի 1-ին կետի «ա», «բ», «դ», «զ» և «ժթ» ենթակետերում» բառերը փոխարինել «67-րդ հոդվածի 1-ին մասի ~~4-ի~~1-2-րդ, 34-րդ, 56-րդ, և 4520-րդ և 17-րդ կետերում» բառերով.

4) 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«5. Սույն օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի ~~23-րդ, 67-րդ~~ և ~~4318-րդ~~ կետերում սահմանված հարցերով որոշումները, ինչպես նաև Ընկերության կանոնադրության մեջ այնպիսի փոփոխություններ կամ լրացումներ կատարելու կամ կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին որոշումները, որոնցով Ընկերությունում ստեղծվում են հասարակ (սովորական) կամ արտոնյալ բաժնետոմսերի նոր դասեր կամ փոփոխվում են հասարակ (սովորական) կամ արտոնյալ բաժնետոմսերի դասերի պայմանները, ընդունում է ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից, եթե Ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ: Հասարակ (սովորական) բաժնետոմսերի դասերի պայմանների փոփոխության հանգեցնող որոշումները, որոնցով սահմանափակվում են այդ բաժնետոմսերով հատկացվող իրավունքները, կարող են ընդունվել, երբ դրանց կողմ են քվեարկել համապատասխան դասի հասարակ (սովորական) բաժնետոմսերի առնվազն 3/4-ի սեփականատերերը կամ անվանատերերը, եթե Ընկերության կանոնադրությամբ սեփականատերերի կամ անվանատերերի առավել մեծ թիվ սահմանված չէ:».

5) 7-րդ մասում «67-րդ հոդվածի 1-ին կետի «բ», «զ» և «ը» ենթակետերում» բառերը փոխարինել «67-րդ հոդվածի 1-ին մասի ~~4-22-3-րդ~~ և ~~67-րդ~~ կետերում» բառերով.

6) 8-րդ մասում «67-րդ հոդվածի 1-ին կետի «բ», «զ» և «ը» ենթակետերում» բառերը փոխարինել «67-րդ հոդվածի 1-ին մասի ~~4-22-3-րդ~~ և ~~67-րդ~~ կետերում» բառերով:

Հոդված 37. Օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասում «մասնակցել է Ընկերության քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին» բառերը փոխարինել «մասնակցել են Ընկերության քվեարկող բաժնետոմսերով տրամադրվող ձայների քանակի կեսից ավելին տիրապետող բաժնետերերը» բառերով:

Հոդված 3538. Օրենքի 70-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի «ա» կետում «իրենց պատկանող բաժնետոմսերի» բառերից հետո լրացնել «դասին, » բառը.

2) 1-ին մասի «բ» կետում «Ընկերության» բառից առաջ լրացնել «սույն օրենքով կամ կանոնադրությամբ նախատեսված դեպքերում» բառերը, իսկ «իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի» բառերից հետո լրացնել «դասին, » բառը.

3) 5-րդ մասից հանել «որպես սեփականատեր» բառերը, իսկ «բաժնետոմսերի» բառը փոխարինել «բաժնետոմսերով տրամադրվող ձայների քանակի» բառերով:

Հոդված 36~~39~~. Օրենքի 72-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր է (են) հանդիսանում» բառերը փոխարինել «տիրապետում է (են) Ընկերության քվեարկող բաժնետոմսերի կամ դրանցով տրամադրվող ձայների քանակի առնվազն 2 տոկոսին» բառերով:

2) 2-րդ մասում «բաժնետոմսերի քանակը» բառերը փոխարինել «բաժնետոմսերով տրամադրվող ձայների քանակը» բառերով:

3) 3-րդ մասի ամբողջ տեքստում «բաժնետոմսերի» բառերը փոխարինել «բաժնետոմսերով տրամադրվող ձայների» բառերը:

4) 4-րդ մասի «բ» կետում «տնօրինում Ընկերության» բառերը փոխարինել «տիրապետում Ընկերության» բառերով, իսկ «քանակի քվեարկող բաժնետոմսերին» բառից հետո լրացնել «ձայների քանակին» բառերը:

Հոդված 37~~40~~. Օրենքի 74-րդ հոդվածում հոդվածի՝

1) ամբողջ տեքստում «Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր» բառերը փոխարինել «Ընկերության քվեարկող բաժնետոմսերով տրամադրվող ձայների քանակի առնվազն 10 տոկոսին տիրապետող» բառերով:

2) 3-րդ մասում ~~«նրան (նրանց) պատկանող» բառերից հետո~~ «նրան (նրանց) պատկանող բաժնետոմսերի» բառը փոխարինել «նրան (նրանց) պատկանող բաժնետոմսերով տրամադրվող ձայների» բառերով:

3) 4-րդ մասի երկրորդ պարբերության «բ» կետում «տնօրինում» բառը փոխարինել «տիրապետում» բառով, իսկ «քանակի քվեարկող բաժնետոմսերը» բառերը փոխարինել «քվեարկող բաժնետոմսերով տրամադրվող ձայների քանակին» բառերով:

Հոդված 41. Օրենքի 75-րդ հոդվածի 2-րդ մասում «(գլխավոր տնօրենը)» բառերից հետո լրացնել «, գործադիր մարմնի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձը՝ իր լիազորությունների իրականացման ժամանակահատվածում» բառերը:

Հոդված 42. Օրենքի 77-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի առաջին պարբերությունում «բաժնետոմսերի» բառը փոխարինել «բաժնետոմսերով տրամադրվող ձայների» բառերով:

2) 3-րդ մասի երկրորդ պարբերությունում «բաժնետոմսերի» բառը փոխարինել «բաժնետոմսերով տրամադրվող ձայների» բառերով:

Հոդված 38~~43~~. Օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում «կիրառելիս» բառից հետո լրացնել «հասարակ (սովորական) կամ» բառերը:

Հոդված 39~~44~~. Օրենքի 83-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի՝

ա. առաջին պարբերությունից հանել «բացառիկ» բառը:

բ. երրորդ պարբերությունում «1-ին կետի «բ-դ» ենթակետերով» բառերը փոխարինել «1-ին մասի 41-43-4-րդ կետերով» բառերով.

2) 3-րդ մասի «գ» կետում «բաժնետոմսերի» բառից հետո լրացնել «և դրանցով տրամադրվող ձայների» բառերը:

Հոդված 40~~45~~. Օրենքի 84-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 84. Խորհրդի իրավասությունները

1. Խորհրդի իրավասությանն են պատկանում՝

1) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը.

2) տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, բացառությամբ սույն օրենքի 74-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված դեպքերի.

3) ժողովների օրակարգի հաստատումը.

4) ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը՝ սույն օրենքի X գլխի դրույթներին համապատասխան.

5) սույն օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 14-րդ, 18-20-րդ և 22-23-րդ կետերով նախատեսված հարցերի ներկայացումը ժողովների քննարկմանը.

46) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի ավելացումը.

27) պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը.

38) գույքի շուկայական արժեքի որոշումը՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով.

49) սույն օրենքով նախատեսված դեպքերում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը.

510) Ընկերության գործադիր մարմնի ձևավորումը, դրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, տնօրենի (գլխավոր տնօրենի), վարչության, տնօրինության անդամների վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգն ու պայմանները.

11) Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.

612) խորհրդին կից հանձնաժողովների (հանձնախմբերի) ձևավորումը, այդ թվում՝ աուդիտի.

713) Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը.

814) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

9) սույն օրենքի IX գլխով նախատեսված գործարքների կնքումը.

10) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը.

11) տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, բացառությամբ սույն օրենքի 74-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված դեպքերի.

12) ժողովների օրակարգի հաստատումը.

13) ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը՝ սույն օրենքի X գլխի դրույթներին համապատասխան.

~~14) սույն օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 8-րդ, 12-14-րդ և 22-23-րդ կետերով նախատեսված հարցերի ներկայացումը ժողովների քննարկմանը:~~

~~15) Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը:~~

1615) Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.

1716) Ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամսյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.

1817) Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.

1918) դուստր և կախյալ ընկերությունների ստեղծումը, այդ Ընկերություններին մասնակցությունը, եթե կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ այդ իրավասությունը վերապահված է խորհրդին և, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում.

2019) Ընկերության մասնաձյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը.

2120) այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում.

2221) Ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված այլ գործարքների կնքումը՝ սույն օրենքի VIII.1-ին **գլխով գլխում** նախատեսված դեպքերում.

22) սույն օրենքի IX գլխով նախատեսված գործարքների կնքումը.

23) Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.

24) ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը.

25) Ընկերության հաստիքացուցակի հաստատումը.

26) սույն օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

~~2. Սույն օրենքի 83-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությամբ նախատեսված դեպքում խորհրդի իրավասությանը պատկանող հարցերը ենթակա են ժողովի իրավասությանը, եթե Ընկերության կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ այդ հարցերը չեն վերապահվել գործադիր մարմնին:~~

32. Կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված իրավասությունները կարող են վերապահվել ժողովին:

43. Կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ սույն հոդվածի 1-ին մասի **21-րդ և 23-25-րդ կետերով սահմանված իրավասությունները կարող են վերապահվել Ընկերության գործադիր մարմնին՝ անկախ Ընկերությունում խորհուրդ ստեղծված լինելու հանգամանքից, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 1-6-րդ, 9-րդ, և 15-2024-րդ և 1023-2625-րդ կետերով սահմանված իրավասությունները կարող են վերապահվել Ընկերության գործադիր մարմնին, եթե Ընկերությունում խորհուրդ չի ստեղծվել:**

~~4. Կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ սույն հոդվածի 1-ին մասի 17-րդ, 21-րդ և 23-25-րդ կետերով սահմանված իրավասությունները կարող են վերապահվել Ընկերության գործադիր մարմնին՝ անկախ Ընկերությունում խորհուրդ ստեղծված լինելու հանգամանքից:»:~~

Հոդված 4446. Օրենքի 85-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասի առաջին պարբերությունում «բաժնետոմսերի» բառից հետո լրացնել «կամ դրանցով տրամադրվող ձայների» բառերը:

2) 3-րդ մասի 3-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Գումարային (կունուլյատիվ) քվեարկության ժամանակ յուրաքանչյուր քվեարկող բաժնետոմսի սեփականատեր ունի իրեն տրամադրված ձայների քանակի և խորհրդի ընտրվող (վերընտրվող) անդամների քանակի բազմապատիկին հավասար ձայների քանակ:»:

3) 5-րդ մասի չորրորդ պարբերությունում «ընկերության 10-ից ավելի տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող» բառերը փոխարինել «Ընկերության քվեարկող բաժնետոմսերի կամ դրանցով տրամադրվող ձայների քանակի 10-ից ավելի տոկոսին տիրապետող» բառերով:

Հոդված 4247. Օրենքի 87-րդ հոդվածի՝ 3-րդ մասի 1-ին պարբերությունում լրացնել հետևյալ բովանդակությամբ երկրորդ նախադասություն.

«Սույն օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժողովի այն իրավասությունների վերաբերյալ որոշումները, որոնք վերապահվել են խորհրդի իրավասությանը, ընդունվում են խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների 3/4-ով, եթե սույն օրենքով, կանոնադրությամբ կամ ժողովի հաստատած խորհրդի կանոնակարգով այլ բան նախատեսված չէ:»:

Հոդված 4348. Օրենքի 88-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի՝

ա. 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Ընկերության գործադիր մարմնի իրավասությանն են պատկանում Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ սույն օրենքով կամ կանոնադրությամբ ժողովի կամ խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի:»:

բ. 5-րդ հիմնգերոդը պարբերությունում լրացնել հետևյալ բովանդակությամբ երրորդ և չորրորդ նախադասություններ.

«խորհրդի բացակայության դեպքում գործադիր մարմնի հետ պայմանագիր կնքում է ժողովի կողմից որոշված անձը: Այն դեպքում, երբ ընկերությունն ունի մեկ բաժնետեր, որը զբաղեցնում է նաև գործադիր մարմնի պաշտոնը, գործադիր մարմնի պաշտոնը զբաղեցնող անձի հետ պայմանագիր կնքում է ընկերությունը՝ ի դեմս միակ բաժնետիրոջ կամ վերջինիս կողմից լիազորված անձի:»

2) լրացնել նոր 2.1-2.2-րդ մասեր.

«2.1. Ընկերության միանձնյա գործադիր մարմնի բացակայության, ինչպես նաև միանձնյա գործադիր մարմնի կամ կառավարող կազմակերպության կողմից իրենց լիազորությունների իրականացման անհնարինության այլ դեպքերում Ընկերության գործադիր մարմնի լիազորությունները կարող է իրականացնել կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ նախապես որոշված (նշանակված) Ընկերության գործադիր մարմնի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձը մինչև Ընկերության նոր գործադիր մարմնի ձևավորումը կամ Ընկերության գործող միանձնյա գործադիր մարմնի կամ կառավարող կազմակերպության կողմից իրենց լիազորությունների իրականացման անհնարինության հիմքերի վերացումը:

2.2. Ընկերության գործադիր մարմնի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձի իրավասությանն է պատկանում Ընկերության գործող գործադիր մարմնի բոլոր լիազորությունների իրականացումը, եթե կանոնադրությամբ Ընկերության գործադիր մարմնի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձի իրավասությունը սահմանափակված չէ:»:

Հոդված 4449. Օրենքի 91-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի առաջին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար քաղ ընկերությունում ընտրվում է, իսկ փակ ընկերությունում կարող է ընտրվել Ընկերության վերստուգող հանձնաժողով (վերստուգող):»:

2) 2-րդ մասում «Ընկերության՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր» բառերը փոխարինել «Ընկերության քվեարկող բաժնետոմսերի կամ դրանցով տրամադրվող ձայների քանակի առնվազն 10 տոկոսին տիրապետող» բառերով:

:

Հոդված 4550. Օրենքի 92-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի երկրորդ պարբերությունում «Ընկերության՝ քվեարկող բաժնետերերի առնվազն հինգ տոկոսի սեփականատեր» բառերը փոխարինել «Ընկերության քվեարկող բաժնետոմսերի կամ դրանցով տրամադրվող ձայների քանակի առնվազն 5 տոկոսին տիրապետող» բառերով:

Հոդված 51. Օրենքի 93-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությունում «պարտադիր է» բառերից հետո լրացնել «Ընկերությունում վերստուգող հանձնաժողով (վերստուգող) ընտրված լինելու դեպքում:» բառերը:

Հոդված 52. Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունում «պետական կառավարման» բառերից հետո լրացնել «համակարգի» բառը:

Հոդված 53. Օրենքի 95-րդ հոդվածի 1-ին մասի «ր» կետում «պետական կառավարման» բառերից հետո լրացնել «համակարգի» բառը:

Հոդված 4654. Եզրափակիչ և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ ամիս հետո:

2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը թողարկված և տեղաբաշխված փաստաթղթային ձևի բաժնետոմսերը և դրանց հավաստագրերը սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո համարվում են վավեր:

3. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-2-րդ կետերով, 3-րդ հոդվածով և 19-րդ հոդվածի 1-2-րդ կետերով նախատեսվող կարգավորումները կիրառվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ստեղծվող ընկերությունների նկատմամբ:

4. Սույն օրենքով նախատեսված՝ աշխատակիցների բաժնետիրացման վերաբերյալ կարգավորումները չեն տարածվում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը նախաձեռնված աշխատակիցների բաժնետիրացման գործընթացի նկատմամբ:

5. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ընկերության բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի) մասին որոշում ընդունելու դեպքում ընկերության բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի) գործընթացի և արդյունքների, այդ թվում՝ համախմբման (կոնսոլիդացիայի) արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի նկատմամբ կիրառվում են մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը գործող նորմերը:

6. Հետզնման ենթակա բաժնետոմսերը երրորդ անձանց իրավունքներով ծանրաբեռնված լինելու դեպքում Ընկերության բաժնետերերի ռեեստր վարողի՝ սույն օրենքի 30-րդ հոդվածով սահմանված ծանուցման պարտականությունը կիրառվում է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ընդունված՝ ընկերության բաժնետոմսերի հետզնման համապատասխան որոշումների դեպքում:

ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ

«ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

«Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) մի շարք կարգավորումներ ներկայումս համահունչ չեն գործարար աշխարհում տեղի ունեցող զարգացումներն, որոնք իրենց ազդեցությունն են ունենում կորպորատիվ իրավունքի զարգացման վրա: Նշվածը հատկապես վերաբերում է ընկերության կառավարման մարմինների լիազորություններին, հասարակ բաժնետոմսերի տեսակների և դասերի համակարգին, բաժնետոմսերի վաճառքի ու հետզման դեպքերին, կոտորակային բաժնետոմսերի տիրապետման, օգտագործման և տնօրինման հնարավորությանը, ընկերության բաժնետերերի շահերի հավասարակշռմանը և նրանց պաշտպանությանը, խոշոր գործարքների կնքմանը, ընկերության աշխատակիցների բաժնետիրացման ընթացակարգին և այլն: Նշված ոլորտում փոփոխություններ իրականացնելու անհրաժեշտությունը պայմանավորված է նաև ՀՀ կառավարության՝ 2019թ.-ի հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» թիվ 1441-Լ որոշմամբ, որտեղ նույնպես նշվում է կորպորատիվ իրավունքին վերաբերող կարգավորումների՝ ժամանակի զարգացումներից հետ մնալու մասին:

1.1. խոշոր և փոքր բաժնետերերի պաշտպանության լրացուցիչ գործիքներ.

Խոշոր և փոքր բաժնետերերի միջև հաճախ տեղի են ունենում շահերի բախումներ, և շատ դեպքերում դժվար է լինում ապացուցել փոքր բաժնետերերի հանդեպ չարաշահումները: Բացի այդ, պետք է հաշվի առնել նաև խոշոր բաժնետերերի իրավունքները և փորձել հավասարակշռել փոքր և խոշոր բաժնետերերի իրավունքները: Օրինակ՝ խոշոր բաժնետերը, ով ցանկանում է իր ընկերության ռազմավարությունը փոփոխել կամ նոր ուղղություններով զարգացնել իր բիզնեսը, պետք է ողջամիտ հնարավորություն ունենա լիարժեք վերահսկողություն իրականացնելու ընկերության նկատմամբ: Իրենց հերթին, փոքր բաժնետերերը պետք է հնարավորություն ունենան առանց որևէ պատճառի և առանց չարաշահման փաստն ապացուցելու դուրս գալ ընկերությունից՝ ստանալով ողջամիտ փոխհատուցում:

Այսպես, երբ որևէ անձ իր տիրապետության ներքո է կենտրոնացնում բաժնետոմսերի գերակշռող մասը, ապա, մի կողմից, նույնիսկ ամենալայն իրավական երաշխիքների պարագայում փոքր բաժնետերերի համար ընկերությունում մասնակցությունը դառնում է խիստ ձևական, քանի որ նրանք փաստացի գրեթե որևէ ազդեցություն չունեն ընկերության վրա, իսկ խոշոր բաժնետիրոջ համար նման փոքր բաժնետերերի առկայությունը որոշակի բարդություններ է առաջացնում ընկերության կառավարման ընթացքում: Նման դեպքում փոքր բաժնետերերի առկայությունը նաև լրացուցիչ ծախսեր է առաջացնում ընկերության և, հետևաբար, խոշոր բաժնետիրոջ համար, բարդություններ ռեեստրի վարման ընթացքում և այլն:

Ընկերության բաժնետոմսերի պարտադիր վաճառքի պահանջի իրավունքը (squeeze out) և պարտադիր գնման պահանջի իրավունքը (sell out) հնարավորություն են տալիս կարգավորել ներկայացված խնդիրները՝ հավասարակշռելով թե՛ փոքր, թե՛ խոշոր բաժնետերերի շահերը: Այսպես, սույն ինստիտուտի ուսումնասիրությունը վկայում է, որ բաժնետոմսերի պարտադիր վաճառքի պահանջի իրավունքը նպատակ է հետապնդում բարձրացնել բաժնետիրական ընկերության կառավարման և

գործունեության արդյունավետությունը և պայման հանդիսանալ արդյունավետ տնտեսական գործունեություն իրականացնելու համար: Միևնույն ժամանակ, խնդրո առարկա ինստիտուտի նախատեսմամբ նպատակ է հետապնդվում ապահովել տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության սահմանադրական սկզբունքները: Մասնավորապես, Սահմանադրական դատարանը, իր 13.07.2010թ.-ի թիվ ՍԴՈ-903 որոշմամբ նշել է, որ տնտեսական գործունեության ազատությունը իրավաբանորեն երաշխավորված հնարավորությունն է՝ ազատորեն օգտագործելու սեփական ընդունակություններն ու գույքն օրենքով չարգելված տնտեսական գործունեության համար, այն է՝ իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Իսկ, ազատ շուկայական տնտեսական հարաբերությունների պայմաններում բաժնետիրական ընկերության կազմակերպչիրավական ձևը խոշոր ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու առավել բարդ, բայց արդյունավետ եղանակն է, որի պարագայում առկա է ընդհանուր կորպորատիվ շահերի ապահովման խնդիր: Հետևաբար, բարձր արդյունավետությամբ կառավարվող բաժնետիրական ընկերությունների պարագայում կապահովվեն ընդհանուր կորպորատիվ շահերը՝ նպաստելով տնտեսական գործունեության ազատության կենսագործմանը: Ավելին, նման դեպքերում փոքր բաժնետերերը հետապնդում են բացառապես տնտեսական շահ՝ ի տարբերություն խոշոր բաժնետիրոջ, որը անձնական շահ է հետապնդում, քանի որ, ըստ էության, ընկերության ակտիվների հիմնական մասը տնօրինվում և տիրապետվում են նրա կողմից՝ շոշափելով նաև վերջինիս սեփականության իրավունքները, ինչի արդյունքում խոշոր բաժնետերը շահագրգռված է ընկերության և իր ակտիվների ձկուն կառավարմամբ:

Նման դրույթներ առկա են աշխարհի տարբեր երկրներում և բաժնետերերի շահերի հավասարակշռման և պաշտպանության ամենակիրառելի գործիքներից մեկն են: Օրինակ՝ Դանիայում ընկերությունների վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսվում է, որ այն բաժնետերերը, ովքեր տիրապետում են կանոնադրական կապիտալի և ձայների ավելի քան 90%-ին, կարող են պահանջել մյուս բաժնետերերից, որ իրենց բաժնետոմսերը վաճառվեն այդ բաժնետիրոջ կողմից: Փոքր բաժնետերերը նույնպես ունեն համարժեք իրավունքապահանջելու, որ կանոնադրական կապիտալի 90%-ի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը գնի իրենց բաժնետոմսերը և այդպիսով նրանք դուրս գան ընկերության բաժնեմասնակցությունից²⁴: Գերմանիայում այս շեմը կազմում է 95%²⁵, այս շեմը 95% է կազմում նաև Ուկրաինայում²⁶, Նիդեռլանդներում²⁷, Վրաստանում²⁸, Ղազախստանում²⁹, ինչպես նաև այնպիսի երկրներում, որտեղ squeeze out/sell out կարգավորումները տարածվում են միայն ցուցակված ընկերությունների վրա. օրինակ՝ Իտալիայում³⁰, Լյուքսեմբուրգում³¹ : Նշվածը մեծապես

²⁴Դանիական ընկերությունների ակտ բաժին 70:

²⁵ Anton Babak - Adoption of Squeeze-Out and Sell-Out Rights of Shareholders in Ukraine on the Basis of a Comparison of EU, Germany and USA, Central European University March 30, 2012, էջ 22

²⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 31, այստեղ նկարագրված օրենքը չի ստորագրվել նախագահի կողմից, իսկ 95%-անոց շեմն ամրագրվել է հետագայում ընդունված օրենքով՝ http://search.ligazakon.ua/l_doc2.nsf/link1/T171983.html

²⁷ The Netherlands, Squeeze-out Guide, IBA Corporate and M&A Law Committee 2014, էջ 2

²⁸ LAW OF GEORGIA ON ENTREPRENEURS, հոդված 53⁴

²⁹ <https://www.kinstellar.com/insights/detail/778/kazakhstan-introduces-new-squeeze-out-mechanism-for-major-shareholders>

³⁰Italy, Squeeze-out Guide, IBA Corporate and M&A Law Committee 2014, էջ 2

³¹Law of 21 July 2012 on mandatory squeeze-out and sell-out of securities of companies currently admitted or previously admitted to trading on a regulated market or having been offered to the public and amending the law of 23 December 1998 establishing a financial sector supervisory commission, հոդված 4

այսպիսով սահմանված է ԵՄ 2004 թ.-ի ապրիլի 21-ի 2004/25/EC դիրեկտիվով³², որի 15-րդ հոդվածը թույլ է տալիս բաժնետոմսերի պարտադիր վաճառքի կամ հետգնման շեմը սահմանել 90-ից մինչև 95%: Նշենք նաև, որ նշված երկրներից մի քանիսի կարգավորումները վերաբերում են միայն ցուցակված ընկերություններին (օրինակ՝ Իտալիա, Ֆրանսիա Բելգիա), այնուամենայնիվ, հետաքրքրական է, որ այդ երկրներում նույնպես սահմանված է 90-ից մինչև 95% տոկոս սահմանաչափը:

Հատկապես կարևոր է, որ պարտադիր վաճառքի կամ գնման պահանջի իրավունքները կարող է իրականացվել ընկերության բաժնետոմսերի որոշակի տոկոսին տիրապետող բաժնետիրոջ կողմից: Այլ կերպ ասած, այս պահանջները կիրառելի են, երբ ընկերության փաստացի վերահսկողությունը իրականացնում է մեկ անձ, ով ցանկանում է ստանալ բացարձակ վերահսկողություն ընկերության նկատմամբ: Այս մոտեցումը որդեգրել են մի շարք պետություններ, որոնց թվում են Դանիան, Ֆինլանդիան, Շվեդիան, Մեծ Բրիտանիան և միաժամանակ այն ստացել է հավանություն Եվրոպական մոդելային կորպորատիվ ակտի հեղինակների կողմից (ԵՄԿԱ)³³:

Այս համատեքստում անդրադառնալով նախատեսվող կարգավորման սահմանադրականության հարցին, մասնավորապես, սեփականության իրավունքին համապատասխանության տեսանկյունից, նշենք, որ, Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը: Իր հերթին, Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ հոդվածներով սահմանվում է, որ.

«1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

(...)

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

(...)»:

Ինչպես նկատում ենք, Սահմանադրությունը, երաշխավորելով սեփականության իրավունքը, այն է օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու յուրաքանչյուրի իրավունքը, միաժամանակ նախատեսել է որոշակի դեպքերում այդ իրավունքի սահմանափակման հիմքերը: Ի թիվս այլոց, այդպիսի հիմքեր են՝

1. հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով սեփականության իրավունքի սահմանափակումը՝ օրենքով սահմանված դեպքերում, և

2. սեփականությունից զրկումը՝ դատական կարգով և օրենքով սահմանված դեպքերում:

Այս տեսանկյունից հարկ է նշել, որ սեփականության իրավունքի սահմանափակումների հիմնախնդրին բազմիցս անդրադարձել է նաև Սահմանադրական դատարանը՝ ընդ որում, նաև կորպորատիվ իրավահարաբերությունների տեսանկյունից: Այսպես, 13.07.2010թ.-ի թիվ ՍԴՈ-903 որոշման շրջանակներում Սահմանադրական դատարանը անդրադարձել է բաժնետոմսերի հետգնման

³² DIRECTIVE 2004/25/EC OF THE EUROPEAN PARLIAMENT AND OF THE COUNCIL of 21 April 2004 on takeover bids

³³ ԵՄԿԱ առաջին հրատարակություն, 2017թ., Nordic & European company law, LSN research Paper series, No. 16-26, European Model Companies Act, First Edition, 2017, by Paul Kruger Andersen and Jan Bertil Andersson, էջեր՝ 234-237, 264-65:

ինստիտուտին բաժնետոմսերի համախմբում (կոնսոլիդացիա) իրականացնելու դեպքում: Այդ, որոշման շրջանակներում կարելի է առանձնացնել Սահմանադրական դատարանի հետևյալ ուշագրավ դիրքորոշումները.

- բաժնետիրական ընկերությունը որպես ձեռնարկատիրական գործունեության արդյունքում հավելյալ գույքային միջոցներ (շահութաբաժիններ) ստանալու մտադրությամբ միավորված անձանց կազմակերպություն ունի ոչ միայն առանձին բաժնետերերի մասնավոր շահերի հավասարակշռման, այլև **ընդհանուր կորպորատիվ շահերի ապահովման խնդիր**: Հակառակ դեպքում ընկերության կառավարումը կդառնա **անարդյունավետ**, իսկ դա հետագա անդրադարձ կունենա հենց նույն բաժնետերերի **սեփականության իրավունքի իրականացման արդյունավետության վրա**:

- Բաժնետոմսերի համախմբումը տնտեսապես արդարացված գործընթաց է, որը կազմում է բաժնետիրական ընկերության՝ որպես ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտի, տնտեսական ազատության դրսևորումներից մեկը: Հաշվի առնելով, որ **կոտորակային բաժնետոմսերի պարտադիր հետզնման ինստիտուտը հանդիսանում է տնտեսապես արդարացված գործընթաց, ինչպես նաև նկատի ունենալով խնդրո առարկայի վերաբերյալ միջազգային փորձը՝ սահմանադրական դատարանը գտել է, որ բաժնետերերի մեծամասնության որոշմամբ կոտորակային բաժնետոմսերի օրենքով նախատեսված պարտադիր հետզնման ինստիտուտն ինքնին իրավաչափ է**:

- Գույքի նկատմամբ անձի սեփականության իրավունքի իրականացումը բացարձակ չէ և կարող է սահմանափակվել հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով, ինչը **առավել ևս վերաբերում է այն դեպքերին, երբ խոսքը ձեռնարկատիրական (տնտեսական) գործունեությամբ համախմբված անձանց մասին է**: Դա, ինչպես շեշտել է Սահմանադրական դատարանն իր 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, ոչ միայն իր բնույթով իրավունքի սահմանափակման առանձնահատուկ ինստիտուտ է, այլև անխուսափելիորեն նշանակում է, որ **առկա է իրավաչափ նպատակի և սեփականության իրավունքի համադրման անհրաժեշտություն**:

Միաժամանակ, Սահմանադրությամբ նախատեսված այդ նույն **իրավաչափ նպատակի համար կոնկրետ օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքի սահմանափակում կարող է իրականացվել միայն անհրաժեշտ փոխհատուցման դեպքում, որը կերաշխավորի սեփականության իրավունքի ապահովման շարունակականությունը**: Իրավակարգավորման գլխավոր խնդիրը, ինչպես վկայում է նաև միջազգային փորձը, համարժեք փոխհատուցման ապահովումն ու այդ շարունակականության երաշխավորումն է:

- «Սեփականությունից զրկում» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությանը սահմանադրական դատարանն անդրադարձել է նշված ՍԴՈ-630 որոշման մեջ, որում, առանձնացնելով սեփականության իրավունքը սահմանափակելու՝ Սահմանադրությամբ թույլատրվող դեպքերը, **սեփականությունից զրկումը բնութագրել է որպես պատասխանատվությունից բխող հարկադիր գործողություն, որի դեպքում սեփականության իրավունքը դադարեցվում է անհատույց և առանց շարունակականության երաշխավորման**:

- Բաժնետիրական ընկերությունների բնույթն այնպիսին է, որ ընկերության գործունեության շրջանակներում բախվում են բաժնետերերի և ընկերության կառավարման մարմինների շահերը, բաժնետերերի տարբեր խմբերի շահերը: Վերջինս առավել ցայտուն դրսևորվում է խոշոր և մանր բաժնետերերի հարաբերություններում: **Խոշոր բաժնետերերը հանդիսանում են ընկերության ռազմավարական ներդրողները, որոնք հնարավորություն ունեն կանխորոշելու ընկերության որոշումները**: Նրանց հիմնական շահը կայանում է նրանում, որ նրանք ձգտում են ընկերության գործունեությունից **ձեռք**

բերել որոշակի արդյունքներ՝ անհրաժեշտ կառավարչական որոշումներ ընդունելու միջոցով: Մանր բաժնետերը ներդրող է, ով չունի ընկերության որոշումները կանխորոշելու, ընկերության գործունեության վրա ազդելու հնարավորություն: Մանր բաժնետիրոջ հիմնական շահը կայանում է նրանում, որ ձգտում է հասնել բաժնետոմսերում իր ներդրած միջոցների որոշակի շահութաբերության:

Իրավական պետության կողմից ազատ տնտեսական գործունեության կարգավորումը, ի թիվս այլոց, պետք է նպատակ հետապնդի ապահովելու արդարացի հավասարակշռություն տնտեսական գործունեության մասնակիցների, տվյալ դեպքում՝ բաժնետիրական ընկերության խոշոր և մանր բաժնետերերի շահերի միջև:

Անդրադառնալով բաժնետոմսերի պարտադիր վաճառքի ինստիտուտին Սահմանադրական դատարանի մեջբերված որոշման լույսի ներքո՝ նկատում ենք, որ.

- այս ինստիտուտի նախատեսումը նպատակ է հետապնդում հավասարակշռել խոշոր և փոքր բաժնետերերի իրավունքները, ապահովել արդյունավետ կորպորատիվ կառավարումը, այլ կերպ՝ կարգավորումը հետապնդում է **ընդհանուր կորպորատիվ շահերի ապահովման խնդիր**.

- կարգավորումը նախատեսելիս **հաշվի է առնվել դրա տնտեսապես արդարացվածությունը և միջազգային փորձում տարածվածությունը**.

- խնդրի առարկա ինստիտուտով նպատակ է հետապնդվում ապահովել ինչպես այլոց՝ տվյալ դեպքում 95 և ավել տոկոս քվեարկելու ծայնի իրավունք տվող հասարակ (սովորական) բաժնետոմսերին ուղղակիորեն տիրապետող բաժնետիրոջ, այնպես էլ հանրության շահերը, քանի որ հանրության շահերից է բխում նաև արդյունավետ կորպորատիվ կառավարման համակարգերի, հետևաբար նաև, գործուն և կայացած կորպորատիվ միջավայրի առկայությունը: Հետևաբար, **նախատեսվող կարգավորմամբ հետապնդվում է իրավաչափ նպատակ**.

- իր հերթին, կարգավորմամբ նախատեսվում է բաժնետոմսերի պարտադիր վաճառքի պահանջի իրավունքի իրացումը՝ **միայն անհրաժեշտ փոխհատուցման դեպքում՝ ապահովելով նաև սեփականության իրավունքի շարունակականությունը**: Ավելին, ~~նախատեսվող առաջարկվող~~ կարգավորմամբ ~~հնարավորություն է նախատեսված որպեսզի կողմերը կարողանան միմյանց միջև համաձայնեցնել ինչպես փոխհատուցման չափը, այնպես էլ բաժնետոմսերի պարտադիր վաճառքի կամ գնման այլ պայմանները~~: ~~Իր հերթին, համաձայնության չգալու դեպքում~~ նախատեսվել է բաժնետոմսերի պարտադիր վաճառքի պահանջի իրավունքի իրացման դատական պաշտպանության հնարավորությունը: Հետևաբար, նախատեսվող կարգավորումը սեփականությունից զրկման դրսևորում չէ:

Ընդհանրացնելով նկատում ենք, որ Նախագծով նպատակ է հետապնդվում հավասարակշռել ընկերության խոշոր և փոքր բաժնետերերի շահերը՝ պայմանավորված կոնկրետ իրավիճակում նրանցից յուրաքանչյուրի դերով և նշանակությամբ կորպորատիվ շահերի ապահովման տեսանկյունից: Նախատեսվող կարգավորումը թույլ է տալիս բաժնետոմսերի պարտադիր վաճառքի պահանջի կամ պարտադիր գնման պահանջի իրավունքների իրացման գործընթացում հաշվի առնել ընկերության բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքներն ու օրինական շահերը և իրականացվում է բաժնետիրական ընկերության կառավարման և գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Հարկ է նաև անդրադառնալ խնդրի առարկա կարգավորման վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այուհետ՝ ՄԻԵԴ), ինչպես նաև տարբեր երկրների սահմանադրական դատարանների դիրքորոշումներին:

Այսպես, *Բռամելիդը և Մալմսթրոմը ընդդեմ Շվեդիայի* գործում ՄԻԵԴ-ը առաջին անգամ անդրադարձել է բաժնետոմսերի պարտադիր վաճառքի պահանջի իրավունքին սեփականության իրավունքի հետ հարաբերակցության տեսանկյունից և մասնավորապես նշել, որ նման կարգավորումը չի վերաբերում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 1-ին Արձանագրության 1-ին հոդվածով սահմանված սեփականությունից զրկելու դեպքերին, քանի որ խնդրո առարկա դեպքում գործ ունենք մասնավոր անհատների միջև հարաբերության հետ: Հետևաբար, ՄԻԵԴ-ը խնդիրը դիտարկել է այն տեսանկյունից, թե արդյոք խնդրո առարկա կարգավորմամբ չի ստեղծվում այնպիսի անհավասարության վիճակ, երբ որևէ անձ կարող է կամայականորեն և անարդարացիորեն զրկվել սեփականությունից՝ ի օգուտ այլ անձի, և գտել է, որ նման իրավիճակ խնդրո առարկա դեպքում առկա չէ (տե՛ս European Court of Human Rights, Decision of Commission of 12 October 1982 on the admissibility of the applications, *Bramelid and Malmström* (Application no. 8588/79 and 8589/79)): ՄԻԵԴ-ը նման խնդրի անդրադարձել է նաև *Ֆրեյթագն ընդդեմ Գերմանիայի* գործում (տե՛ս European Court of Human Rights, Judgement of 19 July 2007, *Freitag v. Germany* (Application no. 71440/01))՝ վերահաստատելով *Բռամելիդը և Մալմսթրոմը ընդդեմ Շվեդիայի* գործում իր դիրքորոշումները:

Իր հերթին, Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանը նույնպես իր՝ 2007թ.-ի մայիսի 30-ի որոշմամբ անդրադառնալով բաժնետոմսերի պարտադիր վաճառքի պահանջի իրավունքին այն դիտարկել է հետապնդվող նպատակի և ընտրված միջոցի համաչափության տեսանկյունից և եզրակացրել, որ խնդրո առարկա ինստիտուտը և դրա վերաբերյալ կարգավորումները համապատասխանում են համաչափության և անհրաժեշտ փոխհատուցման սկզբունքներին և իրավաչափ են, ուստի, չեն խախտում սեփականության իրավունքը (տե՛ս BVerfG NZG 2007, 587)³⁴:

Խնդրին իր՝ 2018թ.-ի հունիսի 27-ի որոշմամբ անդրադարձել է նաև Ավստրիայի Սահմանադրական դատարանը՝ կրկին չհամարելով, որ խնդրո առարկա ինստիտուտի կարգավորումները խախտում են սեփականության իրավունքը: Մասնավորապես, Ավստրիայի սահմանադրական դատարանը նշել է, որ խնդրո առարկա կարգավորումներով ապահովվող արդյունավետ կորպորատիվ կառուցակարգերի նախատեսումը բխում է հանրային շահից, քանի որ թույլ է տալիս ավստրիական ընկերություններին արդյունավետ արձագանքել արագ փոփոխվող ազգային և միջազգային գործարար միջավայրին: Իր հերթին, 90% շեմի նախատեսումը նույնպես իրավաչափ է, քանի որ փոքր բաժնետերերը, որոնք չեն տիրապետում ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի ավելի քան 10%-ին, սովորաբար չեն կանխորոշում ընկերության քաղաքականությունն ու ռազմավարությունը և հետապնդում են բացառապես տնտեսական շահ: Փոխարենը, 90% և ավելի ձայնի իրավունքին տիրապետող բաժնետերերը անձնական շահ են հետապնդում և պետք է հնարավորություն ունենան կանխորոշել ընկերության գործողությունները, ռազմավարությունը և ապագան: Մինևույն ժամանակ, հաշվի առնելով, որ փոքր բաժնետերերը ստանում են անհրաժեշտ փոխհատուցում, Ավստրիայի Սահմանադրական դատարանը գտել է, որ նրանց տնտեսական շահը ապահովվում է³⁵:

Վերոգրյալի համատեքստում պետք է նկատել նաև, որ Նախագծով նախատեսվող կարգավորումը, նախևառաջ, բացի բաժնետոմսերի պարտադիր վաճառքի պահանջի իրավունքից նախատեսում է բաժնետոմսերի պարտադիր գնման պահանջի իրավունքը, ինչը լրացուցիչ երաշխիք է ընկերության բաժնետերերի շահերի հավասարակշռման տեսանկյունից, քանի որ ոչ միայն խոշոր բաժնետերերը կարող է պահանջ ներկայացնել փոքր բաժնետիրոջը, այլ նաև փոքր բաժնետերերը կարող է

³⁴ Eiji Takahashi, Squeeze-out of Minority Shareholders, The Constitutionality Question, էջ 82

³⁵ Տե՛ս՝ <https://www.mondaq.com/austria/shareholders/732342/squeezing-out-minority-shareholders-vested-interest-vs-economic-interest>

համապատասխան պահանջ ներկայացնել խոշոր բաժնետիրոջը: Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ նախատեսվող կարգավորումը հնարավորություն է ընձեռում դատական կարգով վիճարկել ներկայացված պահանջը՝ հավելյալ երաշխիքներ ստեղծելով պահանջ ստացած կողմի համար, որի դեպքում կարող են էլ քննության առարկա դառնալ ~~ինչպես~~ վճարման ենթակա փոխհատուցման չափը ~~այնպես էլ փորձագետի համապատասխան եզրակացությունը և պահանջի օրինականությանը վերաբերող այլ հանգամանքները:~~

Ամփոփելով կարող ենք նկատել, որ Նախագծով նախատեսված կարգավորումը համապատասխանում է և՛ Սահմանադրական դատարանի, և՛ ՄԻԵԴ-ի արտահայտած իրավական դիրքորոշումներին: Միաժամանակ, Նախագծով նախատեսվող կարգավորմամբ արտացոլված են միջազգային փորձում առկա հիմնական երաշխիքները, որոնց լույսի ներքո ապահովվում է սեփականության իրավունքի սահմանափակման համաչափությունը: Այլ կերպ, նախատեսվող կարգավորումը, ըստ էության, իրավաչափ է:

1.2. Հասարակ (սովորական) բաժնետոմսերի դասակարգում.

Օրենքի համակարգային վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ ընկերությունն իրավունք ունի տարբեր դասերի բաժնետոմսեր թողարկել միայն արտոնյալ բաժնետոմսերի տեսքով, որոնք սահմանափակ դեպքերում են դրանց իրավատերերին տալիս քվեարկելու իրավունք: Այսինքն, գործող օրենսդրությունը բաժնետիրական ընկերությանը հնարավորություն չի տալիս թողարկելու տարբեր դասերի հասարակ բաժնետոմսեր, ինչը գործնականում արդյունավետ չէ հետևյալ պատճառաբանությամբ.

- հատկապես վենչուրային կապիտալի ու «իրեշտակ ներդրողների»³⁶ դեպքում ներդրողները հաճախ պահանջում են այնպիսի բաժնեմասնակցություն, որի պարագայում նրանք հնարավորություն կունենան արտոնյալ պայմաններով շահաբաժիններ ստանալ և միաժամանակ հնարավորություն կունենան քվեարկելու ավելի լայն հարցերով, քան արտոնյալ բաժնետոմսերի գործող կարգավորումներով.

- գործնականում պատահում են նաև դեպքեր, երբ բաժնետերերը ցանկանում են ստանալ միանման շահութաբաժիններ, սակայն միաժամանակ՝ կախված իրենց ներգրավվածության մակարդակից, փորձից, մասնագիտացումից կամ համբավից, ցանկանում են ունենալ առավել շատ ձայներ, քան իրենց բաժնետոմսերի քանակն է: Նման դեպքերում բաժնետիրոջ համար այդքան առաջնային չէ բաժնեմասնակցությամբ որոշվող շահութաբաժնի չափը, որքան ընկերության ուղղությունները որոշելու, այն ղեկավարելու և վերահսկելու արդյունավետ հնարավորությունները: Նման ներդրող-բաժնետերերի առկայությունը բխում է նաև հենց ընկերության շահերից.

- առհասարակ, բաժնետոմսերը ֆինանսական գործիքներ են, այդ իսկ պատճառով հարկավոր է ներդրողներին հնարավորություն տալ ընտրելու, թե ինչ տեսակի բաժնետոմս են ուզում գնել:

Այսպես, թե՛ հասարակ (սովորական) և թե՛ արտոնյալ բաժնետոմսերը կարող են տալ ոչ միայն մեկ, այլև մեկից ավելի ձայնի իրավունք: Այս մասին են վկայում նաև մի շարք երկրների կորպորատիվ իրավունքի վերաբերյալ օրենսդրությունները. օրինակ՝ Իտալիան, Լյուքսեմբուրգը, Մեծ Բրիտանիան, Իռլանդիան, Դանիան և Շվեդիան³⁷: Այլ կերպ, առանձին դասերի հասարակ բաժնետոմսերով դրանց տիրապետողներին կարող է հնարավորություն տրվել ձեռք բերել տարբեր բնույթի և չափի

³⁶ Անձ ով ունի բավականաչափ ֆինանսական կարողություն և ֆինանսապես աջակցում է փոքր սկսնակ (startup) ընկերությունների՝ այդ ընկերությունում մասնակցություն ձեռք բերելու դիմաց:

³⁷ԵՄԿԱ, էջեր՝ 95-96

իրավունքներ: Որոշ երկրների օրենսդրությամբ էլ սահմանված է, թե մեկ բաժնետոմսը առավելագույնը քանի ձայնի իրավունք կարող է տալ. օրինակ՝ Իտալիայի օրենսդրությամբ մեկ բաժնետոմսը կարող է տալ առավելագույնը 3 ձայնի իրավունք, իսկ ընկերությունը ինքն է ընտրում այդ քանակը՝ ամրագրելով դա իր կանոնադրությամբ, Շվեդիայի օրենսդրությամբ մեկ բաժնետոմսը կարող է տալ առավելագույնը 10 ձայնի իրավունք, իսկ ԵՄԿԱ-ն թույլ է տալիս տարբեր քանակի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տեղաբաշխումը՝ առանց որևէ առավելագույն սահմանաչափ նախատեսելու³⁸:

Նշված մեխանիզմը հնարավորություն է տալիս ներդնել առավել լիբերալ և ճկուն համակարգեր, ինչն իր հերթին կօգնի խթանել օտարերկրյա ներդրողներին Հայաստանի Հանրապետությունում հիմնել ընկերություններ կամ մասնակցություն ունենալ ընկերություններում, որոնք կգործեն ժամանակակից, զարգացած կորպորատիվ իրավունքի տրամաբանությամբ:

1.3. խոշոր գործարքների կարգավորումների ազատականացում.

Ներկայումս ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսը չգերազանցող գույքին առնչվող խոշոր գործարքներ կնքելու վերաբերյալ որոշման ընդունումը վերապահված է ընկերության տնօրենների խորհրդին (այսուհետ՝ խորհուրդ): Սակայն, այսպիսի կարգավորումը որոշակի խոչընդոտներ է ստեղծում այդպիսի գործարքների հաճախակի և արագ կնքելու համար: Ավելին, եթե ընկերությունում խորհուրդ ձևավորված չէ, ապա այդպիսի որոշման կայացումը ինքնաբերաբար վերապահվում է ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին (այսուհետ՝ ժողով): Սակայն, պետք է նկատի ունենալ, որ միշտ չէ, որ բաժնետերերը ցանկանում են այդքան շատ ներգրված լինել գործարքների կնքման գործընթացին՝ ներգրավվելով հաճախ ձևական բնույթ կրող գործընթացներում: Նշվածը կարող է հատկապես կարևոր լինել նոր ստեղծված ընկերությունների համար, քանի որ ենթադրվում է, որ վերջիններս ընկերության գործունեության սկզբնական փուլում չեն տիրապետում մեծածավալ ակտիվներին, համապատասխանաբար հաճախ են կնքում իրենց ակտիվների 25 տոկոսը գերազանցող գործարքներ: Հետևաբար, այս տեսանկյունից ավելի նպատակահարմար կլինի, որպեսզի ընկերությանը ընձեռնվի հնարավորություն տարատեսակ գործարքներ կնքել՝ առանց համապատասխանաբար խորհրդի կամ ժողովի որոշման:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ըստ Համաշխարհային բանկի Doing business ծրագրի՝ «Փոքր բաժնետերերի պաշտպանությունը» մեթոդոլոգիան հատկապես կարևորում է բաժնետերերի իրավունքները կորպորատիվ կառավարման ոլորտում: Մասնավորապես, առանձին ենթացուցիչով գնահատվում է, թե արդյոք բաժնետերերը հնարավորություն ունեն քվեարկել և որոշում կայացնել, երբ գործարքը վերաբերում է ընկերության 51 տոկոս և ավելի ակտիվներին³⁹: Հետևաբար, ընկերության ակտիվների մինչև 50 տոկոսը կազմող գույքին առնչվող գործարքների կնքումը գործադիր մարմնի կողմից չի խոչընդոտում նաև այս ցուցիչով դրական գնահատականի ապահովմանը:

Միևնույն ժամանակ, նկատենք, որ, չնայած այն հանգամանքին, որ ժողովի կողմից հաստատման ենթակա՝ խոշոր գործարքների 50%-անոց շեմը միջազգային փորձի շրջանակներում համարվում է դրական պրակտիկա, նաև առկա են այնպիսի երկրներ, որոնք համանման կարգավորումներ են նախատեսում միայն ցուցակված ընկերությունների համար: Օրինակ, Անգլիայի օրենսդրությունը չի պարունակում առանձին կարգավորումներ՝ նվիրված ընկերության կողմից կնքվող խոշոր գործարքներին: Մասնավորապես, «Ընկերությունների մասին» ակտի (Companies Act 2006)՝ 190-րդ հոդվածի (substantial property transactions: requirement of members' approval) վերլուծությունից պարզ է

³⁸ ԵՄԿԱ, էջեր՝ 95-97

³⁹ <https://www.doingbusiness.org/en/methodology/protecting-minority-investors>

դառնում, որ ՄԹ-ում «խոշոր գործարքներ» եզրույթն ըստ էության նույնացվում է շահագրավածության առկայությամբ գործարքների հետ, քանզի ընկերության բաժնետերերի կողմից հաստատման ենթակա են միայն այն «խոշոր գործարքները», որոնց մյուս կողմն է հանդիսանում ընկերության տնօրենը կամ վերջինիս հետ փոխկապակցված անձը: Ընդգծենք, սակայն, որ այլ կանոններ են գործում ցուցակված ընկերությունների նկատմամբ: Մասնավորապես, համաձայն կարգավորող մարմնի (Financial Conduct Authority) ցուցակման կանոնների (կանոն 10), բաժնետերերի համաձայնությունն անհրաժեշտ է բոլոր այն դեպքերում, երբ ցուցակված ընկերությունը կնքում է գործարք, որը ենթադրում է ընկերության կամ ակտիվների ձեռքբերում կամ օտարում, եթե.

- 5) գործարքի արժեքը հավասար է ցուցակված ընկերության ակտիվների առնվազն 25%-ին,
- 6) գործարքից բխող շահույթը հավասար է ցուցակված ընկերության շահույթի առնվազն 25%-ին,
- 7) գործարքի արդյունքում վճարման ենթակա գումարը հավասար է ցուցակված ընկերության հասարակ բաժնետոմսերի ընդհանուր շուկայական արժեքի առնվազն 25%-ին,
- 8) ցուցակված ընկերության կողմից ձեռքբերվող ընկերության համախառն կապիտալը արժեքը հավասար է ցուցակված ընկերության համախառն կապիտալի առնվազն 25%-ին: (FCR, Ցուցակման կանոններ, կանոն 10.5.1)

Գերմանիայի «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքը (Aktiengesetz) ևս չի պարունակում խոշոր գործարքների կարգավորման վերաբերյալ հատուկ դրույթներ:

Մյուս կողմից, օրինակ, Նոր Զելանդիայի «Ընկերությունների մասին» ակտի (Companies Act, 1993) համաձայն (հոդված 129)՝ որպես «խոշոր» է սահմանում այն գործարքները (major transactions), որոնք ենթադրում են ակտիվների ձեռքբերում կամ ընկերության ակտիվների տնօրինում կամ այնպիսի իրավունքների ձեռքբերում կամ պարտավորությունների ստանձնում, որոնց արժեքը գերազանցում է մինչ գործարքն ընկերության ունեցած ակտիվների արժեքի 50%-ը: Միաժամանակ, խոշոր գործարքները հաստատվում են բաժնետերերի ժողովի որոշմամբ: Այս կանոնից բացառություն է նախատեսված ընկերության գույքը որպես ապահովման միջոց տրամադրելու հետ կապված գործարքների համար:

Վրաստանի «Ձեռնարկատիրության մասին» օրենքի (Law on Entrepreneurs) 54-րդ հոդվածի համաձայն՝ բաժնետերերի ժողովը որոշում է կայացնում գույքի գնման, ընկերության գույքի օտարման կամ ծանրաբեռնման մասին գործարքների վերաբերյալ, եթե գույքի արժեքը գերազանցում է ընկերության ակտիվների արժեքի 50%-ը (ընդ որում, հնարավորություն է ստեղծված կանոնադրությամբ այս շեմը փոխելու), բացառությամբ ընկերության բնականոն տնտեսական գործունեության շրջանակում կատարվող գործարքների:

Խոշոր գործարքների բավականին բարձր շեմ է նախատեսված նաև ԱՄՆ «Կորպորացիաների մոդելային ակտում» (բաժին 12.02), որի համաձայն, ակտիվների վաճառքի, վարձակալության, փոխանակման կամ այլ կերպ օտարման գործարքը պահանջում է ընկերության բաժնետերերի հաստատումը, եթե գործարքի արդյունքում ընկերությունը կննա առանց էական տնտեսական գործունեության (significant continuing business activity): Համարվում է, որ ընկերությունը պահպանել է իր տնտեսական գործունեության էական մասը, եթե գործարքից հետո ընկերության և վերջինիս դուստր ընկերությունների ակտիվները միասին կազմում են նախորդ ֆինանսական տարվա ակտիվների կամ չհարկված շահույթի առնվազն 25%-ը: Նշված կանոնից բացառություն է նախատեսված հետևյալ դեպքերի համար՝ 1) բնականոն տնտեսական գործունեության շրջանակում կատարված գործարքները, 2) ընկերության ակտիվների տրամադրումը որպես պարտավորությունների կատարման ապահովման

միջոց, 3) ակտիվների փոխանցումը դուստր ընկերությանը, 4) ընկերության գույքի բաշխումը բաժնետերերի միջև: Ընդ որում, գործարքը բաժնետերերի կողմից հաստատվելուց առաջ որպես կանոն պետք է նախապես հաստատվի խորհրդի կողմից:

Ի լրումն առանձին երկրների փորձի, որոնք, ըստ էության, թույլ են տալիս խորհրդի իրավասությունների, այդ թվում՝ ընկերության գույքի ձեռքբերման և օտարման հետ կապված գործարքների հաստատման պատվիրակում, հարկ է նշել, որ համաձայն կորպորատիվ կառավարման ՏՀԶԿ սկզբունքների (տե՛ս *խորհրդի իրավասությունների* սկզբունքի D ենթասկզբունք, մաս 1 և 6) ընկերության խորհուրդը պետք է իրականացնի որոշակի առանցքային գործառնություններ, որոնց շարքին է դասվում նաև կապիտալ ծախսեր և ընկերության ակտիվների «վատնման» ռիսկեր ենթադրող գործարքների վերահսկումը:

1.4. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի, տնօրենների խորհրդի և գործադիր մարմնի լիազորությունների պատվիրակման ազատականացումը.

Ներկայումս Օրենքը սահմանում է ժողովի և խորհրդի «բացառիկ» իրավասությունները, ինչն անհնարին է դարձնում մի շարք որոշումների կայացման իրավունքը խորհրդին կամ գործադիր մարմնին պատվիրակելու հնարավորությունը: Այնուամենայնիվ, կան մի շարք ընկերություններ, որտեղ բաժնետերերը չեն ցանկանում ակտիվորեն ներգրավված լինել ընկերության կառավարման և առօրյա վերահսկման աշխատանքներում՝ նախընտրելով հարցերի հնարավորինս լայն շրջանակ պատվիրակել տնօրենների խորհրդին կամ, նույնիսկ, տնօրենին: Կան նաև ներդրողներ, որոնք ցանկանում են առավել շատ ներգրավված լինել ընկերության կառավարմանը վերաբերող հարցերի լուծմանը:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ Հայաստանի Հանրապետությունում շատ ընկերություններ չունեն խորհուրդներ, ինչը լրացուցիչ բարդություններ է առաջացնում ժողովի համար, հատկապես, երբ այդ ընկերություններն ունեն ուժեղ և վստահելի տնօրեններ:

Հայաստանի Հանրապետությունում կորպորատիվ իրավունքի խիստ կարգավորումները և կառավարման հարցերում ձկունության գործիքների բացակայությունը գործարար շրջանակներում հաճախ մտահոգությունների առիթ են հանդիսանում:

Արդյունքում ակնկալվում է Հայաստանում կորպորատիվ ոլորտը դարձնել առավել մատչելի և գրավիչ թե՛ տեղական, թե՛ օտարերկրյա ներդրողների համար՝ միաժամանակ ապահովելով բաժնետերերի իրավունքների պաշտպանության գործուն մեխանիզմներ:

Ճկունության պայմաններում հնարավոր է ստեղծել տարբեր նպատակներ հետապնդող ընկերություններ՝

- Ընկերություններ, որտեղ բաժնետերերը սերտորեն ներգրավված են ընկերության կառավարման և վերահսկման գործընթացներում, և
- Ընկերություններ, որտեղ բաժնետերերը նախընտրում են չներքաշվել առօրյա գործընթացների և ձևական բնույթ կրող այլ գործընթացների մեջ՝ մասնակցելով միայն ընկերության ռազմավարական նշանակության հարցերի կայացմանը և շահույթ ստանալով:

Տնտեսապես զարգացած մի շարք երկրներում ընդունված մոտեցում է, որ բաժնետերերը պետք է հնարավորություն ունենան ընկերությանը տալ այն կառուցվածքն ու իրականացնել գործառնություններ իրավասությունների այն բաշխումը, որը նրանք առավել նպատակահարմար են գտնում: Իսկ նման իրավասությունն իրացնելու միջոցը ձկուն կանոնադրություն մշակելու հնարավորությունն է: Այս մասին է վկայում նաև ԵՄԿԱ-ի վերլուծությունը, որի հիմքում ևս այն տրամաբանությունն է, որ ժողովի ներգրավվածությունը անհրաժեշտ է այնպիսի որոշումներով, որոնք կարող են որոշիչ դեր ունենալ

ընկերության հետագա զարգացման համար կամ որոնք ուղղակի առնչվում են նրանց շահերին, սահմանափակում նրանց իրավունքները կամ ստեղծում նոր պարտավորություններ⁴⁰:

Վետևաբար, իրավասությունների բաշխման ձևուն համակարգի ներդրումը հնարավորություն է տալիս ներդնել և կիրառել կորպորատիվ կառավարման սկզբունքներ, սահմանել կառավարման տարբեր մարմինների միջև պատասխանատվության և պարտավորությունների բաշխումը և իրականացնել առավել արդյունավետ կառավարում, ինչն իր հերթինխթանում է ներդրումները և երկիրը դարձնում առավել գրավիչ՝ կորպորատիվ կառավարման և կորպորատիվ իրավունքի համատեքստում:

1.5. Աշխատողների բաժնետիրացման ձևուն համակարգ.

Վերջին տարիներին տարբեր երկրներում լայն տարածում է ստացել աշխատակիցների բաժնետիրացման պլանների և ծրագրերի կիրառումը (Restricted stock units): Սակայն Հայաստանի Հանրապետությունում աշխատակիցների բաժնետիրացումը ներկայիս կարգավորումների համաձայն հնարավոր է շատ խիստ կարգավորումների կիրառմամբ և միայն հետգնված բաժնետոմսերի հաշվին:

Հավատարմության և երկարամյա աշխատանքի դիմաց աշխատողներին ընկերության բաժնետոմսերով պարգևատրելու ինստիտուտը բավականին տարածված գործիք է, որը հնարավորություն է տալիս խրախուսել աշխատակիցներին և կանխել աշխատուժի արտահոսքը, ինչն էլ, իր հերթին, կարող է անուղղակիորեն կանխել մասնագիտական արտագաղթը Հայաստանի Հանրապետությունից: Աշխատողների համար բաժնետիրացման համապատասխան պլաններ և ծրագրեր մշակելու հնարավորությունը նաև բանիմաց, հավատարիմ և որակյալ մասնագետներ ներգրավելու միջոց է:

1.6. Գրանցման պահին կանոնադրական կապիտալի վճարված լինելու իրավական ֆիկցիա.

Օրենքի ներկայիս կարգավորումները պահանջում են, որ պետական գրանցման պահին ընկերության կանոնադրական կապիտալը լինի վճարված: Միաժամանակ, ընկերությունը կարող է ունենալ դրամարկղ՝ կանխիկ մուտքերի համար, կամ բանկային հաշվեհամար՝ անկանխիկ մուտքերի համար, միայն դրա պետական գրանցումից հետո: Արդյունքում, նման կարգավորումը հանդիսանում է իրավական ֆիկցիա և գործնականում կիրառելի չէ: Ավելին, գործնականում տեղի է ունենում հակառակը. ընկերության կանոնադրական կապիտալը փաստացի համալրվում է ընկերության պատշաճ կարգով պետական գրանցման ենթարկվելուց հետո կամ, երբեմն, մինչև ընկերության գրանցումը բանկերում բացվում է տարանցիկ կամ հատուկ հաշիվ, որի միջոցներով կվճարվի կանոնադրական կապիտալը:

Այս տեսանկյունից հետաքրքրական են նաև ռուսական կարգավորումները: Այսպես, Ռուսաստանի Ղաշնության՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ «Ընկերության հիմնադրման ժամանակ վերջինիս բաժնետոմսերի դիմաց վճարումն իրականացվում է հիմնադիրների կողմից այդ բաժնետոմսերի անվանական արժեքից ոչ ցածր արժեքով»: Իր հերթին, 34-րդ հոդվածով սահմանվում է, որ «Ընկերության հիմնադրման ժամանակ տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց վճարումը պետք է ամբողջությամբ իրականացվի ընկերության պետական գրանցման օրվանից մեկ տարվա ընթացքում, եթե ընկերության հիմնադրման մասին պայմանագրով ավելի կարճ ժամկետ նախատեսված չէ»: Ընդ որում, օրենքով սահմանվում է նաև, որ հիմնադրման ժամանակ տեղաբաշխված բաժնետոմսերի առնվազն 50%-ը պետք է վճարվի պետական գրանցման

⁴⁰Առավել մանրամասն տես ԵՄԿԱ, էջեր՝ 258-259

պահից երեք ամսվա ընթացքում, իսկ սահմանված ժամկետում վճարումը չկատարելու դեպքում չվճարված բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվում է ընկերությանը: Հատկանշական է, որ, ըստ բուսական օրենսդրության, Ընկերության ստեղծման մասին պայմանագիրը կարող է նախատեսել բաժնետոմսերի վճարման պարտավորությունը սահմանված ժամկետում չկատարելու համար տույժեր:

1.7. Բացասական կապիտալով ընկերությունների կարգավորման հարցը

Ներկայումս Օրենքը նախատեսում է, որ եթե ընկերության երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարում նրա զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից, ապա ընկերությունը պարտավոր է նվազեցնել իր կանոնադրական կապիտալը: Սակայն, հաշվի առնելով գործունեության մի շարք տեսակների առանձնահատկությունները, այդպիսի գործունեության սկզբնական հատվածում բիզնես գործընթացները ստիպում են ընկերությանը գործել բացասական կապիտալով. օրինակ՝ հետազոտությամբ կամ երկարաժամկետ ծրագրերի ներդրմամբ զբաղվող ընկերությունները: Նման դեպքերում ակնկալվում է, որ ընկերությունը կսկսի շահույթ ձևավորել իր գործունեությունը սկսելուց որոշակի ժամանակ անց միայն: Ուստի, նման դեպքերում, երբ ընկերության մոտ առկա չեն անվճարունակության հիմքեր, իսկ բացասական կապիտալի առկայությունը պայմանավորված է գործունեության առանձնահատկություններով, ըստ էության, նպատակահարմար չէ ընկերությանը պարտադրել նվազեցնել իր կանոնադրական կապիտալը կամ լուծարվել:

Մի շարք եվրոպական երկրներ, ինչպես նաև ԵՄԿԱ-ն, նման դեպքերում նախատեսում են պարտավորություն՝ արտահերթ ժողով հրավիրելու, որն էլ իրավասու կլինի որոշել ընկերության հետագա քայլերը. օրինակ՝ Իտալիան կամ Դանիան նախատեսում են պարտադիր ժողովի հրավիրում, եթե ընկերությունը սպառել է իր կապիտալի համապատասխանաբար 50 կամ 30 տոկոսը⁴¹:

Նշված կանոնն (*recapitalize or liquidate*) ի սկզբանե ամրագրվել է ԵՄ կորպորատիվ իրավունքը կարգավորող «Երկրորդ դիրեկտիվում»: Կանոնը սահմանափակում էր ընկերությունում՝ օրենքով սահմանված կանոնադրական կապիտալի նվազագույն շեմը գերազանցող չափով կորուստների ձևավորումը՝ հետևապես արդիական լինելով այն դեպքում, երբ օրենքով սահմանված է ընկերությունների կանոնադրական կապիտալի նվազագույն չափ:

ԵՄ մի շարք երկրների ներքին օրենսդրություններում *recapitalize or liquidate* կանոնն ամրագրվել է առավել խիստ կերպով՝ բաժնետերերի արտահերթ ժողով հրավիրելու, կապիտալի համալրման/կանոնադրական կապիտալի նվազեցման կամ լուծարման պահանջներ սահմանելով նաև այն դեպքերի համար, երբ ընկերության զուտ ակտիվների արժեքը պակասում է կանոնադրական կապիտալի չափից:

Ընկերության կանոնադրական կապիտալի արժեքի որոշակի չափով կորուստներ կրելու դեպքերը տարբեր կերպ են կարգավորվում եվրոպական երկրների օրենսդրությամբ, սակայն ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ առկա է երկու այլընտրանք՝ պարզապես բաժնետերերի արտահերթ ժողովի հրավիրում կամ կանոնադրական կապիտալի չափի նվազեցում/լուծարում: Առավել խիստ՝ կանոնադրական կապիտալի չափի նվազեցման կամ լուծարման պահանջ սահմանված է Իտալիայում, Ֆրանսիայում, Իսպանիայում և Շվեդիայում:

Մասնավորապես, Իտալիայի Քաղաքացիական օրենսգրքի 2446 և 2482***bis*** հոդվածների համաձայն՝ եթե կորուստների արդյունքում ընկերության կանոնադրական կապիտալը կրճատվում է

⁴¹Տե՛ս ավելին ԵՄԿԱ, էջ 199

ավելի քան 1/3-ով, ապա տնօրենների խորհուրդը պարտավոր է անհապաղ գումարել բաժնետերերի ժողով համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար: Եթե դրան հաջորդող ֆինանսական տարվա ընթացքում կորուստները չեն նվազում ընկերության կանոնադրական կապիտալի 1/3-ից, ապա ընկերությունը պարտավոր է նվազեցնել կանոնադրական կապիտալը կրած վնասների համամասնորեն: Հակառակ դեպքում տնօրենների խորհուրդը պարտավոր է դիմել դատարան՝ կապիտալի նվազեցման մասին որոշում կայացնելու պահանջով:

Ֆրանսիայի Կոմերցիոն օրենսգրքի L225-248 հոդվածի համաձայն՝ կանոնադրական կապիտալի 50%-ից ավելիի չափով կորուստներ կրելու դեպքում ընկերության խորհուրդը կամ գործադիր մարմինը պարտավոր է ֆինանսական հաշվետվությունները հաստատելու օրվանից չորս ամսվա ընթացքում հրավիրել բաժնետերերի արտահերթ ժողով՝ կրած կորուստները բացահայտելու և որոշելու, թե արդյո՞ք անհրաժեշտ է կայացնել լուծարման մասին որոշում: Այն դեպքում, երբ լուծարման մասին որոշում չի կայացվում, ընկերությունը պետք է ոչ ուշ, քան մինչև կորուստների գրանցմանը հաջորդող երկրորդ ֆինանսական տարվա ավարտը նվազեցնի իր կանոնադրական կապիտալը կրած կորուստներին համամասնորեն, բացառությամբ, եթե ընկերության զուտ ակտիվների արժեքը մինչ այդ հավասարվում է կանոնադրական կապիտալի առնվազն 50%-ին: Եթե նշված դեպքերում բաժնետերերի արտահերթ ժողով չի հրավիրվում կամ ընկերության կանոնադրական կապիտալի չափը չի նվազեցվում, ցանկացած շահագրգիռ անձ իրավունք է ստանում դատական կարգով պահանջել ընկերության լուծարումը:

Մանրամասն կարգավորումներ են նախատեսված Շվեդիայի «Ընկերությունների մասին» օրենքի 25(13) -25(20) հոդվածներում: Այստեղ ևս զուտ ակտիվների՝ կանոնադրական կապիտալի 50%-ից պակաս լինելու դեպքը ենթադրում է, որ ընկերության խորհուրդը պետք է հրավիրի բաժնետերերի արտահերթ ժողով, որտեղ կքննարկվի ընկերության լուծարման հարցը: Այն դեպքում, երբ այսպես կոչված «առաջին ժողովը» չի կայացնում լուծարման մասին որոշում, ապա խորհուրդը պարտավոր է հաջորդող 8 ամսվա ընթացքում հրավիրել երկրորդ ժողով: Ընկերությունը ենթակա է դատական կարգով լուծարման, եթե նշված ժամկետում բաժնետերերի երկրորդ ժողովի չի գումարվում կամ ժողովը գումարվում է և չի կայացվում լուծարման մասին որոշում, այն դեպքում, երբ ընկերության զուտ ակտիվների արժեքը չի վերականգնվել մինչև սահմանված շեմը:

1.8. Սկսնակ ընկերությունների (start-up) կողմից չափահովված պարտատոմսերի թողարկման հնարավորությունը

Օրենքի 40-րդ հոդվածի համաձայն՝ առանց ապահովման պարտատոմսերի թողարկումը թույլատրվում է Ընկերության պետական գրանցումից առնվազն երեք տարի հետո և պայմանով, որ սահմանված կարգով հաստատված լինեն Ընկերության առնվազն երկու տարեկան հաշվեկշիռները: Այս սահմանափակման արդյունքում մի շարք նոր ստեղծված ընկերություններ զրկվում են պարտատոմսերի միջոցով ֆինանսավորում ներգրավելու հնարավորությունից, քանի որ ակնհայտ է, որ նման ընկերությունները չունեն բավականաչափ ակտիվներ պարտատոմսերի ապահովում տրամադրելու համար: Սակայն նման հնարավորության նախատեսումը, իր հերթին, նույնպես կնպաստի տարբեր ֆինանսական գործիքների միջոցով ներդրումների կատարմանը, օրինակ, սփյուռքի ներկայացուցիչների (diaspora bond) կողմից պարտատոմսերի միջոցով ներդրումներ կատարելուն:

1.9. Կոտորակային բաժնետոմսերը պահելու հնարավորությունը

Օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բաժնետոմսն անբաժանելի է: Այլ կերպ Օրենքի գործող խմբագրությամբ թույլատրվում է տիրապետել, օգտագործել և տնօրինել միայն ամբողջական

բաժնետոմսեր: Միևնույն ժամանակ, Օրենքով նախատեսված դեպքերում, մասնավորապես՝ բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի) դեպքում, նախատեսված է, որ առաջանում են կոտորակային բաժնետոմսեր: Ուստի, նման դեպքերում Օրենքով նախատեսվել է բաժնետոմսերի պարտադիր հետզման պահանջ, որը, սակայն, գործնականում հանգեցնում է տարատեսակ չարաշահումների և բաժնետերերի իրավունքների խախտումների, երբ կոնսոլիդացիան իրականում օգտագործվում է բաժնետերերից ընկերությունից դուրս մղելու նպատակներով:

Իր հերթին, նկատենք, որ կոտորակային բաժնետոմսերը պահելու և դրանք շրջանառության մեջ դնելու հնարավորությունը թե՛ տեսականորեն, թե՛ գործնականում բացառված երևույթ չէ, և մի շարք երկրներում, այդ թվում՝ զարգացած կորպորատիվ մշակույթ ունեցող, թույլատրվում է տիրապետել, օգտագործել և տնօրինել կոտորակային բաժնետոմսեր: Նման մոտեցումը պայմանավորված է այնհանգամանքով, որ կոտորակային բաժնետոմսերը պահելու և դրանք տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու հնարավորությունը նաև օպտիմալացնում է կորպորատիվ գործընթացները՝ նվազեցնելով նյութական, ժամանակի և այլ ծասերը⁴²: Ուստի, կոտորակային բաժնետոմսերի շրջանառունակությունը ինքնանպատակ չէ և ուղղված է ինչպես կիրառվող չարաշահումների բացառմանը, այնպես էլ պրակտիկ խնդիրների լուծմանը:

Այսպես, կոտորակային բաժնետոմսերի շրջանառունակությունը իր տարբեր դրևորումներով հայտնի է զարգացած կորպորատիվ հարաբերություններ ունեցող տարբեր երկրներում⁴³. այն թույլատրվում է Ռուսաստանում⁴⁴, Էստոնիայում⁴⁵, Մոլդովայում չի սահմանվում կոնսոլիդացիայի արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետզման պահանջը⁴⁶: Այս ինստիտուտը բավականին տարածված և զարգացած է նաև ԱՄՆ-ում. օրինակ՝ այստեղ գործում են մի շարք հարթակներ, որտեղ թույլատրվում է կոտորակային բաժնետոմսերի շրջանառությունը (Robinhood, Stockpile, M1 Finance և այլն):

2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

Վերոնշյալ հիմնավորումները հաշվի առնելով և պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում գործարար միջավայրի բարելավման, կորպորատիվ հարաբերությունների իրավակարգավորումները ժամանակի պահանջներին համահունչ դարձնելու պահանջով՝ սույն նախագծով առաջարկվում է՝

1) հնարավորություն ընձեռել ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 95 և ավելի տոկոսին տիրապետող բաժնետիրոջը ձեռք բերել ընկերության մյուս բաժնետերերին պատկանող ձայնի իրավունք տվող մնացած բաժնետոմսերը՝ համապատասխան պահանջի մեջ նշված գնով: Միաժամանակ, հնարավորություն է տրվում փոքր բաժնետերերին, ովքեր տիրապետում են ընկերության ձայնի իրավունք տվող մինչև 5 տոկոս բաժնետոմսերին, պահանջել խոշոր՝ 95 և ավել տոկոս ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատիրոջը, գնել իրենց բաժնետոմսերը և դուրս գալ ընկերությունից.

2) կատարել համակարգային փոփոխություններ, որոնք առնչվում են բաժնետոմսերի հասարակ (սովորական) և արտոնյալ տեսակների դասեր նախատեսելու հնարավորությանը և դրանից բխող

⁴² А.Глушецкий, Институт дробных акций – востребованная новация корпоративной практики, էջ 1

⁴³ Տե՛ս նույն տեղում, էջ 9

⁴⁴ Закон об акционерных обществах, статья 25, пункт 3

⁴⁵ Estonia – Commercial Code, Passed 15.02.1995, Article 152

⁴⁶ Moldova – Law on Joint-Stock Companies, Article 81

իրավունքներին: Մասնավորապես, առաջարկվող փոփոխություններն միտված են ընկերություններին ու դրանց բաժնետերերին հնարավորություն ընձեռել ցանկության դեպքում իրենց կանոնադրությամբ սահմանել նաև հասարակ բաժնետոմսերի դասեր՝ համապատասխան տարբերակված իրավունքներով՝ ներառյալ այդպիսի բաժնետոմսերը տիրապետողներին մեկից ավելի ծայն տրամադրելու իրավունքը:

3) խոշոր գործարք կնքելու մասին որոշման կայացման իրավագործությունը (ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 և ավելի տոկոսը կազմող գույքի ձեռքբերում կամ օտարում) վերապահել միայն ժողովին, իսկ ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված այլ գործարքների վերաբերյալ (ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի մինչև 50 տոկոսը կազմող գույքի ձեռքբերում կամ օտարում) նախատեսել առանձին գլուխ, որով այդպիսի գործարքներ կնքելու իրավասությունը բացի ընկերության տնօրենների խորհրդից հնարավոր կլինի պատվիրակել նաև ընկերության գործադիր մարմնին՝ կանոնադրությամբ սահմանված դեպքերում: Արդյունքում, այն ընկերությունները, որոնք ցանկանում են առավել լայն լիազորություններ պատվիրակել իրենց գործադիր մարմնին, կունենան այդպիսի հնարավորություն՝ ընկերության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում:

4) որոշակի լիազորությունների և որոշումների կայացման իրավունքի պատվիրակման հնարավորություն ինչպես խորհրդին, այնպես էլ գործադիր մարմնին՝ այդպիսով նախատեսելով իրավասությունների պատվիրակման լիբերալ և ձկուն հմակարգ: Առաջարկվում է մասամբ հրաժարվել «բացառիկ իրավասության» գաղափարից՝ հնարավորություն տալով ընկերություններին իրենց կանոնադրություններով նախատեսված դեպքերում և չափով՝ հաշվի առնելով նաև սահմանվող բացառությունները, տարբեր լիազորություններ պատվիրակել ժողովից խորհրդին, իսկ խորհրդից՝ գործադիր մարմնին: Ընդ որում՝ բաժնետերերի իրավունքներին ու շահերին առնչվող որոշումների կայացումը, ինչպես նաև այնպիսի հարցերի լուծումը, որոնք ստեղծում են նոր պարտավորություններ բաժնետերերի համար կամ սահմանափակում են նրանց հնարավորությունները միևնույն է մնում են միայն ժողովի ենթակայության հարցեր՝ այդպիսով պաշտպանելով բաժնետերերի իրավունքները: օրինակ՝ կանոնադրական կապիտալի նվազեցումը կամ ավելացումը, կանոնադրության այնպիսի փոփոխությունները, որոնք վերաբերում են բաժնետերերի իրավունքներին և պարտականություններին, բաժնետոմսերի համախմբումը, ընկերության վերակազմակերպումը կամ լուծարումը: Միաժամանակ, մնացած բոլոր այն իրավասությունները, որոնք ուղղակիորեն չեն ազդում բաժնետերերի իրավունքների և շահերի վրա առաջարկվում է կանոնադրությամբ նախատեսված դեպքերում պատվիրակել խորհրդին կամ գործադիր մարմնին:

5) ներդնել աշխատողների բաժնետիրացման առավել ձկուն մեխանիզմներ՝ որոշումների կայացման հիմնական իրավասությունը վերապահելով կանոնադրությանը կամ ժողովին: Ընդ որում, աշխատակիցների բաժնետիրացումը առաջարկվում է դիտարկել որպես Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված խրախուսանքի միջոց:

6) վերանայել Օրենքը՝ վերացնելով Ընկերության գրանցման ժամանակ դրա կանոնադրական կապիտալի վճարված լինելու իրավական ֆիկցիան և սահմանելով կանոնադրական կապիտալի համալրման ժամկետ՝ միաժամանակ նախատեսելով սահմանված ժամկետում կանոնադրական կապիտալը չվճարելու դեպքում վրա հասնող հետևանքները:

7) բացասական կապիտալի առկայության դեպքում անհապաղ հրավիրել արտահերթ ընդհանուր ժողով, հասկանալ դրա պատճառները, և դրանից հետո միայն կայացնել որոշում՝ կանոնադրական կապիտալը նվազեցնելու, լուծարվելու կամ գործունեությունը շարունակելու վերաբերյալ:

Միաժամանակ, բարեխիղճ պարտատերերի շահերը ապահովելու համար առաջարկվում է սահմանել ընկերության պարտավորությունը՝ իր պարտատերերին հրապարակային ծանուցել բացասական կապիտալով գործունեությունը շարունակելու մասին ժողովի կայացրած որոշման մասին:

8) վերացնել առանց ապահովման պարտատոմսերի թողարկման եռամյա ժամկետի պայմանը:

9) Օրենքով նախատեսված դեպքերում կոտորակային բաժնետոմսեր առաջանալու դեպքում թույլատրել բաժնետերերին պահպանել այդ բաժնետոմսերը՝ ապահովելով դրանք տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու հնարավորությունը: Ընդ որում, կոտորակային բաժնետոմսերի սեփականատերերին տրվում են նույն իրավունքները, ինչ ամբողջական բաժնետոմսերի սեփականատերերին՝ իրենց կոտորակային բաժնետոմսի կոտորակին (մասին) համամասնորեն:

10) ներդնել կորպորատիվ հարաբերությունների ժամանակակից կարգավորմանն ուղղված այլ լուծումներ:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք և նրանց դիրքորոշումը.

Նախագիծը մշակվել է «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի կողմից՝ «Adwise Consulting» բիզնես և իրավաբանական խորհրդատվական ընկերության և «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» փակ բաժնետիրական ընկերության (ANIF) հետ համատեղ:

4. Ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է կորպորատիվ իրավունքին վերաբերող կարգավորումները համապատասխանեցնել ժամանակի զարգացումներին: Ակնկալվում է հնարավորություն ստեղծել թե՛ տեղական, թե՛ օտարերկրյա ներդրողների համար առավել արդյունավետ իրականացնելու ընկերությունների ֆինանսավորումը և՛ պարտքի, և՛ բաժնեմասնակցության միջոցով, ստեղծել փոքր բաժնետերերի շահերի պաշտպանության լրացուցիչ գործիքներ՝ միաժամանակ պահպանելով հավասարակշռությունը փոքր և խոշոր բաժնետերերի շահերի միջև, նախատեսել ընկերության կառավարման գործընթացում ձկունության կիրառման հնարավորություններ, անհատականացված մոտեցումներ յուրաքանչյուր տեսակի և կատեգորիայի ներդրողների և բաժնետերերի համար: Իր հերթին, անհատականացված մոտեցում ցուցաբերելու հնարավորությունը կարող է դառնալ Հայաստանի Հանրապետության ներդրումային դաշտի այցեքարտերից մեկը:

5. Նախագծի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը, ինչպես նաև լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտությունը և պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվելիք փոփոխությունները

Նախագծի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտեր ընդունել անհրաժեշտ չէ, ինչպես նաև պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՍԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՓՈՓՈՒՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-930-12.04.2021-SՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	««Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում (այսուհետ՝ Օրենք) փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ (այսուհետ՝ Նախագիծ 1)	Օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասում «պետական կառավարման» բառերից հետո լրացնել «համակարգի» բառը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում լրացնել նոր կետ՝ փոփոխելով նաև Օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասը՝ ամբողջ տեքստում «պետական կառավարման» բառերից հետո լրացնելով «համակարգի» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 2-րդ հոդվածի 2-րդ կետ	Նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ կետում կատարել տեխնիկական բնույթի շտկումներ՝ փոփոխությունը շարադրելով տարբեր ենթակետերի տեսքով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 8-րդ հոդված	Նախագծի 8-րդ հոդվածով նախատեսվող Օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ մասում «առաջանալու» բառից հետո լրացնել «օրենքով նախատեսված» բառերը՝ նախատեսվող կարգավորումը հստակեցնելու նպատակով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
5.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 9-րդ հոդված	Նախագծի 9-րդ հոդվածում լրացնել նոր կետ՝ Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերության ամբողջ տեքստում «տեսակների» բառերից հետո լրացնելով «իսկ առկայության դեպքում՝ նաև դասի» բառերը: Առաջարկը պայմանավորված է կատարվող փոփոխությունների համալիրությունն	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ապահովելու նպատակով:		
6.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 11-րդ հոդված	Նախագծի 11-րդ հոդվածում լրացնել նոր կետ՝ Օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասում «կամ խորհուրդը» բառերը փոխարինելով «, խորհուրդը կամ գործադիր մարմինը» բառերով, իսկ «նրան» բառը կփոխարինվի «նրանց» բառով: Առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ Օրենքով գործադիր մարմինը ունի համապատասխան իրավասությունը, սակայն խնդրո առարկա հոդվածում գործադիր մարմնի վերաբերյալ նշում առկա չէ:	Ընդունվել է:	Ընդունվել է:
7.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 12-րդ հոդվածի 1-ին կետ	Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետից հանել «իսկ» բառը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
8.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 17-րդ հոդված	Նախագծի 17-րդ հոդվածով նախատեսվող Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությունում «և» բառը փոխարինել «կամ» բառով: Նշված փոփոխությունը ուղղած է Նախագծի համապատասխան հոդվածով նախատեսված կարգավորումների ավելի հստակ մեկնաբանմանը, ինչը կապահովի Նախագծով հետապնդվող նպատակների պատշաճ իրացումը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
9.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 17-րդ հոդված	Նախագծի 17-րդ հոդվածով նախատեսվող Օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասում «կամ» բառը փոխարինել «և» բառով՝ սույն ամփոփաթեթի 8-րդ կետում նշված նպատակով պայմանավորված:	Ընդունվել է:	Ընդունվել է:
10.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 17-րդ հոդված	Նախագծի 17-րդ հոդվածով նախատեսվող Օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասում «կապիտալի» բառից հետո լրացնել «, իսկ այդ բաժնետոմսերով տրամադրվող ձայների քանակը՝ Ընկերության քվեարկող բաժնետոմսերով տրամադրվող ձայների» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
11.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 17-րդ հոդված	Նախագծի 17-րդ հոդվածով նախատեսվող Օրենքի 41-րդ հոդվածի 6-րդ մասում «ծառայությունների մատուցման» բառերից առաջ լրացնել «Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց հետ» բառերը՝ սույն	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ամփոփաթերթի 8-րդ կետում նշված նպատակով պայմանավորված:		
12.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 17-րդ հոդված	Նախագծի 17-րդ հոդվածով նախատեսվող Օրենքի 41-րդ հոդվածի 11-րդ մասի առաջին նախադասությունում «բաժնետիրացման հետ կապված» բառերից հետո լրացնել «(այդ թվում՝ Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների մասին)» բառերը՝ սույն ամփոփաթերթի 8-րդ կետում նշված նպատակով պայմանավորված:	Ընդունվել է:	Ընդունվել է:
13.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 18-րդ հոդված	Նախագծի 18-րդ հոդվածով նախատեսվող Օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերության վերջին նախադասությունում «Ընկերության հիմնադիրները պարտավոր են մեկամսյա ժամկետում որոշում կայացնել Ընկերության լուծարման մասին» բառերը փոխարինել «Ընկերությունը պարտավոր է մեկամսյա ժամկետում ընդունել որոշում լուծարման մասին» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
14.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 22-րդ հոդված	Նախագծի 22-րդ հոդվածում «աշխատակիցների բաժնետիրացման ծրագրով հատկացվող» բառերը առաջարկում ենք փոխարինել «սույն օրենքի 41-րդ հոդվածով սահմանված կարգով աշխատակիցներին տրամադրվող» բառերով, ինչը միտված է նախատեսվող կարգավորումների անխոչընդոտ կիրարկման ապահովմանը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
15.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 23-րդ հոդված	Նախագծի 23-րդ հոդվածում լրացնել նոր կետ՝ Օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետում «տեսակի» բառից հետո լրացնելով «(առկայության դեպքում՝ նաև դասի)» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
16.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 23-րդ հոդված	Նախագծի 23-րդ հոդվածի «դ.1» կետում «դասի» բառից հետո լրացնել «(առկայության դեպքում)» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
17.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 23-րդ հոդված	Նախագծի 23-րդ հոդվածի «թ» կետում «և» բառը փոխարինել «կամ» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
18.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 25-րդ հոդված	Նախագծի 25-րդ հոդվածը շարադրել առանց կետերի:	Ընդունվել է:	Ընդունվել է:

19.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 27-րդ հոդված	<p>Նախագծի 26-րդ հոդվածով նախատեսվող Օրենքի 56.1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ 56.1-ին և 56.2-րդ հոդվածների ձևով:</p> <p>Հոդված 56.1. Ընկերության բաժնետոմսերի պարտադիր վաճառքի պահանջը</p> <p>1. Ընկերության քվեարկող բաժնետոմսերի և միաժամանակ դրանցով տրամադրվող ձայների առնվազն 95 տոկոսին ուղղակիորեն միանձնյա տիրապետող բաժնետիրոջ (այսուհետ սույն հոդվածում՝ պահանջ ներկայացնող բաժնետեր) պահանջով (Ընկերության բաժնետոմսերի պարտադիր վաճառքի պահանջ) հրավիրվում է արտահերթ ժողով, որը որոշում է ընդունում Ընկերության մյուս բաժնետերերին պատկանող քվեարկող բաժնետոմսերը (բացառությամբ Հայաստանի Հանրապետությանը կամ համայնքներին պատկանող բաժնետոմսերի) հետզնելու և պահանջ ներկայացնող բաժնետիրոջը տրամադրելու վերաբերյալ:</p> <p>2. Ընկերության բաժնետոմսերի պարտադիր վաճառքի պահանջը պետք է առնվազն պարունակի հետևյալ տեղեկությունները.</p> <p>1) հիմնավորում պահանջ ներկայացնող բաժնետիրոջ՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պայմաններին</p>	Ընդունվել է:	Ընդունվել է:
-----	----------------	--------------------------	--	--------------	--------------

			<p>համապատասխանության վերաբերյալ.</p> <p>2) պահանջ ներկայացնող բաժնետիրոջ անունը (անվանումը), հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն, ծանուցման հասցեն, եթե այն տարբերվում է հաշվառման (գտնվելու) վայրի հասցեից, պահանջ ներկայացնող ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի տվյալները.</p> <p>3) բաժնետոմսերը պահանջ ներկայացնող բաժնետիրոջը տրամադրելու դիմաց առաջարկվող գինը, որը չի կարող պակաս լինել անկախ գնահատողի կողմից սահմանված բաժնետոմսերի շուկայական արժեքից.</p> <p>4) պահանջ ներկայացնող բաժնետիրոջ կողմից ընտրված (նշանակված) անկախ գնահատողի անունը, հաստատության անվանումը, որում վերջինս աշխատում է (առկայության դեպքում).</p> <p>5) բաժնետոմսերը պահանջ ներկայացնող բաժնետիրոջը տրամադրելու դիմաց առաջարկվող գումարը հատուկ բանկային հաշվին դեպոնացնելու մասին տեղեկություններ: Որպես դեպոնացված գումարի հասցեատեր պետք է նշվեն այն բաժնետերերը, ում բաժնետոմսերը ենթակա են հետգնման:</p> <p>3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված տեղեկությունները ժողովի</p>		
--	--	--	---	--	--

			<p>մասին ծանուցմամբ ներկայացվում են բաժնետերերին:</p> <p>4. Բաժնետերերը, ում բաժնետոմսերի կապակցությամբ կայացվել է բաժնետոմսերը հետգնելու և պահանջ ներկայացնող բաժնետիրոջը տրամադրելու վերաբերյալ որոշում, իրավունք ունեն ժողովի որոշումը կայացվելուց հետո երկու ամսվա ընթացքում դիմել դատարան՝ վիճարկելով բաժնետոմսերի տրամադրման դիմաց առաջարկվող գինը:</p> <p>5. Սույն հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված գումարը դեպոնացված լինելու դեպքում բաժնետոմսերը հետգնելու և պահանջ ներկայացնող բաժնետիրոջը տրամադրելու վերաբերյալ ժողովի որոշումը հիմք է այդ բաժնետոմսերի վերաբերյալ Ընկերության բաժնետերերի ռեեստրում գրառումներ կատարելու համար՝ անկախ ժողովի որոշումը վիճարկելու հանգամանքից:</p> <p>6. Բաժնետոմսերը հետգնելու և պահանջ ներկայացնող բաժնետիրոջը տրամադրելու վերաբերյալ ժողովի որոշումը կայացվելու պահից բաժնետերերը իրավունք ունեն ստանալու պահանջ ներկայացնող բաժնետիրոջ կողմից դեպոնացված գումարը:</p>		
--	--	--	---	--	--

			<p>Հողված 56.2. Ընկերության բաժնետոմսերի պարտադիր գնման պահանջը</p> <p>1. Ընկերության քվեարկող բաժնետոմսերի և միաժամանակ դրանցով տրամադրվող ձայների ոչ ավելի քան 5 տոկոսին տիրապետող բաժնետիրոջ (այսուհետ սույն հոդվածում՝ պահանջ ներկայացնող բաժնետեր) պահանջով (Ընկերության բաժնետոմսերի պարտադիր գնման պահանջ) հրավիրվում է արտահերթ ժողով, որը որոշում է ընդունում պահանջ ներկայացնող բաժնետիրոջ բաժնետոմսերը հետգնելու վերաբերյալ:</p> <p>2. Ընկերության բաժնետոմսերի պարտադիր գնման պահանջը պետք է առնվազն պարունակի հետևյալ տեղեկությունները.</p> <p>1) հիմնավորում պահանջ ներկայացնող բաժնետիրոջ՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պայմաններին համապատասխանության վերաբերյալ.</p> <p>2) պահանջ ներկայացնող բաժնետիրոջ անունը (անվանումը), հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն, ծանուցման հասցեն, եթե այն տարբերվում է հաշվառման (գտնվելու) վայրի հասցեից, պահանջ ներկայացնող ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի</p>		
--	--	--	---	--	--

			<p>տվյալները.</p> <p>3) բաժնետոմսերը պահանջ ներկայացնող բաժնետիրոջից հետզհետեւ համար առաջարկվող գինը, որը չի կարող ավել լինել անկախ գնահատողի կողմից սահմանված բաժնետոմսերի շուկայական արժեքից.</p> <p>4) պահանջ ներկայացնող բաժնետիրոջ կողմից ընտրված (նշանակված) անկախ գնահատողի անունը, հաստատության անվանումը, որում վերջինս աշխատում է (առկայության դեպքում):</p> <p>3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված տեղեկությունները ժողովի մասին ծանուցմամբ ներկայացվում են բաժնետերերին:</p> <p>4. Ընկերության բաժնետոմսերի պարտադիր գնման պահանջը ստացած Ընկերությունը իրավունք ունի պահանջը ստանալուց հետո երկու ամսվա ընթացքում դիմել դատարան՝ վիճարկելով բաժնետոմսերի հետգնման դիմաց առաջարկվող գինը, ընդ որում, գնի վիճարկումը չի կասեցնում Ընկերության բաժնետոմսերի հետգնման գործընթացը:</p> <p>5. Ընկերությունը պարտավոր է հետզհետեւ պահանջ ներկայացնող բաժնետիրոջ բաժնետոմսերը Ընկերության բաժնետոմսերի պարտադիր գնման պահանջը ստանալուց հետո երկու ամսվա</p>		
--	--	--	---	--	--

			<p>ընթացքում:</p> <p>6. Սույն հոդվածով սահմանված հիմքերով հետզնված բաժնետոմսերն ուղղվում են Ընկերության տնօրինությանը: Նշված բաժնետոմսերը չեն տալիս ձայնի իրավունք, հաշվի չեն առնվում ձայների հաշվարկման ժամանակ, և դրանցով շահութաբաժիններ չեն հաշվարկվում: Դրանք ենթակա են տեղաբաշխման սույն օրենքի 56.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված բաժնետիրոջը մեկ տարվա ընթացքում: Եթե սույն օրենքի 56.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված բաժնետերը հրաժարվում է կամ սույն հոդվածով սահմանված ժամկետում ձեռք չի բերում հետզնված բաժնետոմսերը, ժողովը պարտավոր է որոշում ընդունել նշված բաժնետոմսերի մարման միջոցով կանոնադրական կապիտալի չափի նվազեցման մասին:»:</p> <p>Առաջարկվող փոփոխությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նախապես առաջարկված կարգավորման պարագայում, հատկապես, երբ նախատեսվում է տարբեր դասեր թողարկելու հնարավորությունը, կարող է իրավիճակ ստեղծվել, երբ 95 տոկոս քվեարկող ձայներին տիրապետող բաժնետերը կպահանջեր ձեռք բերել այն անձի բաժնետոմսերը, որը, տիրապետում է Ընկերության կանոնադրական կապիտալի 5 տոկոսից ավելին, ինչը կհանգեցնի այդ բաժնետիրոջ տնտեսական շահերի ոտնահարմանը: Փոփոխությունները միտված են նաև պահանջ ստացող բաժնետերերի իրավունքների պաշտպանությանը, նախատեսված կարգավորումների հստակ կիրառման ապահովմանը և կիրառման պրակտիկությունը: Նշվածով պայմանավորված անհրաժեշտ է խմբագրել նաև Նախագծի հիմնավորումների համապատասխան բաժինը:</p>		
--	--	--	--	--	--

20.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 27-րդ հոդված	Սույն ամփոփաթերթի 18-րդ կետով առաջարկվող 56.2-րդ հոդվածի 1-ին մասում «վերաբերյալ» բառից հետո լրացնել «, եթե Ընկերությունում առկա է սույն օրենքի 56.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված բաժնետեր» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
21.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 32-րդ հոդված	Նախագծով նախատեսվող օրենքի VIII.1 գլխի վերնագիրը շարադրել մեծատառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
22.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 33-րդ հոդված	Նախագծի 33-րդ հոդվածով նախատեսվող Օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի կետերի հերթականությունը վերաշարադրել: Նշված փոփոխության արդյունքում ակնկալվում է առավել հստակեցնել ժողովի իրավասությունների շրջանակը և դրանց խորհրդին վերապահելու սահմանները:	Ընդունվել է:	Ընդունվել է:
23.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 33-րդ հոդված	Նախագծի 33-րդ հոդվածով նախատեսվող Օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետից խորհրդի նախագահի և անդամների աշխատանքի վարձատրության չափը և պայմանները սահմանելու իրավասությունը սահմանել նույն մասի 24-րդ կետում՝ սույն ամփոփաթերթի 20-րդ կետում նշված նպատակներով պայմանավորված:	Ընդունվել է:	Ընդունվել է:
24.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 33-րդ հոդված	Նախագծի 33-րդ հոդվածով նախատեսվող Օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետում «կետի» բառը փոխարինել «մասի» բառով՝ սույն ամփոփաթերթի 20-րդ կետում նշված նպատակներով պայմանավորված:	Ընդունվել է:	Ընդունվել է:
25.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 33-րդ հոդված	Նախագծի 33-րդ հոդվածով նախատեսվող Օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի երկրորդ նախադասությունում «ընտրության հարցերը» բառերից հետո լրացնել «ժողովին վերապահված լինելու դեպքում» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
26.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 33-րդ հոդված	Նախագծի 33-րդ հոդվածով նախատեսվող Օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ և 26-րդ կետերը շարադրել մեկ կետի ներքո՝ սույն ամփոփաթերթի 20-րդ կետում նշված նպատակներով պայմանավորված:	Ընդունվել է:	Ընդունվել է:

27.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 33-րդ հոդված	Նախագծի 33-րդ հոդվածով նախատեսվող Օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասում առաջարկում ենք կատարել փոփոխություն 1-ին մասի 24-րդ կետով սահմանված իրավասությունը վերապահելով խորհրդին, բացառությամբ խորհրդի նախագահի կամ անդամի վարձատրության պայմանների որոշման իրավասության սույն ամփոփաթեթի 20-րդ կետում նշված նպատակներով պայմանավորված: Միաժամանակ, անհրաժեշտ է խմբագրել սույն մասում կատարված հղումները՝ պայմանավորված 1-ին մասի փոփոխություններով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
28.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 34-րդ հոդված	Նախագծի 34-րդ հոդվածով նախատեսվող Օրենքի 68-րդ հոդվածում կատարել փոփոխություններ, որոնք պայմանավորված են 67-րդ հոդվածում առաջարկվող փոփոխություններով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
29.	Կառավարություն	Նախագիծ 1	Առաջարկում ենք փոփոխություն կատարել նաև Օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասում՝ «մասնակցել է Ընկերության քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին» բառերը փոխարինելով «մասնակցել են Ընկերության քվեարկող բաժնետոմսերով տրամադրվող ձայների քանակի կեսից ավելին տիրապետող բաժնետերերը» բառերով: Փոփոխությունը միտված է ապահովելու հասարակ (սովորական) բաժնետոմսերի դասերի պատշաճ շրջանառությունը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
30.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 36-րդ հոդված	Նախագծի 36-րդ հոդվածով նախատեսվող Օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսվող փոփոխության մեջ «տիրապետում է (են)» բառերից հետո լրացնել «Ընկերության» բառը, իսկ «բաժնետոմսերով» բառը փոխարինել «բաժնետոմսերի կամ դրանցով տրամադրվող ձայների» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
31.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 36-րդ հոդված	Նախագծի 36-րդ հոդվածով նախատեսվող Օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր 2-4-րդ մասեր՝ հետևյալ բովանդակությամբ. «2) 2-րդ մասում «բաժնետոմսերի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			<p>քանակը» բառերը փոխարինել «բաժնետոմսերով տրամադրվող ձայների քանակը» բառերով.</p> <p>3) 3-րդ մասի ամբողջ տեքստում «բաժնետոմսերի» բառերը փոխարինել «բաժնետոմսերով տրամադրվող ձայների» բառերը.</p> <p>4) 4-րդ մասի «բ» կետում «տնօրինում Ընկերության» բառերը փոխարինել «տիրապետում Ընկերության» բառերով, իսկ «քանակի քվեարկող բաժնետոմսերին» բառից հետո լրացնել «ձայների քանակին» բառերը:»:</p> <p>Արդյունքում, կապահովի հասարակ (սովորական) բաժնետոմսերի դասերի պատշաճ շրջանառությունը:</p>		
32.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 37-րդ հոդված	<p>Նախագծի 37-րդ հոդվածում ««Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր»» բառերից առաջ լրացնել «ամբողջ տեքստում» բառերը, ինչպես նաև լրացնել նոր 2-3-րդ կետեր՝ հետևյալ բովանդակությամբ.</p> <p>«2) 3-րդ մասում «նրան (նրանց) պատկանող բաժնետոմսերի» բառը փոխարինել «նրան (նրանց) պատկանող բաժնետոմսերով տրամադրվող ձայների» բառերով.</p> <p>3) 4-րդ մասի երկրորդ պարբերության «բ» կետում «տնօրինում» բառը փոխարինել «տիրապետում» բառով, իսկ «քանակի քվեարկող բաժնետոմսերը» բառերը փոխարինել «քվեարկող բաժնետոմսերով տրամադրվող ձայների քանակին» բառերով:»:</p> <p>Առաջարկվող փոփոխությունը միտված է ապահովելու հասարակ (սովորական) բաժնետոմսերի դասերի պատշաճ շրջանառությունը:</p>	Ընդունվել է:	Ընդունվել է:
33.	Կառավարություն	Նախագիծ 1	<p>Փոփոխություն կատարել նաև Օրենքի 75-րդ հոդվածի 2-րդ մասում՝ «(գլխավոր տնօրենը)» բառերից հետո լրացնելով «, գործադիր մարմնի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձը՝ իր</p>	Ընդունվել է:	Ընդունվել է:

			լիազորությունների իրականացման ժամանակահատվածում» բառերը, ինչը նպատակ է հետապնդում բացառել շահերի բախման հնարավոր դեպքերը:		
34.	Կառավարություն	Նախագիծ 1	Փոփոխություններ կատարել նաև Օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասի առաջին պարբերությունում և 3-րդ մասում՝ «բաժնետոմսերի» բառը փոխարինելով «բաժնետոմսերով տրամադրվող ձայների» բառերով, ինչը միտված է ապահովելու հասարակ (սովորական) բաժնետոմսերի դասերի պատշաճ շրջանառությունը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
35.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 39-րդ հոդվածի 1-ին կետ	Նախագծի 39-րդ հոդվածի 1-ին կետում լրացնել նոր «ա» ենթակետ Օրենքի 83-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունից հանելով «բացառիկ» բառը, ինչը բխում է Նախագծով հետապնդվող նպատակներից:	Ընդունվել է:	Ընդունվել է:
36.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 39-րդ հոդված	Նախագծի 39-րդ հոդվածում լրացնել նոր մաս՝ Օրենքի 83-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետում «բաժնետոմսերի» բառից հետո լրացնելով «և դրանցով տրամադրվող ձայների» բառերը՝ ապահովելու համար հասարակ (սովորական) բաժնետոմսերի դասերի պատշաճ շրջանառությունը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
37.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 39-րդ հոդված	Նախագծի 39-րդ հոդվածով Օրենքի 83-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի փոփոխությունում «11-13» բառերը փոխարինել «2-4» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
38.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 40-րդ հոդված	Նախագծի 40-րդ հոդվածով նախատեսվող Օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի կետերի հերթականությունը վերաշարադրել:	Ընդունվել է:	Ընդունվել է:
39.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 40-րդ հոդված	Նախագծի 40-րդ հոդվածով նախատեսվող Օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետում «զլխում» բառը փոխարինել «զլխով» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
40.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 40-րդ հոդված	Նախագծի 40-րդ հոդվածով նախատեսվող Օրենքի 84-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ սույն հոդվածի 1-ին մասի 21-րդ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			<p>և 23-25-րդ կետերով սահմանված իրավասությունները կարող են վերապահվել Ընկերության գործադիր մարմնին՝ անկախ Ընկերությունում խորհուրդ ստեղծված լինելու հանգամանքից, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 1-6-րդ, 9-րդ և 15-20-րդ կետերով սահմանված իրավասությունները կարող են վերապահվել Ընկերության գործադիր մարմնին, եթե Ընկերությունում խորհուրդ չի ստեղծվել:»:</p> <p>Նշված փոփոխությունների արդյունքում ակնկալվում է առավել հստակեցնել խորհրդի իրավասությունների շրջանակը և նախատեսել ինչպես այն դեպքերը, երբ որոշ իրավասություններ վերապահվում են գործադիր մարմնին՝ ընկերությունում խորհուրդ ստեղծված չլինելու դեպքում, այնպես էլ՝ անկախ խորհուրդ ստեղծված լինելու հանգամանքից:</p>		
41.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 41-րդ հոդված	<p>Նախագծի 41-րդ հոդվածում լրացնել նոր կետ՝ Օրենքի 85-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունում «բաժնետոմսերի» բառից հետո լրացնելով «կամ դրանցով տրամադրվող ձայների» բառերը: Արդյունքում ակնկալվում է ապահովել հասարակ (սովորական) բաժնետոմսերի դասերի պատշաճ շրջանառությունը, ինչպես նաև ապահովել կանոնադրական կապիտալում համապատասխան չափով մասնակցություն ունեցող բաժնետիրոջ կողմից նույն հոդվածով նախատեսված իրավասությունների իրականացումը՝ ապահովելով վերջինիս շահերը:</p>	Ընդունվել է:	Ընդունվել է:
42.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 41-րդ հոդված	<p>Նախագծի 41-րդ հոդվածում լրացնել նոր կետ՝ Օրենքի 85-րդ հոդվածի 5-րդ մասի չորրորդ պարբերությունում «ընկերության 10-ից ավելի տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող» բառերը փոխարինելով «Ընկերության քվեարկող բաժնետոմսերի կամ դրանցով տրամադրվող ձայների քանակի 10-ից ավելի տոկոսին տիրապետող» բառերով՝ սույն</p>	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ամփոփաթերթի 39-րդ կետում նշված նպատակներով պայմանավորված:		
43.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 43-րդ հոդված	Նախագծի 43-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետում «5-րդ» բառը փոխարինել «հինգերորդ» բառով, իսկ «նախադասություն» բառը փոխարինել «երրորդ և չորրորդ նախադասություններ» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
44.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 44-րդ հոդված	Նախագծի 44-րդ հոդվածով առաջարկվող փոփոխությունում «բաժնետոմսերով» բառը փոխարինել «բաժնետոմսերի կամ դրանցով» բառերով՝ ապահովելով հասարակ (սովորական) բաժնետոմսերի դասերի պատշաճ շրջանառությունը, ինչպես նաև ապահովելով կանոնադրական կապիտալում համապատասխան չափով մասնակցություն ունեցող բաժնետիրոջ կողմից նույն հոդվածով նախատեսված իրավասությունների իրականացումը՝ ապահովելով վերջինիս շահերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
45.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 44-րդ հոդված	Նախագծի 44-րդ հոդվածով առաջարկվող փոփոխությունում լրացնել նոր մաս՝ նոր խմբագրությամբ շարադրելով նաև 91-րդ հոդվածի 1-ին մասը. «1. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար բաց Ընկերությունում ընտրվում է, իսկ փակ Ընկերությունում կարող է ընտրվել Ընկերության վերստուգող հանձնաժողով (վերստուգող)»: Արդյունքում, ակնկալվում է վերացնել գործնականում առկա, վերստուգողի նշանակման հետ կապված խնդիրները, երբ որոշ դեպքերում համապատասխան հանձնաժողովը կամ անձը ընդհուպ չի ընտրվում կամ ընտրվում է միայն ձևական:	Ընդունվել է:	Ընդունվել է:
46.	Կառավարություն	Նախագիծ 1-ի 45-րդ հոդված	Նախագծի 45-րդ հոդվածով առաջարկվող փոփոխությունում «բաժնետոմսերով»	Ընդունվել է:	Ընդունվել է:

			բառը փոխարինել «բաժնետոմսերի կամ դրանցով» բառերով՝ ապահովելով հասարակ (սովորական) բաժնետոմսերի դասերի պատշաճ շրջանառությունը, ինչպես նաև ապահովելով կանոնադրական կապիտալում համապատասխան չափով մասնակցություն ունեցող բաժնետիրոջ կողմից սույն հոդվածով նախատեսված իրավասությունների իրականացումը՝ ապահովելով վերջինիս շահերը:		
47.	Կառավարություն	Նախագիծ 1	Փոփոխություն կատարել նաև 93-րդ հոդվածի 2-րդ մասում՝ երկրորդ նախադասությունում «պարտադիր է» բառերից հետո լրացնելով «Ընկերությունում վերստուգող հանձնաժողով (վերստուգող) ընտրված լինելու դեպքում»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
48.	Կառավարություն	Նախագիծ 1	Փոփոխություն կատարել նաև Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունում՝ «պետական կառավարման» բառերից հետո լրացնելով «համակարգի» բառը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
49.	Կառավարություն	Նախագիծ 1	Փոփոխություն կատարել նաև Օրենքի 95-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետում՝ «պետական կառավարման» բառերից հետո լրացնելով «համակարգի» բառը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
50.	Կառավարություն	Նախագիծ 1	Նախագծի եզրափակիչ և անցումային դրույթներում լրացնել նոր 3-7-րդ կետեր. «3. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-2-րդ կետերով, 3-րդ հոդվածով և 19-րդ հոդվածի 1-2-րդ կետերով նախատեսվող կարգավորումները կիրառվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ստեղծվող ընկերությունների նկատմամբ: 4. Սույն օրենքով նախատեսված աշխատակիցների բաժնետիրացման վերաբերյալ կարգավորումները չեն տարածվում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը նախաձեռնված աշխատակիցների բաժնետիրացման գործընթացի նկատմամբ: 5. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ընկերության բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի) մասին	Ընդունվել է:	Ընդունվել է:

			որոշում ընդունելու դեպքում ընկերության բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի) գործընթացի և արդյունքների, այդ թվում՝ համախմբման (կոնսոլիդացիայի) արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի նկատմամբ կիրառվում են մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը գործող նորմերը: 6. Հետզնման ենթակա բաժնետոմսերը երրորդ անձանց իրավունքներով ծանրաբեռնված լինելու դեպքում Ընկերության բաժնետերերի ռեստր վարողի՝ սույն օրենքի 30-րդ հոդվածով սահմանված ծանուցման պարտականությունը կիրառվում է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ընդունված՝ ընկերության բաժնետոմսերի հետզնման համապատասխան որոշումների դեպքում:»:		
51.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածից հանել «(այսուհետ՝ Օրենսգիրք)» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
52.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ (այսուհետ՝ Նախագիծ 2)	Նախագիծ 2-ի վերնագրում «ԼՐԱՑՈՒՄ» բառը փոխարինել «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
53.	Կառավարություն	Նախագիծ 2-ի 1-ին հոդվածի 2-րդ կետ	Նախագիծ 2-ի 1-ին հոդվածի 2-րդ կետում «5-րդ մասում» բառերը փոխարինել «5-րդ մասի երկրորդ նախադասությունում» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
54.	Կառավարություն	Նախագիծ 2-ի 1-ին հոդվածի 2-րդ կետ	Նախագիծ 2-ի 1-ին հոդվածի 2-րդ կետում լրացնել նոր ենթակետ՝ Քաղաքացիական օրենսգրքի 111-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ նախադասությունում «օրենքով»	Ընդունվել է:	Ընդունվել է:

			բառից հետո լրացնելով «կամ այլ իրավական ակտերով» բառերը:		
55.	Կառավարություն	Նախագիծ 2	Քաղաքացիական օրենսգրքի 112-րդ հոդվածում նույնպես կատարել փոփոխություն՝ 1-ին մասը շարադրելով հետևյալ խմբագրությամբ՝ «1. Բաժնետիրական ընկերությունն իրավունք ունի բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով ավելացնել կանոնադրական կապիտալը: Կանոնադրական կապիտալի ավելացման մասին որոշումն ընդունում է բաժնետերերի ընդհանուր ժողովը, տնօրենների խորհուրդը կամ ընկերության գործադիր մարմինը, եթե ընկերության կանոնադրությամբ կամ բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ նրանց տրված է այդ իրավասությունը:»: Արդյունքում Քաղաքացիական օրենսգրքի սույն դրույթը կհամապատասխանի Օրենքով գործող համապատասխան դրույթին:	Ընդունվել է:	Ընդունվել է:
56.	Կառավարություն	Նախագիծ 2-ի 2-րդ հոդվածի 3-րդ կետ	Նախագիծ 2-ի 2-րդ հոդվածի 3-րդ կետում «պարբերությունից» բառը փոխարինել «պարբերության ամբողջ տեքստից» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
57.	Կառավարություն	Նախագիծ 2-ի 2-րդ հոդված	Նախագիծ 2-ի 2-րդ հոդվածում լրացնել նոր 4-րդ կետ՝ Քաղաքացիական օրենսգրքի 115-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ պարբերությունում «որոնց հանրագումար բաժինը կանոնադրական կապիտալում կազմում է տասը և ավելի տոկոս» բառերը փոխարինելով «որոնք տիրապետում են ընկերության քվեարկող բաժնետոմսերի կամ դրանցով տրամադրվող ձայների քանակի առնվազն տասը տոկոսին» բառերով: Արդյունքում Քաղաքացիական օրենսգրքի սույն դրույթը կհամապատասխանի Նախագծով նախատեսվող Օրենքի համապատասխան դրույթին:	Ընդունվել է:	Ընդունվել է:
58.	Կառավարություն	Նախագիծ 2-ի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածում «Օրենքի» բառը փոխարինել «Օրենսգրքի» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:

59.	Կառավարություն	«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին նախագծի 3-րդ հոդվածի 1-ին կետ	«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին նախագծի 3-րդ հոդվածի 1-ին կետում «անձը» բառը փոխարինել «անձ» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
-----	----------------	---	---	--------------	--------------